Տ Ա Ր Ե Կ Ա Ն Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

2011 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2012

Որպես նախաբան

Մարդու իրավունքների երրորդ պաշտպան Կարեն Անդրեասյանը հանրությանն է ներկայացնում իր առաջին տարեկան զեկույցը, որն ամփոփում է 2011 թվականին մարդու իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանում: Այն իր ձևաչափով, բովանդակային շեշտադրումներով, տարածման եղանակով և այլ փոփոխություններով տարբերվում է նախորդ տարիների զեկույցներից:

Պաշտպանի 2011 թվականի տարեկան զեկույցում մարդու իրավունքներին առնչվող խնդիրները դասակարգված են ըստ 25 պետական մարմինների գործունեության ոլորտների: Զեկույցի 25 բաժինները արտացոլում են յուրաքանչյուր մարմնի իրավասությունների տիրույթում արձանագրված բացթողումներն ու թերացումները, որոնց հետևանքով ոտնահարվել են մարդկանց իրավունքները: Զեկույցում արտացոլված են նաև յուրաքանչյուր մարմնի գործունեության արդյունքում արձանագրված դրական զարգացումները, որոնք նպաստել են իրավունքների պաշտպանությանն ու իրացմանը: Զեկույցի 26-րդ բաժինը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեությանը, ձեռքբերումներին և թերացումներին:

Պաշտպանի տարեկան զեկույցը իրավա-քաղաքական փաստաթուղթ է, որն արտացոլում է բացառապես 2011 թվականի ընթացքում տեղ գտած իրողությունները: Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Պաշտպանի գնահատականների ու ամփոփումների համար հիմք ծառայած առանձին բողոքների կամ կոնկրետ աղբյուրների վկայակոչումները զեկույցում հիմնականում ներկայացված չեն: Նման աղբյուրների, անհատական տվյալների ու դեպքերի մեջբերումների ու հղումների բացակայությունը պայմանավորված է, նախևառաջ, այն հանգամանքով, որ շատ դեպքերում Պաշտպանին ու իր աշխատակազմին դիմած կամ տեղեկություններ հայտնած մարդիկ չեն ցանկացել բացահայտել իրենց տվյալները՝ վախենալով հետագա հնարավոր անախորժություններից ու հետապնդումներից: Բացի այդ, Պաշտպանն իր զեկույցում ցանկացել է վեր հանել համակարգային խնդիրները և զեկույցը անհարկի չծանրաբեռնել մասնավոր դեպքերով ու մանրամասնություններով, ինչն էլ ըստ օրենքի և միջազգային չափանիշների բնորոշ է նմանատիպ զեկույցներին, քանի որ դրանք չունեն ապացուցման պարտականություն և խորհրդատվական բնույթի են:

Տարեկան զեկույցը չի կարող լինել բացարձակ ներառական, կատարյալ ճիշտ և միանշանակ ընդունելի բոլորի համար, այնուամենայնիվ, հուսով ենք, որ հատկապես պետական այն մարմինները, որոնց գործունեությանը անդրադարձել է զեկույցը, կընդունեն դրանում առկա քննադատությունը և առաջարկությունները, որպես իրենց գործունեությանը նպաստող և օժանդակող տեղեկություններ և 2012 թվականին կգրանցեն առավել շատ դրական զարգացումներ ու հաջողություններ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Միևնույն ժամանակ բոլոր շահագրգիռ անձանցից ակնկալում ենք Պաշտպանի 2011 թվականի տարեկան զեկույցի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ, որոնք կնպաստեն Պաշտպանի հաջորդ զեկույցների կատարելագործմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 5

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 12

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....20

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....28

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ.....34

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 37

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 43

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 47

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 50

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 55

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 57

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ...58

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 67

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.....70

15. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 73

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 79

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....84

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 90

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ.....97

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 101

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.... 103

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

22. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ 108

23. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 113

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 117

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 120

26. ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 124

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության ու սոցիալական աջակցության, քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության, կենսաթոշակի իրավունքի իրականացումն ապահովելու, բնակչության զբաղվածության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության բնագավառների պետական քաղաքականության, սոցիալական ապահովության նպատակային ծրագրերի մշակման և իրականացման համար:

2011 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Դեռևս կարգավորված չէ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստացող այն անձանց խնդիրները, որոնց պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:
- Թեև զգալիորեն բարելավվել են ՀՀ աշխատանքի պետական տեսչության ստուգումների արդյունավետությունը բնութագրող քանակական և որակական ցուցանիշները, այնուամենայնիվ, քաղաքացիները շարունակել են դժգոհել գործատուների կողմից առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի վերցնելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, վերջնահաշվարկ չկատարելու, արձակուրդի համար չվճարելու բազմաթիվ դեպքերից:
- Օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել է միայն Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի կողմից վավերացված լիազորագրով կենսաթոշակի վճարման կարգը, ինչը հանգեցնում է ՀՀ-ից ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնած քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակմանը: Նշված օրենսդրական փոփոխությունների ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը պարզելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան:
- Թեև 2010թ. հունիսի 24-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում օրենսգրքի որոշ դրույթներ համապատասխանեցվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին, իսկ որոշ փոփոխություններ էլ ուղղված են եղել գործարար միջավայրի բարելավմանը, այդուհանդերձ,

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

չլուծված են մնացել մի շարք օրենսդրական բացեր, որոնք հանգեցնում են աշխատողների իրավունքների խախտումների:

- Թեև 2009թ. հանրապետության մարզերի 937 համայնքներում իրականացվել են վերապատրաստումներ համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար, այդուհանդերձ, մտահոգիչ է այդ հանձնաժողովների գործունեության արդյունավետության խնդիրը, և նախարարության կողմից ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել խնդրին համալիր լուծում տալու համար:
- Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել ռիսկային խմբի երեխաների խնդիրների կանխարգելման ուղղությամբ: Առանձին դեպքերում հանդիպում են նաև որևէ ծրագրում չընդգրկված թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներ:
- Նախարարության կողմից բավարար չափով չեն բարձրաձայնվել արհեստակցական միությունների կայացման խնդիրները, և չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ այդ խնդիրներին համակարգային լուծում տալու ուղղությամբ:
- Իրականացվող սոցիալական քաղաքականության և սոցիալական վճարների հաշվարկման հիմքում չի դրվել նվազագույն սպառողական զամբյուղի իրական արժեքը:

Արձանագրված դրական զարգացումները

- Բարձրացել է բնակչության խոցելի խավերին ուղղված պետական ծրագրերի հասցեականությունը:
- Ընտանեկան նպաստի համակարգում տվյալների ստուգման արդյունքում 17 հազար ոչ անապահով ընտանիքներ կորցրել են ընտանեկան նպաստի իրավունքը, փոխարենը՝ շուրջ 9 հազար ընտանիք ճանաչվել է կարիքավոր և ընդգրկվել համակարգում:
- Կենսաթոշակային համակարգում ճշգրտվել է 65 հազար անհատական գործ, վերականգվել են գրեթե 5 հազար կենսաթոշակառուի թերվճարված գումարներ, դադարեցվել է 17-18 հազար «ոչ առկա» անձանց կենսաթոշակների վճարումը:
- 2011թ. ընթացքում ավելացվել են բոլոր տեսակի պետական նպաստների և կենսաթոշակների չափերը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները վճարման համար պատասխանատու կազմակերպության լուծարման դեպքում մինչ օրս մնում են չկարգավորված: Նման դեպքերում վնասի հատուցում կատարելու պարտականություն կրող կազմակերպություն կամ հատուցման համակարգ նախատեսված չէ: 2011թ. ընթացքում նախարարության կողմից ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգը: Այս հայեցակարգի ընդունումը չի կարող լուծել 2004թ. և դրանից հետո մինչ համապատասխան օրենքի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ընդունումը առողջությանը վնաս պատճառած և փոխհատուցում չստացած անձանց խնդիրները:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել է միայն Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի կողմից վավերացված լիազորագրով կենսաթոշակի վճարման կարգը: Վերոգրյալ պահանջի նախատեսումը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով երաշխավորված անձի սոցիալական ապահովության իրավունքի այնպիսի սահմանափակմանը, որը չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում, և հանգեցնում է միայն բնակության (գտնվելու) վայրով պայմանավորված տարբերակմանը միևնույն կարգավիճակ ունեցող անձանց (կենսաթոշակառուների) միջև: Ավելին, նախարարությունը հաստատել է, որ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և փաստաթղթերի ճանաչման այլ ընթացակարգ սահմանող միջազգային պայմանագրերի անդամ պետություններում սահմանված կարգով հաստատված լիազորագրերը ևս ՀՀ-ում հիմք չեն հանդիսանում կենսաթոշակի վճարման համար: Օրենքի նման մեկնաբանությունն ու կիրառումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների ուղղակի խախտմանը: Վիճահարույց խնդիրը պարզելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ որոշելու համար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության և 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 37, 14.1 և 43-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանված է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի սահմանման պահանջը և աշխատանքի պետական տեսչության՝ դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը, սակայն այս նորմատիվները մինչ օրս օրենսդրությամբ սահմանված չեն: Նախարարությունը 2011թ. մշակել և ՀՀ կառավարություն է ներկայացրել «Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնները և նորմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ վարչապետի հանձնարարականով հանվել է շրջանառությունից, իսկ հարցը հանձնարարվել է քննարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների շրջանակներում: ՀՀ կառավարության կողմից համապատասխան նորմերը չսահմանելու հետևանքով աշխատողների անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների սահմանադրական իրավունքը շարունակում է մնալ չապահովված:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածը սահմանում է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը: 2010թ. հունիսի 24-ին ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենսգրքից հանվել է գործատուի՝ կնքված աշխատանքային պայմանագրի օրինակն աշխատողին տալու պարտականություն նախատեսող և միայն կնքված պայմանագրի իր օրինակը ստանալուց հետո աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնելու վերաբերյալ դրույթը: Կնքված աշխատանքային պայմանագիրն աշխատողին հանձնելու գործատուի

պարտականության չնախատեսումը կարող է գործնականում հանգեցնել գործատուի կողմից արդեն իսկ կնքված պայմանագրում կամայական փոփոխությունների կատարմանը, աշխատողի խախտված իրավունքների վերականգնման անհնարինությանը և այլ չարաշահումների:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում օրենսգրքից հանվել է նաև գործատուի կողմից աշխատանքային պայմանագրերի գրանցամատյան վարելու և դրանում աշխատանքային պայմանագիրը գրանցելու պարտականություն նախատեսող դրույթը: Այսպիսի պարտականության բացակայությունը ևս հանդիսանում է խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման գործընթացում հնարավոր խոչընդոտների առաջացման նախապայման:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 182-րդ հոդվածով սահմանված է աշխատավարձի ինդեքսավորման պահանջը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Բայց, մինչ օրս, աշխատավարձի ինդեքսավորման կարգ չի սահմանվել: Պաշտպանի հարցմանն ի պատասխան, նախարարության կողմից հաստատվել է համապատասխան կարգի բացակայությունը և պատճառաբանվել, որ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնպահ է մնում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված աշխատավարձի ինդեքսավորման օրենսդրական պահանջի կիրառումից՝ հաշվի առնելով մակրոտնտեսական հնարավոր ռիսկերը: Մասնավորապես՝ ՀՀ տնտեսությունում գնաճի հաշվառմամբ աշխատավարձի ճշգրտումը, մասնագետների կարծիքով, անխուսափելիորեն կհանգեցնի ֆիսկալ անկայունության, քրոնիկ բարձր գնաճի:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկելու կարգ, եթե կենսաթոշակառուն ներկայացրել է տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք՝ օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ: Օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության 05.05.2011թ. թիվ 665-Ն որոշման համաձայն՝ օրենքով տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո կենսաթոշակը վերահաշվարկվում է օրացուցային տարում մեկ անգամ՝ կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) առնվազն 12 ամիս հետո, եթե կենսաթոշակառուն այդ ժամանակահատվածում աշխատել է առնվազն 6 ամիս: ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ կենսաթոշակի նշանակումից առնվազն 12 ամիս հետո կենսաթոշակի վերահաշվարկման կարգի նախատեսումը չի բխում օրենքի պահանջից և սահմանափակում է անձի կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքը օրենքով սահմանված ժամկետում:

ՀՀ-ում 2005-2006թթ. ներդրվել է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որը բաղկացած է Ազգային հանձնաժողովից (ազգային մակարդակ), մարզպետարաններում գործող Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարզային բաժիններից (մարզային մակարդակ) և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ Խնամակալության և հոգաբարձության մարմիններից (համայնքի ղեկավար), որոնց կից գործում են համապատասխան հանձնաժողովները:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները կամ նրանց կից հանձնաժողովները ՀՀ-ում միակն են, որոնք համայնքներում իրականացնում են անմիջական աշխատանք ընտանիքների, մասնավորապես՝ երեխայի իրավունքների ու շահերի առարկայական պաշտպանության ուղղությամբ: Սակայն ՀՀ կառավարության 24.02.2011 թվականի թիվ 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով, իսկ սոցիալական աշխատողի ներգրավումն այս հանձնաժողովի կազմում կրում է հայեցողական բնույթ: Միևնույն ժամանակ պետության կողմից այս մարմինների վրա դրված են չորս տասնյակից ավելի երեխայի բարեկեցության համար ծայրահեղ կարևոր նշանակություն ունեցող գործառույթներ և խնդիրներ, որոնց անգամ մակերեսային իրականացումը պահանջում է նեղ մասնագիտական կարողություններ և համապատասխան ռեսուրսներ: Դիտարկումները ցույց են տալիս, որ խնդրին համակարգային խնդիր տալու դեպքում հնարավոր է խնայել պետության կողմից ներկայումս ծախսվող ռեսուրսները՝ երեխաների գիշերային խնամքի հաստատություններ մուտքի կանխարգելման գործառույթի ապահովման տեսանկյունից:

Առկա են նաև որոշակի խնդիրներ մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների կամ պատանիների իրավունքների ապահովման ոլորտում, իրենց համար հարմարեցված միջավայրի գրեթե բացակայության տեսանկյունից:

ՀՀ կառավարության 18.12.2003թ. թիվ 1745-Ն որոշմամբ հաստատված ծրագրին համապատասխան՝ մինչև 2009թ. նախատեսվել էր ստեղծել թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի 3 կենտրոններ և մինչև 2015թ.երեխաների համայնքային ցերեկային 25 կենտրոններ: Պաշտպանի հարցմանն ի պատասխան, նախարարությունը նշել է, որ այս տարիների ընթացքում ձեռնարկված քայլերի արդյունքում թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հիմնախնդիրը կորցրել է իր հրատապությունը և նախարարությունն իր ջանքերն ուղղում է ռիսկային երեխաների խնդիրների կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Նախարարության կողմից փաստվել է հետևյալ պատկերը. 1. Թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների խնամքի համար 3 կենտրոնների մասով՝ 2011թ. «Զատիկ» մանկատան կանոնադրությունում ներառվել են մի շարք գործառույթներ, համաձայն որոնց կազմակերպությունը իրականացնում է նաև Երևան քաղաքում բնակվող մուրացիկ թափառաշրջիկ երեխաների ընդունելությունը և մատուցում նրանց համապատասխան ծառայություններ: 2. Երեխաների 25 ցերեկային կենտրոնների ստեղծման մասով ստեղծվել են 2-ը, ինչպես նաև գործում են «Հույսի կամուրջ» ՀԿ-ի հետ համատեղ համայնքային ծառայություն մատուցող երեխայի զարգացման 14 կենտրոն:

Նկատի ունենալով ընտանիքում ապրելու և զարգանալու երեխայի իրավունքը՝ պետությունը նախաձեռնել է մանկատների բեռնաթափման ծրագիր, սակայն դեռևս չկան հստակ և իրատեսական մեխանիզմներ՝ մանկատների բեռնաթափումից հետո այդ երեխաների հետագա կյանքի կազմակերպման և անհրաժեշտ պայմանների ապահովման համար:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) գործակալության դեմ ուղղված դիմում-բողոքների քննարկման արդյունքում հաշմանդամության խմբի վերանայման կամ հաշմանդամության սահմանման ելքով որևէ դեպք չի արձանագրվել: Որպես դրա հիմնական պատճառ թերևս կարելի է նշել այն հանգամանքը, որ ԲՍՓ գործակալության և

հանձնաժողովների գործունեությունը խիստ մասնագիտական է, միևնույն ժամանակ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված չափորոշիչները լայն հայեցողության տեղ են թողնում համապատասխան հանձնաժողովներին անձի կենսագործունեության սահմանափակումը գնահատելիս:

Աշխատանքային իրավունքների հնարավոր խախտման տեսանկյունից առավել ռիսկային կազմակերպություններից կարելի է առանձնացնել վճարովի փոխադրում իրականացնող կազմակերպությունները, որոնք օրենսդրության պահանջներից բխող քանակից ավելի քիչ վարորդների են ներգրավում աշխատանքի, որի հետևանքով չեն վճարում արտաժամյա աշխատանքի դիմաց, խախտում են նրանց վճարովի արձակուրդի իրավունքը: Վիճակագրությունը վկայում է, որ 2011թ. տրանսպորտի ոլորտում գործունեություն իրականացնող 104 գործատուների մոտ իրականացված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում արձանագրվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ՝ աշխատողների արտաժամյա աշխատանք, որի արդյունքում հաշվարկվել է չվճարված, վճարման ենթակա աշխատավարձ՝ 78 400 000 դրամ ընդհանուր գումարով:

2011թ. ընթացքում աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտին առնչվող խնդիրները վերաբերել են առանց աշխատանքային պայմանագիր կնքելու անձանց աշխատանքի վերցնելու, աշխատավարձ չվճարելու, աշխատանքից կամայական ազատելու, արձակուրդի համար չվճարելու, հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի, քաղաքային և մերձքաղաքային տրանսպորտային միջոցների հարմարեցված չլինելու, պետական, կրթական և մշակութային հաստատություններում, բազմաբնակարան շենքերում թեքահարթակների ու անհրաժեշտ այլ միջոցների ապահովման հարցերին, հաշմանդամության խմբի որոշման, բժշկասոցիալական փորձաքննության իրականացման, ՀՀ տարածքից դուրս վավերացված լիազորագրով կենսաթոշակ չվճարելու, նպաստի իրավունքը անհիմն դադարեցնելու, կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողների մասնակի կենսաթոշակի իրավունքի իրացման դեպքերին և այլն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել անհապաղ միջոցներ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները լուծելու ուղղությամբ՝ վճարման համար պատասխանատու կազմակերպության լուծարման դեպքում:
- Ուժեղացնել հսկողությունը գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ, այդ թվում համարժեք պատասխանատվության միջոցների կիրառման եղանակով անօրինական աշխատանքի հայտնաբերման, աշխատավարձի, արտաժամյա աշխատանքի չվճարման, աշխատանքից կամայական ազատման և այլ խախտումները կանխելու և բացառելու նպատակով:
- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշխատանքային և սոցիալական ապահովության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ առկա հակասությունները վերացնելու, կամայական

մեկնաբանությունների տեղիք տվող օրենսդրական բացերը լրացնելու, աշխատանքային և սոցիալական իրավունքների ապահովման անհրաժեշտ երաշխիքները սահմանելու, ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին դրա համապատասխանությունն ապահովելու նպատակով:

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների կողմից գնահատողական հայեցողության հնարավորինս կրճատման, հաշմանդամության որոշման չափորոշիչների առավելագույն հստակեցման, ԲՍՓՀ-ների գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ:
- Օրենսդրորեն լուծել աշխատավարձի ինդեքսավորման կարգի ընդունման խնդիրը:
- Ձեռնարկել միջոցներ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրով նախատեսված և չիրականացված կամ ոչ լիարժեք իրականացված միջոցառումները կատարելու ուղղությամբ:
- Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման համար:
- Շարունակել ձեռնարկված միջոցառումները արհեստակցական միությունների կայացմանն աջակցելու գործում:
- Նկատի ունենալով չարաշահումների և կոռուպցիայի ռիսկայնությունը՝ միջոցներ ձեռնարկել կենսաթոշակ, ընտանեկան նպաստ ստանալու, հաշմանդամության խումբ սահմանելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:
- 2011 թվականին ոլորտում արձանագրված չարաշահումների դեպքերը չկրկնվելու համար պարբերաբար իրականացնել մոնիթորինգ՝ կենսաթոշակների և նպաստների նշանակման, քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ առողջապահության նախարարության նպատակներն ու խնդիրներն են հանրության և ամեն մարդու առողջության պահպանումը, բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, աշխատողների առողջության պահպանումը, հանրապետությունում արտադրվող և ներմուծվող դեղերի անվտանգության, որակի և արդյունավետության ապահովումը և այլն:

2011 թվականին ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Կառավարության համապատասխան որոշման փոփոխության արդյունքում աճել է կեղծ դեղեր կամ դեղանյութեր ներմուծելու վտանգը, այդուհանդերձ նախարարությունը որևէ լրացուցիչ մեխանիզմներ չի նախատեսել այդ վտանգը նվազեցնելու, դեղերի շուկայում այդ ուղղությամբ վերահսկողությունն ուժեղացնելու ուղղությամբ: Ավելին՝ նախարարությունը որևէ վիճակագրության չի տիրապետում այդ ոլորտում հանցագործությունների բացահայտման և պատժման վերաբերյալ:
- Բուժհաստատություններին տրված է լիազորություն ազատել համավճարից կամ կիրառել համավճարի ավելի ցածր շեմ՝ ելնելով հիվանդի վճարունակության աստիճանից, ինչը որոշվում է այդ հաստատությունների կողմից՝ հիվանդի կամ նրա հարազատի դիմումի հիման վրա: Օրենսդրությամբ հստակ սահմանված չեն որոշակի չափորոշիչներ նման որոշումների համար, ինչի հետևանքով բժշկական հաստատությունների կողմից առանձին դեպքերում դրսևորվել են տարբերակված և սուբյեկտիվ մոտեցումներ: Նման մոտեցումների թույլատրելիությունը և առկայությունը առաջացնում է կոռուպցիոն ռիսկեր:
- Օրենսդրությամբ չի սահմանվել «բժշկական սխալ» հասկացությունը: Այդ պատճառով չի տարբերակվում անփութությունը բժշկական սխալից, որն էլ իր հերթին դժվարեցնում է գնահատական տալ կատարված դեպքին: Ներկայումս բժշկական սխալը առանց հստակ չափորոշիչների որոշում են տարբեր հանձնաժողովներ, ինչի արդյունքում բժիշկները անարդարացիորեն ենթարկվում են պատասխանատվության կամ անարդարացիորեն խուսափում դրանից:
- Չնայած 2011թ. հունվարի 1-ից ներդրվել է մինչև 7 տարեկան երեխաների անվճար հիվանդանոցային բուժօգնության հավաստագրի ծրագիրը և երեխայի առողջության անձնագիրը, սակայն, առանձին դեպքերում ծրագրի իրականացման սկզբնական փուլում ծնողներն ունենալով մինչև 7 տարեկան երեխաների անվճար բուժօգնության համար սահմանված սերտեֆիկատ՝ կատարել հավելյալ վճարումներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Նախարարությունը Պաշտպանին չի տրամադրել տեղեկատվություն, թե քանի գիշերային մշտադիտարկում է անցկացվել բուժհաստատություններում և մարդու իրավունքների խախտման քանի դեպք է բացահայտվել դրանց արդյունքում: Նման վիճակագրության բացակայությունը կամ դրա չտրամադրումը էականորեն նվազեցնում է նախարարության համապատասխան վերահսկողական գործառույթների արդյունավետության նկատմամբ հանրային վստահությունը:
- Պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության չտրամադրման և ոչ պատշաճ տրամադրման մասին վկայող Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրությունը փաստում է, որ մարդիկ՝ ընդգրկված լինելով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող առանձին (հատուկ) խմբերի ցանկում, հերթագրվել են նշված օգնությունը ստանալու համար համապատասխան հիմնարկում կամ ունեցել են առողջապահության նախարարության կողմից տրված ուղեգիր, սակայն բուժհաստատություններում մերժել են նրանց բուժումը կամ չեն ապահովել պատշաճ բուժօգնությամբ: Առանձին դեպքերում անձը բուժհաստատության փոփոխման արդյունքում զրկվել է պետպատվերով վիրահատվելու իրավունքից: Հաճախ պետական պատվերի շրջանակում բուժվող հիվանդների նկատմամբ դրսևորվել է անհարգալից վերաբերմունք:

Արձանագրված դրական զարգացումները

- Հունվարի 1-ից ներդրվել է մինչև 7 տարեկան երեխաների անվճար հիվանդանոցային բուժօգնության հավաստագրի ծրագիրը և երեխայի առողջության անձնագիրը:
- 2011 թվականի մայիսից անվճար է 14 տարեկանը բոլորած նախազինակոչային տարիքի երիտասարդների բուժզննումը և անհրաժեշտության դեպքում՝ բուժումը:
- Բարելավվել է շտապօգնության ծառայությունների որակը: 38 մարզային և մայրաքաղաքի բուժհիմնարկներ ստացել են շտապօգնության 88 ժամանակակից ավտոմեքենա, գործարկվել է կանչերի ընդունման GPS միասնական նոր համակարգը՝ միասնական դիսպետչերական կենտրոնի գործարկմամբ: Արդյունքում՝ կանչերին արձագանքելու արագությունն աճել է 2 անգամ: Բուժանձնակազմի աշխատավարձը բարձրացել է 1.5-ից 2 անգամ:
- Համավճարի ծրագրի ներդրման միջոցով առողջապահական համակարգում կրճատվել է ստվերայնությունը, պետական բյուջե է մուտքագրվել նախկինում ստվերային շրջանառության մեջ գտնվող 439.6 մլն դրամ: Բուժհաստատություններից պետական բյուջե վճարվող հարկերը աճել են 39 տոկոսով կամ շուրջ 735 մլն դրամով, 1.2-ից 2.3 անգամ բարձրացել է «համավճարի» ծրագրում ընդգրկված բուժաշխատողների աշխատավարձը:
- Ժամանակակից նոր տեխնիկայով ու սարքավորումներով հիմնովին վերակառուցվել և վերազինվել են Արմավիրի, Իջևանի, Հրազդանի, Արարատի և Գորիսի բուժկենտրոնները, կառուցվել են 20 նոր և նորոգվել 30 համայնքային ամբուլատորիաներ:

- Դադարեցվել է պոլիկլինիկաների կողմից օրենքով չնախատեսված զանազան տեղեկանքների տրամադրումը քաղաքացիներին:
- ՀՀ առողջապահության նախարարությունը 2011 թվականին առողջապահական հիմնարկների աշխատակիցների գործողությունների (անգործության) վերաբերյալ ստացել է 78 գրավոր բողոք, իսկ «թեժ գիծ» հեռախոսակապի միջոցով՝ 147 բողոք: Հայտնաբերված խախտումների վերացման նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Դրական է գնահատվում եղած բողոքներին տրված նախարարության արձագանքը և ձեռնարկված միջոցները:
- Դրական է գնահատվում Առողջապահության նախարարության էլեկտրոնային կայքէջի վարումը, դրանում զետեղված տեղեկատվության մատչելիությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետում կատարված փոփոխությամբ «Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող դեղերը» բառերը փոխարինվել են «Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող դեղերը, որոնց փաթեթավորման փոփոխությունները չեն ազդում արտադրանքի անվտանգության, արդյունավետության և որակի վրա, և երբ առկա է արտադրողի կողմից տրված որակի հավաստագրի բնօրինակը, կամ արտադրողի կողմից այլ երկրների ներմուծողին տրված հավաստագրի պատճենը՝ վավերացված արտահանող կազմակերպության կնիքով»: Առողջապահության նախարարը Պաշտպանին գրավոր հայտնել է, որ այդ փոփոխությունը պայմանավորված է հանրապետությունում դեղերի տնտեսական մատչելիությունը բարձրացնելու նպատակով: Դեղերի գների ազատականացման պայմաններում տնտեսվարող սուբյեկտները արտադրողների հետ համաձայնության արդյունքում ներկրման մոնոպոլ իրավունք ձեռք բերելով՝ կիրառում են բարձր վերադիրներ, և դեղերը իրացվում են սպառողներին զգալիորեն բարձր գներով: Կառավարության համապատասխան մոտեցումը դեղերի գների աճի զսպման նպատակ է հետապնդում: Իսկ Պաշտպանի այն մտահոգությանը, թե վերը նշված փոփոխությունն իր մեջ պարունակում է կեղծ դեղեր կամ դեղանյութեր ներմուծելու վտանգ, նախարարը հայտնել է, որ կառավարության նոր որոշման արդյունքում ի հայտ է գալիս որոշակի ռիսկ Հայաստանի Հանրապետություն կեղծ դեղերի ներթափանցման հնարավորության աճի տեսանկյունից, որի դեմ պայքարի համար էլ սահմանվել են անհամապատասխանության այն դեպքերը, երբ ներմուծումը ՀՀ ԱՆ կողմից մերժվում է կամ բոլոր ներկրվող դեղերը ենթարկվում են պարտադիր լաբորատոր փորձաքննության: Այսինքն, ՀՀ կառավարության 20.09.2000թ. թիվ 581 հաստատված կարգի 24-րդ կետի համաձայն դեղերի ներմուծում ՀՀ տարածք իրականացվում է դեղերի յուրաքանչյուր խմբաքանակի ոչ միայն փաստաթղթային, այլ նաև պարտադիր լաբորատոր փորձաքննության արդյունքների հիման վրա: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ օրինական ներմուծման ճանապարհով կեղծ դեղերի և դեղանյութերի թափանցման դեպքեր Հայաստանի Հանրապետություն ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում չեն արձանագրվել:

Անդրադառնալով 2011 թվականի ընթացքում դեղերի շուկայում կատարված ստուգումների, անորակ կամ կեղծ դեղեր հայտնաբերելու դեպքերի և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Պաշտպանի հարցադրումներին՝ նախարարը նշել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը դեղերի շրջանառության բնագավառում վերահսկողություն է իրականացնում չգրանցված կամ ժամկետանց դեղերի շրջանառության նկատմամբ, և վերջիններիս հայտնաբերման դեպքում կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ: Իսկ կեղծ դեղերի շրջանառության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է քրեական պատասխանատվություն և ՀՀ առողջապահության նախարարությունը տվյալ դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություններ չունի: Այսպիսով, Կառավարության համապատասխան որոշման փոփոխության արդյունքում աճել է կեղծ դեղեր կամ դեղանյութեր ներմուծելու վտանգը, այդուհանդերձ նախարարությունը որևէ լրացուցիչ մեխանիզմներ չի նախատեսել այդ վտանգը նվազեցնելու, վերահսկողությունը ուժեղացնելու ուղղությամբ: Ավելին նախարարությունը կեղծ դեղերի ներմուծման և տարածման համար քրեական հետապնդում իրականացնելու լիազորություններ չունենալով՝ որևէ եղանակով չի միջամտել կեղծ դեղերի տարածման կանխմանը, նույնիսկ չի վարել նման հանցագործությունների բացահայտման և պատժման վիճակագրություն:

ՀՀ առողջապահության նախարարությունը դեղատնային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից դեղագործական կանոնների խախտման հիմքով վարչական պատասխանատվություն սկսել է կիրառել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-7-Ն օրենքի ընդունումից հետո: 2011 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում 17 տնտեսվարող սուբյեկտների դեղատնային կրպակներում հայտնաբերվել են ՀՀ-ում չգրանցված և ժամկետանց դեղեր: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 47.3 հոդվածի հիման վրա հարուցված վարչական իրավախախտումների վարույթների արդյունքում նշանակվել են տուգանքներ:

Կարևորվում է առողջապահության նախարարության կողմից մշակված «Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին», «Առողջապահության մասին» և «Դեղերի և կենսաակտիվ հավելումների մասին» ՀՀ օրենքների նախագծերի, դրանցից բխող իրավական ակտերի ընդունումը, դեղերի ոլորտի օրենսդրական ամբողջ դաշտի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Նշված իրավական ակտերի ընդունմամբ կսահմանվեն առողջության ապահովման բնագավառում մարդու իրավունքները, կնվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը:

Նախարարությունը չի կարողացել պատասխանել Պաշտպանի այն հարցադրմանը, թե անբավարար վիճակում գտնվող քանի բժշկական հաստատություն կա Երևան քաղաքում և մարզերում, ինչպես նաև շենքային անբավարար վիճակում գտնվելը խոչընդոտ հանդիսանում է բուժհաստատությունում պետական պատվեր տեղադրելու համար: Այդուհանդերձ, նախարարության տվյալներով մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում 2009թ. դեկտեմբերից մինչև 2011թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում իրականացվել են յոթ մարզային բժշկական կենտրոնների՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի, ՀՀ Արարատի մարզի Արարատի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի արդիականացման աշխատանքներ շենքերի հիմնանորոգման, ժամանակակից բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահույքով հագեցման, ինչպես նաև ղեկավար անձնակազմի վերապատրաստման և տարաբնույթ խորհրդատվական աշխատանքներ հիվանդանոցների կառավարման ժամանակակից սկզբունքների և համակարգերի ներդրման ուղղությամբ: Առողջության առաջնային պահպանման օղակում 2011 թվականի դրությամբ վարկային ծրագրերով 2000-2011 թվականների ընթացքում վերանորոգված և նոր կառուցված բժշկական ամբուլատորիաների/առողջության կենտրոնների և ընտանեկան բժշկության գրասենյակների ընդհանուր թիվը կազմում է 145, որից 66-ը վերանորոգվել են, 79-ը՝ կառուցվել (ներառյալ Սյունիքի մարզի ընտանեկան բժշկության գրասենյակները): ՀՀ մարզերի բոլոր ամբուլատորիաները և առողջության կենտրոնները հագեցվել են բժշկական սարքավորումների ստանդարտ հավաքածուներով, բժշկական կահույքով, պարագաներով և համակարգչային սարքավորումներով:

Չնայած իրականացվող բարեփոխումներին՝ որոշ դեպքերում դեռևս կան կոռուպցիոն ռիսկեր, որոնք կապված են փոխհատուցման համավճարային մեխանիզմի կիրառման ընթացքում համավճարից ազատելու կամ զեղչելու հետ: 2011թ. փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը փոխհատուցման համավճարային մեխանիզմի շրջանակներում համավճար ամբողջությամբ վճարել են 9698, համավճարը զեղչվել է 381, համավճարից ազատվել են 2298 դեպքում, իսկ համավճար վճարելուց հրաժարվել են 416 դեպքում: Ինչ վերաբերում է Համավճարի զեղչման կամ ազատման չափանիշներին, ապա տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի 318-Ն որոշման հավելված 8-ով հաստատված «Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների փոխհատուցման կարգ»-ի 11-րդ կետի համաձայն այն դեպքերում, երբ հիվանդը հնարավորություն չունի իրականացնել սահմանված չափով համավճար, բուժհաստատության կողմից ստեղծված հանձնաժողովն իրավունք ունի որոշում ընդունել տվյալ հիվանդին ազատել համավճարի վճարումից կամ կիրառել զեղչված համավճար: Այսինքն՝ բուժհաստատություններին տրված է լիազորություն ազատել համավճարից կամ կիրառել համավճարի ավելի ցածր շեմ՝ ելնելով հիվանդի վճարունակության աստիճանից, ինչը որոշվում է այդ հաստատությունների կողմից՝ հիվանդի կամ նրա հարազատի դիմումի հիման վրա: Օրենսդրությամբ հստակ սահմանված չեն որոշակի չափորոշիչներ նման որոշումների համար, ինչի հետևանքով բժշկական հաստատությունների կողմից առանձին դեպքերում դրսևորվել են տարբերակված և սուբյեկտիվ մոտեցումներ: Նման մոտեցումների թույլատրելիությունը և առկայությունը առաջացնում է կոռուպցոին ռիսկեր:

Պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության չտրամադրման և ոչ պատշաճ տրամադրման մասին վկայող Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրությունը փաստում է, որ մարդիկ՝ ընդգրկված լինելով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող առանձին (հատուկ) խմբերի ցանկում, հերթագրվել են նշված օգնությունը ստանալու համար համապատասխան հիմնարկում կամ ունեցել են առողջապահության նախարարության

կողմից տրված ուղեգիր, սակայն բուժհաստատություններում մերժել են նրանց բուժումը կամ չեն ապահովել պատշաճ բուժօգնությամբ: Առանձին դեպքերում անձը բուժհաստատության փոփոխման արդյունքում զրկվել է պետպատվերով վիրահատվելու իրավունքից: Հաճախ պետական պատվերի շրջանակում բուժվող հիվանդների նկատմամբ դրսևորվել է անհարգալից վերաբերմունք:

«Բժշկական սխալ» հասկացությունն ամրագրված չէ որևէ օրենսդրական ակտով: Այդ պատճառով չի տարբերակվում անփութությունը բժշկական սխալից, որն էլ իր հերթին դժվարեցնում է գնահատական տալ կատարված դեպքին: Բժշկական սխալի՝ օրենսդրությամբ ամրագրումը բխում է և՛ հիվանդի, և՛ բուժող բժշկի շահերից: Ներկայումս այդպիսի գնահատական տալու իրավասությունները վերապահվում են տարբեր հանձնաժողովների, ինչի արդյունքում բժիշկները անարդարացիորեն ենթարկվում են պատասխանատվության կամ անարդարացիորեն խուսափում դրանից: Այս խնդրի առնչությամբ առողջապահության նախարարը հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունում լայնածավալ քննարկումներ են կազմակերպվում «բժշկական սխալ»-ը միջազգային օրենսդրության պահանջներին համահունչ, որպես հասկացություն ձևակերպելու ուղղությամբ: Արդյունքների ամփոփումից հետո կքննարկվի գործող օրենսդրության մեջ կամ քննարկվող նոր ոլորտային օրենքի նախագծի մեջ վերջինիս լրացնելու հարցը:

2011թ. հունվարի 1-ից ներդրվել է մինչև 7 տարեկան երեխաների անվճար հիվանդանոցային բուժօգնության հավաստագրի ծրագիրը և երեխայի առողջության անձնագիրը: Ծրագրի ներդրման արդյունավետության գնահատման նպատակով Հայաստանի Ամերիկյան համալսարանի կողմից իրականացված հետազոտության (հարցազրույցներ հիվանդանոցային բուժում ստացած երեխաների խնամողների հետ) նախնական և ընթացիկ (6 ամիս անց) գնահատման արդյունքները վկայել են հիվանդանոցներում ոչ պաշտոնական վճարների ավելի քան 4-5 անգամ կրճատման մասին: Հարցմանը մասնակից և հավաստագրերից օգտված մայրերի 79% Երևանում և 91% մարզերում նշել են, որ գոհ են մատուցված ծառայություններից, քանի որ ստացել են անվճար բուժօգնություն: Սակայն, ինչպես վկայում են նաև հարցման արդյունքները, առանձին դեպքերում ծնողներն ունենալով մինչև 7 տարեկան երեխաների անվճար բուժօգնության համար սահմանված հավաստագիր՝ ստիպված են եղել հավելյալ վճարումներ կատարել առանձին բժիշկներին:

Բժիշկների կողմից անձանց կյանքին և առողջությանը վնաս պատճառած դեպքերի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարը Պաշտպանին հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը 2011 թվականին առողջապահական հիմնարկների աշխատակիցների գործողությունների (անգործության) վերաբերյալ ստացել է 78 գրավոր բողոք, իսկ «թեժ գիծ» հեռախոսակապի միջոցով՝ 147 բողոք: Հայտնաբերված խախտումների վերացման նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Պաշտպանը չի տիրապետում որևէ բողոքի կամ փաստի, որ նախարարության ձեռնարկված միջոցառումները բավարար չեն եղել: Այսինքն՝ դրական է գնահատվում եղած բողոքներին տրված նախարարության արձագանքը և ձեռնարկված միջոցները:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Նախարարությունը Պաշտպանին չի տրամադրել տեղեկատվություն, թե քանի գիշերային մշտադիտարկում է անցկացվել բուժհաստատություններում և մարդու իրավունքների խախտման քանի դեպք է բացահայտվել դրանց արդյունքում: Նախարարությունը հայտնել է, որ օրենսդրությամբ վերապահված լիազորություններ չունի գիշերային մշտադիտարկումներ իրականացնելու համար, բացի այդ տվյալ դեպքում պարզ չէ ինչով են առավել արդյունավետ գիշերային մշտադիտարկումները և կոնկրետ ինչ խնդիրներ դրանք կարող են լուծել, ինչպես նաև այն, որ ՀՀ առողջապահության աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են, ունեն նորմավորված աշխատանքային օր, իսկ գիշերային մշտադիտարկում կարող է իրականացվել բացառիկ դեպքերում (արտաժամյա աշխատանքը պետք է փաստաթղթային ձևակերպում ստանա և փոխհատուցվի ԱՕ սահմանված կարգով): Նման մոտեցումը էականորեն նվազեցրել է նախարարության համապատասխան վերահսկողական գործառույթների արդյունավետության նկատմամբ հանրային վստահությունը:

Անկախ տարիքից, Հայաստանում քաղցկեղի բուժումը բոլոր քաղաքացիների համար իրականացվում է պետպատվերի շրջանակներում, սակայն ոլորտի մասնագետների գնահատմամբ պետպատվերի շրջանակներում տրամադրված դեղորայքը հաճախ չի բավականացնում, և նման դեպքերում դեղորայքի ձեռք բերումը կատարվում է հիվանդի կամ դոնոր կազմակերպությունների միջոցներով: Օրինակ, քիմիաթերապիայի մեկ կուրսը 170 հազար դրամ արժե, տևում է 1 շաբաթից մինչև երկու շաբաթ: Սակայն, ինչպես տեղեկացրել է Հայ ուռուցքաբանների ասոցիացիայի նախագահ, մանկական ուռուցքաբանության և քիմիաթերապիայի բաժանմունքի ղեկավար Գրիգոր Բադալյանը, տրամադրվող գումարը բավարար չէ մեկ կուրսի համար: Այդ գումարի մեջ, բացի անհրաժեշտ դեղորայքից, մտնում է նաև բուժանձնակազմի աշխատավարձը և հարակից այլ ծախսեր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մուտքագրված՝ ՀՀ առողջապահության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են հոգեբուժական հաստատություններում անձանց տեղավորմանը, անվճար դեղերով ապահովմանը, պահանջված փաստաթղթերի և տեղեկատվության չտրամադրմանը կամ ոչ պատշաճ տրամադրմանը, պետպատվերի շրջանակներում բուժօգնության կազմակերպմանը: Համեմատական ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ 2010թ. համեմատ 2011թ. ՀՀ առողջապահության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքների քանակն ավելացել է: ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացված գրությունները հիմնականում եղել են սպառիչ, սահմանված ժամկետները չեն խախտվել: Դիմում-բողոքների շրջանակում ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված գրությունների, ստացած պատասխանների և ընդհանուր համագործակցության պատրաստակամությունից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Պաշտպանի և ՀՀ առողջապահության նախարարության միջև ձևավորվել են դրական և արդյունավետ փոխհարաբերություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել բավարար միջոցներ առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացման ուղղությամբ:
- Ներդնել հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման և բուժման, առողջ ապրելակերպ սերմանող առողջապահության գործուն համակարգ ու հանրային առողջությունն ապահովող միջավայր:
- Առողջապահության բնագավառի քաղաքականության և իրականացվող ծրագրերի մասին իրականացնել բնակչության առավել լայն շրջանակների, հատկապես, ակտիվացնել սոցիալական առումով խոցելի խմբերի իրազեկվածության շարունակական բարձրացման աշխատանքները:
- Ընդլայնել կամավոր բժշկական ապահովագրության համակարգը: Խրախուսել հասարակության տարբեր խավերի և տնտեսվարող սուբյեկտների կողմից կամավոր ապահովագրության մեջ ընդգրկումը, իրականացնել հասարակության իրազեկման և բացատրական աշխատանքներ:
- Մշակել և կիրառել կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ:
- Հոգեբուժական բժշկական հաստատություններում ձեռնարկել մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ, այդ հաստատություններում ուժեղացնել վերահսկողությունը:
- Սահմանել համավճարի մեխանիզմի կիրառման ընթացքում համապատասխան հանձնաժողովների կողմից համավճարը զեղչելու կամ դրանից ազատելու հիմքեր, չափորոշիչներ:
- Բարձրացնել նախարարության կողմից բուժհաստատություններում իրականացվող մշտադիտարկումների արդյունավետությունը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարությունը ապահովում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, նոտարական գործունեության, Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացները: Արդարադատության նախարարությունը ապահովում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հարկադիր կատարումը, դատական փորձաքննությունների, վարչական վարույթի ապահովումը և այլն: Նախարարությունը իրականացնում է նաև վերահսկողություն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, քրեակատարողական ծառայության գործունեության օրինականության նկատմամբ, ինչպես նաև ապահովում է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված լիազորությունը:

2011 թվականին Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ամենամեծ խնդիրը և բացթողումը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին և հատկապես դատական իշխանության համակարգում առկա անարդարություններին և ապօրինություններին: Բացի նշված հիմնական խնդրից, տարվա ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- ՀՀ արդարադատության նախարարությունը չի ձեռնարկել բավարար միջոցներ նոտարական ծառայության որակի բարձրացման համար: Նոտարական գրասենյակներում միևնույն նոտարական ծառայությունների համար քաղաքացիներից պահանջել են տարբեր չափի վճարումներ:
- Որոշ դեպքերում Դատական ակտերի հարկադիր կատարման (այսուհետ՝ ԴԱՀԿ) ծառայության աշխատակիցների կողմից խախտվել են պահանջատիրոջ իրավունքները, ինչի հետևանքով շարունակել են չկատարվել կամ ոչ լիարժեքորեն կատարվել դատարանների կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած ակտերի պահանջները: Առանձին դեպքերում ԴԱՀԿ ծառայության կողմից պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել հետախուզման մեջ գտնվող պարտապաններին հայտնաբերելու ուղղությամբ: Հարկադիր էլեկտրոնային աճուրդների օբյեկտիվությունը հաճախ վիճահարույց է եղել, ինչը պատճառ է եղել նաև կոռուպցիոն դրսևորումների: ԴԱՀԿ ծառայությունը շարունակել է դրսևորել անգործություն պետական մարմինների նկատմամբ՝ պաշտոնատար անձանց կողմից վճռի պահանջները չկատարելու դեպքերում:
- Քաղաքացիական կացության ակտերի գրացման (այսուհետ՝ ՔԿԱԳ) մարմինները, ԴԱՀԿ ծառայությունը, պետական ռեգիստրի գործակալությունը որոշ դեպքերում շարունակել են քաղաքացիներից ապօրինաբար պահանջել պարտադիր նոտարական վավերացմամբ լիազորագրեր, ինչը հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածին:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Որոշ դեպքերում ՔԿԱԳ մարմիններում շարունակել են քաղաքացիներից պահանջել օրենքով ոչ պարտադիր փաստաթղթեր (հիմնականում ամուսնությունների գրանցման, անվան, ազգանվան փոխման դեպքերում): Բացի այդ, ՔԿԱԳ գործակալության մի շարք բաժիններում ցածր է եղել բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ չնորմավորված աշխատանքային գրաֆիկ, անհարկի հերթերի ստեղծում և այլն, որոնք պատշաճ կերպով հսկողության բացակայության արդյունք են:
- Թեպետ պետական ռեգիստրի գործակալությունում ներդրվել է մեկ պատուհանի համակարգ, այնուամենայնիվ, սպասարկող աշխատակիցների թվաքանակի անբավարարության պատճառով եղել են մարդկանց կուտակումներ և աշխատանքների խառնաշփոթ:
- Բավարար չի եղել քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրվող բժշկական օգնությունն ու սննդի որակը: Որոշ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են կոմունալ-կենցաղային անբավարար պայմաններ:
- Քրեակատարողական հիմնարկներում հանձնուքներն ընդունելու, տեսակցությունները կազմակերպելու, խցերը օդափոխելու և այլ դեպքերում առկա են եղել կոռուպցիոն երևույթներ:
- Քրեակատարողական հիմնարկներում երբեմն սահմանափակվել են ցմահ ազատազրկման դատապարտված անձանց զբոսանքի իրավունքը՝ շաբաթական 7 անգամվա փոխարեն տրամադրվել է 2-3 անգամ:
- Մտահոգիչ է այն, որ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում բացակայել է ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» ՔԿՀ-ի մասնագիտացված բուժսպասարկումն ապահովող առանձնացված ստորաբաժանումը, ինչպես նաև «վերակենդանացման բաժանմունք»:
- Չնայած Արդարադատության նախարարությունը դատական իշխանության համակարգի բարեփոխման նպատակով առաջարկել է երկարաժամկետ ծրագիր, որում ներառված որոշ առաջարկություններ կարող են նպաստել արդար դատաքննության իրավունքի առավել արդյունավետ իրացմանը, այդուհանդերձ, նախարարությունը իրական և բավարար քայլեր չի ձեռնարկել համակարգում առկա արատավոր երևույթները վերացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ բավարար արդյունավետ չի իրացրել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իր իրավասությունը:

Ոլորտի դրական զարգացումները

- ՀՀ արդարադատության նախարարությունում ստեղծվել է աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչություն:
- Նախարարության կողմից համակարգված ձևով կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն, ապահովվել է դիմումներին և բողոքներին պատշաճ ընթացք տալու գործընթացը:
- Ստեղծվել են ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների ուսումնասիրության աշխատանքային

խմբեր՝ ներպետական օրենսդրությունը նշված որոշումների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Մասնավորապես՝ աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրված սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա ՀՀ կառավարությանն է ներկայացվել օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու առաջարկներ:

- Գույքագրվել է 1990-95 թվականների ՀՀ օրենսդրությունը, վերլուծվել և օրենսդրական նախաձեռնության տեսքով առաջարկություններ են ներկայացվել բոլոր շահագրգիռ մարմիններին:
- Սահմանվել են նոտարի պաշտոնում նշանակվելու, նոտարի թեկնածուների վերապատրաստման նոր կարգ և չափանիշներ, վերանայվել են նոտարական ծառայությունների համար սակագները, սահմանվել և հստակեցվել են այդ ծառայությունների համար ֆիքսված սակագները: Ուսումնասիրվել են արդարադատության նախարարին հասցեագրված քաղաքացիների բողոքները, որոնց հիման վրա տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ միաժամանակ ուժեղացնելով նոտարների նկատմամբ վերահսկողությունը:
- 2011թ. ապրիլից իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքը, հնարավորություն է ստեղծվել նաև իրավաբանական անձի գրանցումն իրականացնել էլեկտրոնային եղանակով, ընդամենը մի քանի րոպեների ընթացքում, ինչպես նաև տեղի են ունեցել առկա բոլոր ընթացակարգերի պարզեցում, ժամկետների կրճատում:
- Կրճատվել է ամուսնությունների գրանցման ժամկետը և պահանջվող փաստաթղթերի քանակը, անվան փոփոխման համար դիմումատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, իսկ դեկտեմբերի 1-ից ՔԿԱԳ տարածքային մարմիններն աշխատանքներն իրականացրել են էլեկտրոնային կառավարման նոր համակարգով:
- Քրեակատարողական հիմնարկներում շարունակվել են վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները, ավելացվել են երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների քանակը, որոշ քրեակատարողական հիմնարկների բուժկետերը վերազինվել են նոր սարքավորումներով, ինչպես նաև հատկացվել են բավարար չափով դեղորայքներ:
- Ավելացել է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի մասնաճյուղերի արտադրական, գյուղատնտեսական և հացաթխման արտադրամասերում աշխատանքներ իրականացնող դատապարտյալների թվաքանակը՝ 2010թ. 236-ի փոխարեն հասել է 271-ի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ նորակառույց շենքերի բնակարանների սեփականատերեր հայտնվել են այնպիսի իրավիճակում, երբ իրենց բնակարանները նոտարական վավերացմամբ գործարքով վաճառվել են մի քանի անձանց: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ իրականացնելը կարող էր հանգեցնել նման իրավիճակների վերացմանը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Արձանագրվել են մի շարք թերություններ նոտարական ծառայությունների որակի և նոտարների գործողությունների հետ կապված, չնայած ՀՀ արդարադատության նախարարությունն այդ ուղղությամբ սկսել է որոշ քայլեր ձեռնարկել: Այնուամենայնիվ, շարունակել է մտահոգիչ մնալ այն, որ միևնույն գործարքի համար նախատեսված վճարը տարբեր նոտարական գրասենյակներում եղել են տարբեր: Ընդ որում, շատ գրասենյակներում նույնիսկ ծառայությունների գները փակցված են եղել, բայց նոտարները շարունակել են իրենց սահմանված վճարները պահանջել:

Բազմաթիվ են եղել խախտումները արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության մարմինների գործողություններում (անգործություններում): Դրանք հիմնականում վերաբերվել են ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից ոչ հետևողական աշխատանքների արդյունքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջները չկատարելուն, հետախուզման մեջ գտնվող պարտապան ֆիզիկական անձանց հայտնաբերելու ուղղությամբ համապատասխան քայլեր չձեռնարկելուն, դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի պահանջները չարամտորեն չկատարող պետական մարմիններին վարչական պատասխանատվության չենթարկելուն: ԴԱՀԿ ծառայությունը հարկադիր էլեկտրոնային աճուրդները հաճախ կազմակերպել է կողմնակալ ձևով՝ աճուրդի դրված գույքի գինը արհեստականորեն իջեցվել է, և գնորդներ են դարձել հարկադիր կատարողների հարազատները:

ԴԱՀԿ ծառայության աշխատակիցները ընդգծված անգործություն են ցուցաբերել հատկապես այն գործերի վերաբերյալ, երբ պարտապանը եղել է պետական մարմնի ներկայացուցիչ: Ըստ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, եթե պարտապան պետական մարմինը կամովին չի կատարում հարկադիր կատարողի օրինական պահանջը, ապա վերջինս ենթարկվում է վարչական պատասխանատվության, իսկ եթե դա կրկնվում է մի քանի անգամ, ապա հարկադիր կատարողը իրավասու է նյութերը նախապատրաստել և ուղարկել հատուկ քննչական ծառայություն՝ քրեաիրավական գնահատական տալու: Նման իրավիճակներում ԴԱՀԿ ծառայությունը՝ ավարտելով վարույթը, հիմքում դրել է վճռի կատարման անհնարինությունը: Այսպես՝ ՀՀ քաղաքացի Մարգարիտա Պապոյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել էր, որ Վարչական դատարանը բավարարել է իր հայցը մասնակի և Երևանի քաղաքապետարանին պարտավորեցրել կատարել Երևանի քաղաքապետի 10. 10. 2002թ. թիվ 1785-Ա որոշումը և Մ. Պապոյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որտեղ պետք է կրպակ տեղադրվեր: Իր հերթին, ԴԱՀԿ ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթը, սակայն 04.08.2011թ. հարուցված կատարողական վարույթը ավարտվել է դատական ակտի կատարման անհնարինության հիմքով: Պաշտպանը, ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության գործողությունների (անգործության) կապակցությամբ կայացրել է մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու մասին որոշում, և արտահայտել իր դիրքորոշումը հետևյալ կերպ. «24.09.2008թ. մինչև 24.09.2009թ. ընկած ժամանակահատվածում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա էր կատարման և չի եղել անհնարինության հիմք՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենքի 71-րդ

հոդվածի պահանջները: ԴԱՀԿ ապահովող ծառայության գործողությունների (անգործության) հետևանքով խախտվել է ՀՀ սահմանադրության 19-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով նախատեսված քաղաքացու արդար դատաքննության իրավունքը, քանի որ այն ընդգրկում է նաև այն ընթացակարգերը, որոնք հետևում են քննության ավարտին, այն է՝ որոշումների կատարումը, ՀՀ սահմանադրության 31-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածներով նախատեսված սեփականության իրավունքը (որոշ գույքային իրավունքներ և շահեր ևս դիտվում են որպես սեփականության իրավունք (օրինակ՝ Իաթրիդիսն ընդդեմ Հունաստանի գործը)»:

Ընթացիկ տարում փոփոխության է ենթարկվել ՔԿԱԳ մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական բազան, ինչի արդյունքում կրճատվել է «բյուրոկրատական քաշքշուկն» ու անձանց իրավունքներն ու ազատությունները խախտվելու դեպքերը: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության «Անվան փոփոխման կարգն ու պայմանները հաստատելու մասին» որոշման մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կրճատվել է դիմումատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Այդուհանդերձ, ՔԿԱԳ գործակալության մի շարք բաժիններում բավարար չի եղել բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ չնորմավորված աշխատանքային գրաֆիկ, անհարկի հերթերի ստեղծում և այլն: ՔԿԱԳ տարածքային բաժինների անվերահսկելիության պատճառներից մեկն այս մարմնի գործունեության ղեկավարումը մասնակիորեն տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելն էր: Չնայած օրենսդրությունը նախատեսել է հստակ կարգավորումներ, այդուհանդերձ, գործնականում առ այսօր տեղական ինքնակառավարման մարմինները չեն իրականացրել պատշաճ հսկողություն:

Բացի այդ, ՔԿԱԳ տարածքային բաժիններում շարունակել են քաղաքացիներից պահանջել հայցվող խնդրի հետ որևէ կապ չունեցող փաստաթուղթ կամ գործողություն: Օրինակ՝ Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնում քաղաքացուն երեխայի ծննդյան վկայական չեն տրամադրել այնքան ժամանակ, մինչև ծնողը հենց տեղում չի վճարել վերջին երկու տարվա աղբի վարձը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն վարչական մարմիններում նոտարական կարգով վավերացված լիազորագիր չի պահանջվում, մինչդեռ մի շարք վարչական մարմիններում, այդ թվում՝ պետական ռեգիստրում, ՔԿԱԳ տարածքային մարմիններում նոտարական կարգով վավերացված լիազորագրերի անհիմն պահանջներ են ներկայացվել (23-րդ հոդված): Նշված գործելաոճը հակասել է նաև ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջներին:

Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների արդյունքում պետական ռեգիստրի գրանցման գործակալությունում ներդրվել է «Մեկ պատուհան» համակարգը, համաձայն որի քաղաքացին ազատվել է «բյուրոկրատական քաշքշուկներից»: Համակարգի ներդրմամբ իրավաբանական անձի գրանցման գործընթացը ՀՀ-ում կատարվելու էր առավելագույնը 15 րոպեի ընթացքում: Այս գաղափարը չափազանց ողջունելի էր, սակայն արձանագրված իրական վիճակը

առաջացրել է հիասթափություններ տնտեսվարող սուբյեկտների և անհատ անձանց շրջանում, ինչը պայմանավորված է եղել ծրագրի ներդրման ժամանակ համապատասխան մարդկային ռեսուրսներ չնախատեսելու հետ, ինչն էլ հանգեցրել է հերթերի գոյացմանը:

Քրեակատարողական հիմնարկներում ցածր է եղել դատապարտյալներին և կալանավորներին ցուցաբերվող բուժօգնության որակը, նրանց տրվել են ժամկետանց դեղորայքներ, իսկ երբեմն էլ դրանց բողոք գանգատներին ուշադրություն չեն դարձրել: ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, «Աբովյան» ՔԿՀ-ում բացակայել է մասնագիտացված բուժսպասարկումն ապահովող առանձնացված ստորաբաժանում, ինչպես նաև «վերակենդանացման բաժանմունք»:

Որպես ազգային կանխարգելման մեխանիզմ՝ Մարդու իրավունքների պաշտպանը իր տարեկան գործունեությունն ամփոփելիս ընդգծել է քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման վերացման, ժամկետանց դեղորայքների տրամադրման բացառման, տեսակցությունների տրամադրման, ինչպես նաև վարչակազմի և դատապարտյալների միջև եղած օրինական փոխհարաբերությունների հաստատման խնդիրները: Քրեակատարողական հիմնարկներում հանձնուքներն ընդունելու, տեսակցությունները կազմակերպելու, խցերը օդափոխելու և այլ դեպքերում առկա են եղել կոռուպցիոն երևույթներ:

Իրավական ակտերով չի կարգավորվել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հացադուլավորների պահման պայմանների հարցը, ինչի արդյունքում վերջիններս պահվել են ՔԿՀ-ում պահվող իրավախախտողի կարգավիճակում, այսինքն՝ պատժախցերում: Ակնհայտ մարդու իրավունքի խախտումը կարող է վերանալ բացառապես օրենսդրությամբ՝ համապատասխան կարգ և չափանիշներ սահմանելով: Մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ նույնպես անդրադարձել են քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած կալանավորների կամ դատապարտյալների համար առանձին խցերի բացակայության հարցին, իսկ երբեմն տարրական սանիտարահիգիենիկ պայմանների բացակայությանը: Բոլոր քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած կալանավորները կամ դատապարտյալները պահվել են պատժախցերում՝ ողջ օրվա ընթացքում չհավաքելով մահճակալը:

Քրեակատարողական հիմնարկ տեղափոխված կալանավորը ներքին կանոնակարգի համաձայն կարող է մինչև 7 օր ժամկետով կարանտինային խցում պահվել, որի ընթացքում անցկացվում են բժշկական կամ այլ տեսակի հետազոտություններ: Մինչդեռ, ձևավորված պրակտիկան փաստել է, որ այդ ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն արգելել է որևէ տեսակցության տրամադրում, հանձնուքների ընդունում, նույնիսկ փաստաբանի հետ հանդիպում:

Մշտապես խախտվում են նաև ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալների՝ օրենքով սահմանված զբոսանք ունենալու իրավունքը, քանի որ նրանց շաբաթական 7 անգամվա փոխարեն թույլատրվել է զբոսանքի դուրս գալ ընդամենը երկուսից երեք անգամ:

Արդարադատության նախարարի հրապարակային գնահատականներով դատական իշխանությունը և արդարադատության համակարգը Արդարադատության

նախարարության «աքիլեսյան գարշապարն են»: Այդուհանդերձ, նախարարության կողմից այս ուղղությամբ տարվող աշխատանքները եղել են խիստ անբավարար:

ՀՀ դատական օրենսգրքի համաձայն, ՀՀ արդարադատության նախարարը իրավասու է հարուցել կարգապահական վարույթ դատավորի նկատմամբ: Դատավարական կամ նյութական սխալի ակնհայտ և կոպիտ լինելու հիմքով կարգապահական վարույթը հարուցվելուց հետո Արդարադատության խորհրդը դատավորին ենթարկում է կարգապահական պատասխանատվության: Սխալի ակնհայտ և կոպիտ լինելու չափանիշները սահմանված են ոչ թե օրենսգրքով, այլ որոշվում են Արդարադատության խորհրդի կողմից: Մինչդեռ Արդարադատության նախարարությունը որոշ դեպքերում (օրինակ՝ դատավոր Մասիս Ռեհանյանի վերաբերյալ և դատավոր Յուրիկ Իսկոյանի վերաբերյալ Պաշտպանի հաղորդումներին ի պատասխան), մերժել է կարգապահական վարույթի հարուցումը՝ գնահատելով դատավորներ Մասիս Ռեհանյանի և Յուրիկ Իսկոյանի խախտումները ակնհայտ, սակայն ոչ կոպիտ:

Արդարադատության խորհուրդն իր հերթին դատական օրենսգրքի հստակ ամրագրված նորմը որոշ դեպքերում ենթարկել է կամայական մեկնաբանության: Այսպես՝ առկա է գործն ըստ էության լուծող դատարանի վճիռ, որի կայացվելուց հետո կողմերից մեկը դիմում է Արդարադատության խորհուրդ: Ներկայացված դիմումը չի քննվել, քանի որ վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան: Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն, կարգապահական վարույթը հարուցվում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման և ոչ թե ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում, ուստի դատական ակտի բողոքարկումը հիմք չէ կարգապահական վարույթ չհարուցելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել միջոցներ նոտարների թվաքանակի ավելացման ուղղությամբ՝ նոտարական գրասենյակներում հերթերը և կուտակումները բացառելու նպատակով:
- Ակտիվացնել նոտարական գրասենյակների աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը՝ շեշտը դնելով ծառայությունների դիմաց վճարվող գումարների միասնական քաղաքականության ապահովման նկատմամբ:
- Հստակեցնել նոտարների կողմից վավերացման ենթակա քաղաքացու հայտարարության տեքստը (փաստաթուղթը), գործարքը նոտարական վավերացման ենթարկելու փաստը, որովհետև, դրա մասին դրույթի հստակ չլինելու պատճառով շատ նոտարներ հրաժարվել են նման գործարքները կնքելուց:
- Նոտարական գրասենյակներում պարբերաբար անցկացնել դիտարկումներ՝ քաղաքացուն մտահոգող խնդիրները վերհանելու, ինչպես նաև արհեստական խոչնդոտները վերացնելու ուղղությամբ:
- Նույնպիսի դիտարկումներ, և այլ տեսակի հսկողական մեթոդներ կիրառել նաև ՔԿԱԳ տարածքային բաժինների գործունեության նկատմամբ:
- Հստակեցնել ՔԿԱԳ մարմինների իրավական կարգավիճակը, և քննարկել որևէ մեկ մարմնի ենթակայությանը հանձնելու հարցը:

- Պետական ռեգիստրի գործակալության աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով վերանայել մարդկային ռեսուրսի կազմը ոչ միայն քանակական, այլ նաև որակական առումով:
- Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում վերացնելու այնպիսի կոռուպցիոն երևույթներ, որոնք ի հայտ են գալիս հանձնուքներն ընդունելու, տեսակցությունները կազմակերպելու, խցերը օդափոխելու և այլ դեպքերում:
- Հստակեցնել պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները:
- Նախատեսել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում կին և անչափահաս դատապարտյալների համար մասնագիտացված բուժսպասարկում ապահովող առանձնացված ստորաբաժանում, ինչպես նաև վերակենդանացման բաժանմունք:
- Սահմանել ՀՀ դատական օրենսգրքում դատավարական կամ նյութական սխալի ակնհայտ և կոպիտ լինելու չափանիշները: Բացի այդ, հստակություն մտցնել Արդարադատության խորհուրդ դիմելու մեկ տարվա ժամկետի մասով, քանի որ ներկայիս տրամաբանությամբ պարտադիր չէ ակտի ուժի մեջ մտնելը, մինչդեռ Արդարադատության խորհուրդը շահագրգիռ սուբյեկտների դիմումները ետ է վերադարձնում՝ դատական ակտը բողոքարկելու պատճառաբանությամբ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության նպատակներն ու խնդիրներն են ՀՀ շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը, ՀՀ բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը, ՀՀ տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովումը և այլն:

2011 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության իրավասությունների ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Մտահոգիչ է եղել մարդու և առաջին հերթին տնտեսվարող սուբյեկտների գործունեության արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը: Միայն 2011թ. պաշտոնական տվյալներով հայտնաբերվել է շրջակա միջավայրի համար վնասակար գործունեության իրականացման 5 դեպք, երբ առկա չի եղել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն:
- Շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում կանաչ տարածքների ոչնչացումը, մասնավորապես՝ անտառների (անտառային հողերի) հատկացումները տարբեր տնտեսական գործունեությունների իրականացման համար, ընդ որում՝ առանց համապատասխան պաշարների հստակ գնահատման և բնապահպանական ազդեցությունների հաշվարկման: Շարունակվել են ապօրինի ծառահատումների դեպքերը, որոնք Նախարարության համապատասխան կառույցների կողմից չեն արձանագրվել, և համապատասխան վարչական վարույթներ չեն սկսվել:
- Մտահոգիչ է եղել հանքարդյունահանման հետ զուգակցվող և շրջակա միջավայրի վրա իր ազդեցությունը թողնող ևս մեկ խնդիր՝ այդ գործունեության արդյունքում շարունակաբար աճող թափոնները և պոչամբարները: Նախարարության կողմից բավարար չափով չեն ուսումնասիրվել ՀՀ տարածքում լեռնահանքային արդյունաբերության հետևանքով խախտված, դեգրադացված հողերը (պոչամբարներ, մետաղական հանքավայրերի լցակույտեր):
- Առանձին դեպքերում Նախարարությունը թերացել է կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին սահմանված կարգով հասարակությանը իրազեկելու գործընթացը կազմակերպելու ժամանակ: Որոշ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

դեպքերում էլ հասարակական կառույցների հետ չի քննարկել իրավական ակտերի նախագծերը:

- 2011թ. ՀՀ բնապահպանության նախարարության «Թեժ գիծ» ծառայությունը գրանցել է 36 զանգ: Նման ցածր ցուցանիշը վկայում է ինչպես բնակչության իրազեկվածության ցածր մակարդակի, այնպես էլ նախարարության հանդեպ ունեցած վստահության պակասի մասին:

Արձանագրված դրական զարգացումները

- Պահպանվել է Սևանա լճի մակարդակի բարձրացման կայուն միտումը և Սևանա լճի հարակից տարածքներում ստեղծվել են հանրային լողափեր:
- Կասեցվել են «Թռչկան» ջրվեժը սնուցող գետի վրա փոքր ՀԷԿ-ի կառուցման շինարարական աշխատանքները, և ջրվեժը ներառվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկում՝ որպես գեղագիտական առանձնահատուկ արժեք ունեցող ջրագրական հուշարձան:
- Մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ՀՀ-ում իրականացվել են անտառային ոլորտի բարելավմանն ուղղված ծրագրեր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարության իրավասությունների շրջանակում հիմնաքարային հանդիսացող շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխարգելման, ինչպես նաև բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը ենթադրում է մարդու գոյությունը պայմանավորող և շրջակա միջավայր հասկացության մեջ ներառվող բոլոր տարրերի նկատմամբ հետևողական պետական հոգածության առկայություն: Մինչդեռ որոշ դեպքերում ՀՀ բնապահպանության նախարարությանը չի հաջողվել ամբողջությամբ կանխել մարդու և առաջին հերթին տնտեսվարող սուբյեկտների գործունեության արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը: Միայն 2011թ. պաշտոնական տվյալներով հայտնաբերվել է շրջակա միջավայրի համար վնասակար գործունեության իրականացման 5 դեպք, երբ առկա չի եղել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն:

Այս ոլորտում մասնագետների կողմից բարձրացվող առաջնային խնդիրներից մեկը դիտարկվել է Հայաստանի Հանրապետությունում կանաչ տարածքների կրճատումը, մասնավորապես առանձին դեպքերում անտառների (անտառային հողերի) հատկացումները տարբեր տնտեսական գործունեությունների իրականացման համար, ընդ որում՝ առանց համապատասխան պաշարների հստակ գնահատման և բնապահպանական ազդեցությունների հաշվարկման: Նույն խնդրի մեկ այլ դրսևորում է ապօրինի ծառահատումները: Անտառային տարածքների կրճատումը նպաստում է կլիմայի փոփոխության բացասական ազդեցությանը, արագացնում է անապատացման գործընթացը, մեծացնում սողանքային և հողի էրոզիայի վտանգները, հանգեցնում է կենսաբազմազանության կորստի և անտառահատված տարածքներին հարակից համայնքների բնակիչների կենսապայմանների վատթարացմանը: Համաձայն փորձագետների արտահայտած տեսակետի, անտառային տարածքների ոչնչացման առկա տեմպերով շարժվելու դեպքում երկիրը 50 տարվա ընթացքում կանապատանա:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Մի քանի բնապահպանական կազմակերպությունների տվյալների համաձայն ծառերի ապօրինի հատումների ծավալները մի քանի անգամ գերազանցում են օրինական հատումների ծավալները: Անտառկառավարման համակարգի անկատարությունը և օրենսդրության կիրարկման հետ կապված խնդիրները նպաստում են անտառների հատումներին և դեգրադացիային՝ կրճատելով կենսաբազմազանությունը, բերելով հողի դեգրադացմանը և խաթարելով էկոհամակարգերի կայունությունը: 2011թ. հայտնաբերվել է անտառխախտման 598 դեպք, ինչի արդյունքում արձանագրվել է 37.7 մլն ՀՀ դրամի տուգանք և 119.1 մլն ՀՀ դրամի շրջակա միջավայրին պատճառված վնաս:

Չնայած այն հանգամանքին, որ մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ՀՀ-ում իրականացվել են անտառային ոլորտի բարելավմանն ուղղված ծրագրեր, այնուամենայնիվ, մինչ օրս ՀՀ-ում չի իրականացվել որևէ ընդունելի միջազգային փորձի կիրառմամբ համակարգային գնահատում, որի հիման վրա հնարավոր կլիներ համարժեք միջոցառումներ իրականացնել ոլորտում անօրինական գործունեությունը և կոռուպցիան նվազեցնելու ուղղությամբ:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ Սոնա Այվազյանի պնդմամբ վերջին ժամանակաշրջանում հաճախացել են այն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության անտառային տարածքները հատկացվել են տարբեր տեսակի տնտեսական գործունեություն իրականացնելու, առավելապես՝ հանքարդյունաբերություն ծավալելու նպատակով: Պետության կողմից տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել են հանքարդյունահանման մի քանի հարյուր լիցենզիաներ, որոնց տրամադրման պայմաններում, որոշ գնահատականներով, անտեսվել են շրջակա միջավայրի վրա դրա բացասական ազդեցության և դրանց հետևանքների վերացման խնդիրները: Ինչպես նշել է բնապահպան Արթուր Գրիգորյանը, հանքարդյունահանում իրականացնելու և դրա հետևանքով կանաչ տարածքների՝ մեծածավալ անտառների կորստի վտանգի ամենավառ օրինակը և հասարակական մեծ հնչեղություն ձեռքբերած դեպքը Թեղուտի պղնձամոլիբդենային հանքի շահագործման նպատակով հանքարդյունահանման լիցենզիայի տրամադրումն է: Այն լայնամասշտաբ դիմադրություն է առաջացրել բնապահպանական հասարակական կազմակերպությունների, փորձագետների և տեղական համայնքների շրջանում:

Նշանակալի ծավալներով իրականացվող հանքարդյունահանման հետ զուգակցվող և շրջակա միջավայրի վրա իր ազդեցությունը թողնող ևս մեկ խնդիր է նաև այդ գործունեության արդյունքում առաջացող թափոնները և պոչամբարները: Հանրապետության տարածքի հազարավոր հեկտարներ ծածկված են բաց հանքերով և պոչամբարներով: Թունավոր գազերի արտանետումները և քիմիական նյութերի հեռացումը որպես թափոն աղտոտել են շրջակա միջավայրը և բացասական ազդեցություն թողել մարդկանց առողջության վրա: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից 2005թ. հրապարակված մի զեկույցի՝ Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում անոմալ ծնունդների թվով երկրորդն է եղել Ղրղզստանից հետո: Բազմաթիվ փորձագետներ անոմալիաների այս բարձր ցուցանիշը բացատրում են շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակով: Առողջական խնդիրները հատկապես սուր են արտահայտված երկրի հյուսիսային և հարավային շրջաններում, որտեղ և կենտրոնացված են հանքարդյունաբերության հիմնական օջախները: Թեև

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Նախարարությունը ՀՀ տարածքում լեռնահանքային արդյունաբերության հետևանքով խախտված, դեգրադացված հողերն ուսումնասիրելու նպատակով 2011-2013թթ. և 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի ցանկում ներառելու համար ներկայացրել է համապատասխան ծրագրի հայտեր, սակայն պետական բյուջեում ֆինանսավորման բացակայության պատճառով դրանք չեն հաստատվել:

Թեև Նախարարության կողմից բոլոր իրավական ակտերի նախագծերը սահմանված կարգով տեղադրվել են նախարարության պաշտոնական վեբ-կայքում, այնուամենայնիվ, դա բավարար չի եղել, և որոշ դեպքերում եղել են դժգոհություններ այն առումով, որ Նախարարության կողմից ընդունվող կամ նախաձեռնվող իրավական ակտերի ընդունումն իրականացվել է առանց հանրային լսումների և քննարկումների կազմակերպման, առանց փորձագետների ներգրավման՝ չպահպանելով մասնավորապես «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (Օրհուս) պահանջները, որը 2001թ.-ին վավերացրել է Հայաստանի Հանրապետությունը:

Թեև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է մինչև փորձաքննության ենթակա գործունեություն սկսելը հնարավոր վնասակար ազդեցության մասին հասարակայնությանն իրազեկելու գործընթաց, ինչպես նաև հասարակության կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ դրույթներ, սակայն ընդհանուր առմամբ կան դժգոհություններ, որ հասարակությունը չի իրազեկվել նման նախագծերի մասին, տեղի չեն ունեցել հասարակական լսումներ, իսկ կարծիք լինելու դեպքում դրանք հաշվի չի առնվել: ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական տվյալներով կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին սահմանված կարգով հասարակությանը չիրազեկելու դեպքեր 2011թ. չեն արձանագրվել՝ նկատի ունենալով բնապահպանական փորձաքննության ընթացքում հասարակությանը պատշաճ ձևով ծանուցման և հասարակական լսումներին մասնակցության հանգամանքները:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է բնապահպանական ոլորտին առնչվող մի շարք միջազգային փաստաթղթեր, այդ թվում ՄԱԿ-ի՝ Կլիմայի փոփոխության շրջանակային, Կենսաբազմազանության մասին, Անապատացման դեմ պայքարի մասին, ՅՈՒՆԵՍԿՈ-ի՝ համաշխարհային ժառանգության մասին, Լանդշաֆտի եվրոպական, ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ)՝ Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին (Էսպոյի), ՄԱԿ-Ի ԵՏՀ՝ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մասին (Օրհուսի) կոնվենցիաները, այդուհանդերձ արձանագրվել են կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների խախտումներ: Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն տվել է եզրակացություն այն մասին, որ Հայաստանը չի պահպանել շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ օրենսդրության լրամշակման իր ստանձնած պարտավորությունը, և օրենսդրությունը չի համապատասխանում միջազգային նորմերին,

իսկ Էսպոյի կոմիտեն ողջունել է կոնվենցիայի դրույթներն իրականացնելուն ուղղված ՀՀ կառավարության ջանքերը:

Դրական քայլ է համարվել «Թռչկան» ջրվեժը սնուցող գետի վրա փոքր ՀԷԿ-ի կառուցման շինարարական աշխատանքների կասեցումը և ջրվեժը, որը Հայաստանի ամենաբարձրն ու ամենաջրառատն է, ՀՀ բնության հուշարձանների ցանկում՝ որպես գեղագիտական առանձնահատուկ արժեք ունեցող ջրագրական հուշարձան ներառելը: Այս գործընթացը դրական է համարվել նաև հասարակության կարծիքը գնահատելու և դրա ներքո որոշում կայացնելու տեսանկյունից:

ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի վեց համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և հողերի նպատակային նշանակությունը փոխվել է՝ վերածվելով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի: Այդ որոշմամբ մոտ 600 հեկտար տարածք տրամադրվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային ընկերությանը՝ հանքարդյունաբերության գործունեության տարածքի ընդլայնման համար: Որոշմանն ընդդիմացել են Քաջարան համայնքի բնակիչները, քանի որ համայնքի 27 հա հողերը ևս տրամադրվել են հանքարդյունաբերության համար: Որպես բողոքի նշան՝ համայնքի ղեկավարը հրաժարվել է ստորագրել այդ նպատակով իրեն ներկայացված համաձայնագիրը, և վայր է դրել իր լիազորությունները: Գյուղապետը վստահ է, որ այդ համաձայնագիրը կդառնա ամբողջ գյուղի հարկադիր տարհանման պատճառ: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է այդ գործընթացի օրինականությունը, և խնդրի վերաբերյալ Պաշտպանի վերջնական դիրքորոշումը պարզ կլինի 2012 թվականին և կներառվի հաջորդ զեկույցում:

Այս տարի բարձրաձայնվել են նաև ուրան պարունակող հանքերի շահագործման վտանգի մասին և ըստ ուրանի հանքավայրերի ուսումնասիրություն իրականացնող ընկերության ներկայացուցիչների՝ Հայաստանում ուրան չկա և հնչեցված մտահոգությունները իմաստազուրկ են: Մասնավորապես «Գեոթիմ» ընկերության ներկայացուցիչները պնդել են, որ Երևանից 170 կմ հեռավորության վրա՝ երկու մարզերի՝ Վայոց Ձորի և Սյունիքի սահմանին գտնվող Ամուլսարից նախատեսվել է միայն ոսկի հանքարդյունահանել, մինչդեռ բնապահպանները շարունակել են պնդել, որ այդ նույն հանքում գտնվում է 70 տոննայից ավելի ուրան: Ամուլսարի մոտ երկու ջրամբար կա՝ Կեչուտինը և Ամուլսարից 2 կմ հեռավորության վրա գտնվող Սպանդարյանի ջրամբարը, որը Հայաստանի 2-րդ ամենախոշոր ջրամբարն է՝ 257 միլիոն խորանարդ մետր տարողությամբ: Բնապահպանները մտահոգվել են, որ այս հանքավայրի շահագործումը Ջերմուկ առողջարանային համալիրի ու շրջակա 6000-ից ավելի բնակչության համար ևս վտանգավոր է:

Մտահոգող խնդիր է եղել Սոթքում ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման ծրագիրը: «Գեոպրոմայնինգ» ընկերությունը գտել է, որ ոսկու հանքաքարը Սոթքից երկաթուղով Արարատ տեղափոխելը և վերամշակելն ավելի ծախսատար է, և որոշվել է ոսկու վերամշակման ձեռնարկություն կառուցել հենց Սևանի ավազանում, ինչը խնդիրներ կարող է առաջացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման տեսանկյունից: Մասնագիտական կարծիքներ կան, որ Սևանա լճի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ավազանում գործող Սոթքի ոսկու հանքավայրի, Շորժայի և Ջիլիզայի դունիտ-պերիդոտների հանքավայրի տոքսիկ նյութերն ամեն ժամ թունավորում են Սևանա լիճը: Երկու տարի առաջ բնապահպանները պայքարելով՝ կարողացել էին դադարեցնել շինարությունը, սակայն վերջիններիս համար խնդիրը մնացել է մտահոգիչ, քանի որ 2011թ. այնտեղ սկսվել է ջարդիչ-տեսակավորիչ սարքի տեղադրումը:

Օրակարգային է մնացել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի հարցը, որը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից գնահատվել է որպես բացասական: Նախագիծն արդեն երկու տարի է քննադատվում է բնապահպանների կողմից այն առումով, որ նախագծում պետք է նշվեր, որ մեկ գործունեության համար պետք է տրվի մեկ եզրակացություն (սա փորձաքննության ինստիտուտի սկզբունք է), որպեսզի չկրկնվի Թեղուտի հանքավայրի շահագործման փորձաքննության սխալը (երկու փորձաքննական եզրակացություն): Հաջորդ թերությունն առնչվում է հանքարդյունահանումը նախաձեռնողի կողմից փորձագետին ընտրելու կարգի սահմանմանը, որը վիճարկելի է վերջինիս անկախության երաշխավորման տեսանկյունից:

2011թ. ՀՀ բնապահպանության նախարարության «Թեժ գիծ» ծառայությունը գրանցել է 36 զանգ: Նման ցածր ցուցանիշը վկայում է ինչպես բնակչության իրազեկվածության ցածր մակարդակի, այնպես էլ նախարարության հանդեպ ունեցած վստահության պակասի մասին:

2011 թվականի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարություն սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ներկայացվել 135 նախատեսվող գործունեությունների փաստաթղթեր, որոնցից 120-ի վերաբերյալ տրամադրվել է դրական, իսկ 1 նախագծի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել շրջակա միջավայրի բնագավառում ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների իրականացումը՝ անհրաժեշտության դեպքում ընդունելով համապատասխան իրավական ակտեր կամ նախաձեռնելով դրանց ընդունումը:
- Ապահովել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի շուրջ հասարակական լայն քննարկումներ, և լրջորեն հաշվի առնել քաղաքացիական հասարակության առաջարկները:
- Շրջակա միջավայրին վերաբերող և առավելապես հասարակական հնչեղություն նախատեսող խնդիրների քննարկման ժամանակ ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ հասարակական կառույցների ներկայացուցիչների մասնակցությունը մշտապես ապահովելու համար:
- Ուժեղացնել հսկողությունը ապօրինի անտառահատումների, ծառահատումների, վտանգավոր նյութերի ու թափոնների առաջացման, փոխադրման ուղղությամբ:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ և այլն:

2011 թվականին ՀՀ դատախազության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Չնայած դատախազական հսկողության արդյունքում հայտնաբերվել և համապատասխան ընթացք են ստացել հետաքննության և նախաքննության մարմինների կողմից թույլ տրված բազմաթիվ իրավախախտումներ, այդ թվում՝ հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացք տալու գործընթացի հետ կապված, այնուամենայնիվ, Պաշտպանին ուղղված բողոքները վկայում են, որ եղել են դեպքեր, երբ նախապատրաստված նյութերով անձանց տրված բացատրություններում եղել են էական հակասություններ, իսկ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից կայացվել են «նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումներ: Քաղաքացիների իրավունքների և շահերի նման խախտումները հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից հիմնականում հնարավոր է դարձել Դատախազության կողմից հետաքննության և նախաքննության նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու հետևանքով, երբ վիճելի կամ ոչ իրավաչափ որոշումները չեն վերացվել:

Դարձյալ հետաքննության և նախաքննության նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու հետևանքով բազմաթիվ են դեպքերը, երբ հետաքննության կամ նախաքննության մարմինները խախտել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված 10-օրյա ժամկետները: Խնդիրն, իրականում, ոչ իրատեսական օրենսդրական կարգավորման հետևանք է, ինչը հաստատվել է նաև Պաշտպանին ուղղված դատախազության պատասխանում, որտեղ նշվել է, որ օրենքով սահմանված 10-օրյա ժամկետը հաճախ չի բավարարում քրեական գործի հարուցման հիմնավորվածությունը պարզելու համար:

Շատ դեպքերում Դատախազության ոչ բավարար հսկողության արդյունքում ՀՀ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերում (այսուհետ՝ ՁՊՎ) գտնվող կալանավորված անձանց նկատմամբ չեն պահպանվել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետները:

Չնայած դատախազությունում դիմում-բողոքների քննարկման կարգը կարգավորված է ՀՀ գլխավոր դատախազի 20.06.2008թ. «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 59 հրամանով, և այդ հրամանի 224-րդ կետի համաձայն արգելվում է քննարկման համար դիմումն ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին, ում որոշումը կամ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է, այնուամենայնիվ, առանձին դեպքերում, քաղաքացիները դժգոհելով քննիչի գործողություններից, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով՝ այդ մասին դիմել են վերադաս դատախազին, իսկ վերջինս էլ դիմումի հետագա ընթացքը լուծելու համար այն մակագրել է այն քննիչին, որի գործողությունները վիճարկվել են: Նման գործողությունների արդյունքում խախտվել է անձանց բողոքարկման, այսինքն՝ արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը:

Թեև ՀՀ դատախազության համակարգում խիստ կանոնակարգված է ՁՊՎ-ներում և ՔԿՀ-ներում բռնությունների և խոշտանգումների հնարավոր դրսևորումներին օրենսդրությամբ սահմանված կարգով արձագանքելու գործընթացը, այնուամենայնիվ, քաղաքացիների պնդմամբ, ոչ բոլոր դեպքերում է Դատախազությունը տեղեկացվել կամ արդյունավետ միջամտել:

Օրենսդիրը և դատարանը բավարար չափով չեն ապահովել սահմանված դատաքննության փուլում կողմերի հավասարությունը՝ մրցակցության սկզբունքը: Իրավապաշտպան կազմակերպությունների կողմից կատարված մոնիտորգի արդյունքները վկայում են, որ դատախազը դատաքննության փուլում իր գործունեությունն իրականացնելիս մյուս կողմի նկատմամբ ունի առավելություններ, որը հանգեցնում է դատավարության մասնակիցների անհավասարությանը: Նման դրսևորումների արդյունքում խախտվում է արդար դատաքննության իրավունքը:

Մտահոգիչ է այն, որ Դատախազությունն ընդհանուր առմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս նախապատվությունը տալիս է կալանքի միջնորդություն դատարան ներկայացնելուն, մինչդեռ կալանքը պետք է դիտվի որպես բացառիկ խափանման միջոց և կիրառվի այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մյուս խափանման միջոցներով հնարավոր չէ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը քրեական վարույթի ընթացքում: Գործնականում գրեթե չեն կիրառվել «անձնական երաշխավորություն» և «կազմակերպության երաշխավորություն» խափանման միջոցների տեսակները: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված չեն կալանքի հետ չկապված առավել արդյունավետ այլընտրանքային խափանման միջոցներ:

ՀՀ դատախազությունն իր լիազորությունների սահմաններում հսկողություն է իրականացնում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190 հոդվածի («Քննչական ենթակայությունը») կիրառման մասով: Հսկող դատախազը պետք է միջոցներ ձեռնարկի գործերի քննչական ենթակայության խախտման դեպքերը բացառելու ուղղությամբ՝ փոխանցելով այդ գործերը համապատասխան նախաքննության մարմիններ ըստ ենթակայության քննելու համար: Դատախազության այս գործառույթի վերաբերյալ իրենց բացասական կարծիքներն են հայտնել միջազգային և տեղական մի շարք իրավապաշտպաններ ու փորձագետներ, որոնց կարծիքով պետք է նվազագույնին հասցնել սուբյեկտիվ մոտեցումները, և հստակ սահմանել այն մոտեցումներն ու չափորոշիչները, որոնք պետք է կիրառվեն քրեական գործերի քննչական ենթակայության հարցը որոշելիս:

Չնայած ձեռնարկված որոշակի դրական բարեփոխումներին և աշխատանքների առավել արդյունավետ ու թափանցիկ իրականացմանը, այնուամենայնիվ, ընթացիկ

տարում եղել են բողոքներ նաև ՀՀ զինվորական դատախազությունից: Մասնավորապես՝ ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում զոհված կամ սպանված զինծառայողների ծնողների և բարեկամների դժգոհությունները վերաբերել են ՀՀ զինվորական դատախազության ոչ պատշաճ հսկողության արդյունքում նախաքննությունն իրականացնող մարմնի ոչ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննությանը: Նման բողոքները հիմնականում վերաբերել են մինչև 2011 թվականը կատարված հանցագործություններին:

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2009թ. թիվ 1272-Ն որոշմամբ սահմանված հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազությունը կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ կապված օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի բացերի վերացման և այլ խնդիրների հետ: Այդուհանդերձ, կոռուպցիոն երևույթների նվազեցմանը նպաստող հիմնական պայմանը սոցիալական խնդիրն է, որի համատեքստում անհրաժեշտ է վերանայել դատախազների աշխատավարձին վերաբերող օրենսդրական կարգավորումները՝ դրանք հնարավորինս բարձրացնելով և անկախացնելով գործադիր մարմնի հայեցողությունից:

ՀՀ դատախազությունն առավելագույնս ապահովել է իր գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը, որի վկայությունն է դատախազության ամենօրյա գործունեության ներկայացումը համացանցային կայքէջում: 2011թ. հունվարին «Խոսքի ազատության կոմիտե» հասարակական կազմակերպության հրապարակած դիտարկման արդյունքներով դատախազության համացանցային էջը համարվել է տեղեկատվության մատչելիության առումով ամենաթափանցիկը: Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ Հայաստանում տեղեկության ազատությանը և հրապարակայնությանը նպաստելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խստացնել և առավել արդյունավետ դարձնել հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:
- Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում դատախազական հսկողության մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:
- Հետևողականորեն պահպանել ՀՀ գլխավոր դատախազի թիվ 59 հրամանի պահանջները, և բացառել հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի գործողությունների կամ որոշումների վերաբերյալ դատախազին հասցեագրված բողոքների վերահասցեագրումը այն նույն պաշտոնատար անձին, ում գործողությունները կամ որոշումները բողոքարկվել են:
- Ձեռնարկել միջոցներ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման դեպքերը բացառելու ուղղությամբ:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսել այլ խափանման միջոցներ և ապահովել դրանց կիրառումը՝ նվազեցնելով կալանքի միջնորդությունների քանակը:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մշակում և իրականացնում է ագրոպարենային ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականությունը, ապահովում է գյուղատնտեսական գործունեության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականությունը:

2011 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության նորաստեղծ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից դեռևս լիարժեք հսկողություն չի իրականացվել մսամթերքի վաճառքի նկատմամբ, մինչդեռ գյուղատնտեսության նախարարության գործառույթների շրջանակն, ի թիվս այլ բնագավառների, ընդգրկում է նաև սննդամթերքի անվտանգությունը:
- Չի ներդրվել գյուղատնտեսական ապահովագրությունը, այնինչ նման ապահովագրությունը կարող է ապահովել բնական աղետների հետևանքով գյուղատնտեսության ոլորտի տնտեսվարողներին հասցված վնասների փոխհատուցումը:
- Չնայած ապրանքարտադրողների համար տնտեսվարման բարենպաստ միջավայր ստեղծելուն, նախարարության կողմից ձեռնարկված գործնական ու դրական քայլերին, արդյունքները բավարար չեն եղել:
- Նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը չի իրականացրել պատշաճ հսկողություն հաց արտադրող ընկերությունների գործունեության նկատմամբ:
- Հանրապետությունում առկա չէ սպանդանոցային բավարար ցանց՝ անասնագլխաքանակի մորթը պատշաճ ձևով իրականացնելու համար:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում արձանագրված դրական զարգացումները

- Գյուղատնտեսության բնագավառում նախորդ տարվա համեմատ համախառն արտադրանքի աճը կազմել է շուրջ 14.1 տոկոս, որի ավելացումը եղել է անասնապահական հիմնական մթերքների արտադրության, ձկնաբուծության, բանջարեղենի, պտուղների ծավալների մեծացման հաշվին:
- 2011 թվականին հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 34.8 տոկոսով, էականորեն բարձրացել է մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունավետությունը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Դրական տեղաշարժեր են գրանցվել պտղաբուծության բնագավառում: Պտղի համախառն արտադրանքը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 83.7 տոկոսով: Աճ է գրանցվել նաև բուսաբուծական մյուս մթերքների արտադրության ուղղությամբ:
- Վերամշակող ընկերությունների կողմից բանջարեղենի և պտղի մթերումները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը, համապատասխանաբար՝ 1.7 և 3.9 անգամ: Պտուղբանջարեղենի մթերումների դիմաց վճարումները կատարվել են ամբողջությամբ:
- Գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացին աջակցելու նպատակով Երևան քաղաքում, յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին, կազմակերպվել են գյուղատնտեսական մթերքների տոնավաճառներ:
- Զգալի աշխատանքներ են տարվել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին մատչելի պայմաններով վարկավորելու ուղղությամբ: Ծրագրի երկու փուլերով տրամադրվել է տոկոսադրույքի սուբսիդավորմամբ ավելի քան 25 հազ. միավոր վարկ՝ 17.4 մլրդ դրամ գումարով:
- Նախարարության նախաձեռնությամբ կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնք հնարավորություն են ընձեռում գյուղատնտեսությունում օգտագործվող տրակտորների, այլ տեխնիկայի, պարարտանյութերի, սերմերի, թունաքիմիկատների ներմուծումը, ինչպես նաև ներքին շուկայում, իրացումն ավելացված արժեքի հարկից ազատելով նպաստել այդ ռեսուրսների՝ գյուղատնտեսությունում տնտեսվարողների կողմից ձեռք բերման մատչելիությանը, դրանց ներմուծման և օգտագործման ծավալների ընդլայնմանը:
- Աջակցություն է ցուցաբերվել կոոպերատիվների տեխնիկական միջոցների հագեցվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հանրապետության անասնապահությամբ մասնագիտացված 5 մարզի 33 համայնքներում ստեղծվել են սպառողական կոոպերատիվներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2011 թվականի հունվարին ստեղծված սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից պատշաճ ուշադրություն և հսկողություն չի իրականացվել մսամթերքի վաճառքի նկատմամբ, ինչի արդյունքում վտանգի տակ է դրվել բնակչության առողջությունն ու կյանքը: Չնայած ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից 2011 թվականի ընթացքում Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվել է թվով 76 ստուգում, որոնց արդյունքում երեք տնտեսավարող սուբյեկտներում խախտումներ չեն հայտնաբերվել, արտադրական գործունեությունը կասեցվել է երեքի դեպքում, այլ խախտումներ թույլ տված մյուս սուբյեկտների նկատմամբ նշանակվել է տուգանք՝ ընդհանուր առմամբ 6 մլն 670 հազար ՀՀ դրամի չափով: Այնուամենայնիվ, ծառայությունը չի տրամադրել տեղեկատվություն ուսումնասիրություններ կատարելու հաճախականության վերաբերյալ. կարծում ենք, որ հսկողական ստուգումների հաճախականությունն ու թիվը պետք է մեծացնել: 2011թ. սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից

«ԳՈՒՄ»-ի շուկայի հարակից տարածքում իրականացված սանիտարահիգիենիկ պայմանների ստուգայցի ժամանակ փակվել են մսի վաճառքով զբաղվող մի քանի կետեր, և հետագա ստուգումները ցույց են տվել, որ վաճառվող մսի մեջ առկա են աղիքային ցուպիկի մանրէներ, մեզոֆիլ աերոբներ, ֆակուլտատիվ անաերոբներ և մարդու առողջության համար վնասակար մի շարք այլ տարրեր: Չնայած նման ստուգումների իրականցմանն ու խախտումների հայտնաբերմանը, այնուամենայնիվ, նման դեպքերը շարունակում են հանդիպել: Հաստատելով վերը նշված խախտման փաստը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մեր հարցմանն ի պատասխան հայտնել է, որ հաշվետու տարում ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակիցների կողմից Երևան քաղաքի մսի վաճառքի կետերում հայտնաբերվել է այլ (միասմբակավոր) կենդանիների մսի վաճառքի երկու դեպք: Մսեղիքը սահմանված կարգով օգտահանվել է, իսկ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակվել տուգանք՝ 500 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Նախարարությունը չի հստակեցրել, թե ինչ հաճախականությամբ է մշտադիտարկումներ անցկացրել՝ միաժամանակ փաստելով, որ այդ դիտարկումների և ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են պիտանիության ժամկետն անցած և անհայտ ծագման սննդամթերքի վաճառքի դեպքեր, որոնք իրական վտանգ կարող էին ներկայացնել սպառողի կյանքին ու առողջությանը: Ըստ ծառայության, հայտնաբերված ապրանքի հետագա իրացումը կասեցվել է, սակայն ծառայությունը չի նշել, թե ինչ քայլեր են ձեռնարկվել թերությունների վերացման ուղղությամբ: Խնդրի լուծման վերաբերյալ ազգային փորձագետները հայտնել են կարծիք, որ, օրինակ, անորակ մսի իրացումը կանխելու և սպառողների իրավունքները լիարժեք պաշտպանելու համար անհրաժեշտ է ստեղծել սպանդանոցային ցանց, քանի որ բակային մորթը հղի է տարատեսակ վտանգներով: Մտահոգիչ է նաև հաց արտադրող ընկերությունների գործունեության նկատմամբ հսկողության ոչ բավարար լինելու խնդիրը: Մասնավորապես, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ սննդամթերքը պետք է լինի փաթեթավորված, ունենա համապատասխան մակնշում, որտեղ նշված լինեն արտադրողի անունը, արտադրության հասցեն, բաղադրությունը, քաշը և այլն: Սակայն պրակտիկայում գրեթե բացառիկ դեպքերում են այդ կանոնները պահպանվում, և ստացվում է, որ սպառողները օգտագործում են իրենց համար անհայտ բաղադրություն և ծագում ունեցող արտադրանք: Բացի դրանից, կատարված մոնիտորինգի արդյունքերով պարզվել է, որ որոշ դեպքերում հացի քաշը նորմայից պակաս է եղել:

Ոլորտին վերաբերող բացթողումներն ու խնդիրները պայմանավորված են մի դեպքում գործող օրենսդրական դաշտի անկատարությամբ, այն է՝ ոլորտը կարգավորող անհրաժեշտ օրենսդրական կամ այլ իրավական ակտերի բացակայությամբ, մյուս դեպքում՝ գործող օրենսդրության գործնականում ոչ բավարար կիրառմամբ: Համապատասխան օրենքի բացակայության պատճառով չկարգավորված են մնում բոլոր այն իրավահարաբերությունները, որոնք վերաբերում են գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացմանը: Բացի դրանից, գործնականում չեն կատարվում «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման պահանջները, քանի որ,

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

բացառությամբ մի քանի մասնավոր սպանդանոցների, հանրապետությունում բացակայում է սպանդանոցների ցանց: Օրենսդրության կիրառումը կլիներ ավելի արդյունավետ, եթե մորթը սպանդանոցներում իրականացնելն ամրագրվեր օրենքում որպես պարտադիր պահանջ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը սահմանում է տուգանքի ձևով վարչական պատասխանատության բավականին ցածր չափեր, ինչն էլ իր հերթին խթան չի հանդիսանում իրավախախտումների կանխարգելմանը: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման թվով 24 դեպք: Դրական քայլ է «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի» մշակումը, որը հաստատվել է ՀՀ Նախագահի 2011 թվականի մայիսի 18-ի կարգադրությամբ: Նշված հայեցակարգի դրույթների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի իրականացումն ապահովող 2012-2014թթ. միջոցառումների ծրագիրը»:

Գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին մատչելի պայմաններով վարկավորման ուղղությամբ, ՀՀ կառավարության կողմից հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին» համապատասխան, գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որի 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ առավել աղքատ (անբարենպաստ) 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: Մեր հարցին ի պատասխան, թե ինչ չափանիշներից ելնելով են այդ 225 համայնքերը ճանաչվել առավել աղքատ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից հայտնել են, որ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի թիվ 349-Ն որոշմամբ հաստատվել է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը: Ծրագրում ներառվել են հանրապետության բոլոր համայնքները: Համայնքների համար ծրագրից օգտվելու սահմանափակումներ չեն եղել, միայն տոկոսադրույքի սուբսիդավորման տարբերակման համար ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ սահմանվել է առավել կարիքավոր 225 համայնքների ցանկը: Նշված կարգի համաձայն՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ», «Կոնվերս բանկ», «Արդշինինվեստբանկ» և «Պրո-Կրեդիտ բանկ» ՓԲԸ-ները 2011 թվականի ապրիլի 1-ից սկսած գյուղացիական տնտեսություններին տրամադրել են մինչև 3 միլիոն ՀՀ դրամ մինչև 2 տարի մարման ժամկետով տարեկան 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով արտոնյալ վարկեր, որոնց 4 տոկոսային կետը, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքի վարկառուների համար 6 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից: Մայր գումարի և տոկոսադրույքի մարման համար արտոնյալ ժամկետ է սահմանվել առնվազն 6 ամիսը: Ընդհանուր առմամբ 2011 թվականին նշված բանկերի կողմից վարկեր են տրամադրվել հանրապետության 837 համայնքի, որոնցից 179-ում տոկոսադրույքի սուբսիդա-

վորումը կազմել է 6 տոկոսային կետ, տրամադրված վարկերի քանակը կազմել է 25,2 հազար միավոր, իսկ վարկերի ընդհանուր գումարը՝ 17,42 մլրդ դրամ:

Կարևոր է նաև գյուղատնտեսական ապահովագրության ինստիտուտի ներդրումն ու ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտի ընդունումը, քանի որ գյուղատնտեսական ապահովագրության բացակայության պայմաններում գյուղացին մնում է չապահովագրված բնական աղետներից և զրկվում է ապահովագրավճարների դիմաց համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությունից: ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երկրորդ և երրորդ պարբերական համատեղ զեկույցում նշված է, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը շարունակում է մնալ բավականին խոցելի, ինչը պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների փոքր չափերով և մասնատվածությամբ: Խոցելիությանը նպաստող գործոններից է նաև հարաբերական սակավահողությունը, սակավաջրությունը, ենթակառուցվածքների թերզարգացածությունը և դրանց անհամապատասխանությունը շուկայական տնտեսության պայմաններին, փոխառու միջոցների համալրման դժվարամատչելիությունը, բնական աղետների առաջացման բարձր հավանականությունը: Համապատասխան ոլորտի ապահովագրությունը կարող է մեծապես նպաստել գյուղատնտեսության զարգացմանը, երաշխավորել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքի ընտրության ազատության իրավունքը, քանի որ հակառակ դեպքում գյուղատնտեսության ոլորտի խոցելիությունն ուղղակիորեն խոցելի է դարձնում գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքի ընտրության ազատության իրավունքը:

Պաշտպանին ուղղված դիմումներից մեկը վերաբերել է Ց. Հ.-ին պատկանող խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունից անկման ու հարկադիր ոչնչացման փաստին և վերջինիս փոխհատուցում չտրամադրելուն: Քաղաքացին չէր ստացել փոխհատուցում՝ անկված անասնագլխաքանակի ճշգրտման գործընթացի ձգձգման պատճառով: Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարը պատասխան գրությամբ հայտնել է, որ քաղաքացուն պատկանող խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունից անկման փաստը սահմանված կարգով արձանագրվել է, որը ենթադրում էր անկված կենդանիների դիմաց փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82 Ն որոշմամբ սահմանված կարգով, և առաջիկայում այդ նպատակով գումար նախատեսվելու և լիազոր մարմնին հատկացվելու դեպքում՝ նրա խնդրանքը հաշվի կառնվի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել և ներդնել գյուղատնտեսությունում պարտադիր ապահովագրական համակարգը, ինչը բխում է գյուղացիների շահերից և իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից:
- Մեծացնել սննդամթերքի (մասնավորապես հացի և մսի) որակի, պիտանելիության ժամկետների, մակնշման ապահովման նպատակով իրականացվող հսկողության պարբերականութունն ու արդյունավետությունը,

ինչը կնպաստի սպառողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանը:

- «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքին համապատասխան, առաջիկա տարիներին հանրապետության ողջ տարածքում ստեղծել մորթի սպանդանոցներ, ընդ որում, ավելի արդյունավետ կլինի, եթե սպանդանոցներում մորթն իրականացվի ոչ թե կամավորության, այլ պարտադիրության սկզբունքով:
- Սահմանել պատշաճ հսկողություն ՀՀ ներկրվող տարբեր տեսակի սերմացուների որակի նկատմամբ:
- Ձեռնարկել քայլեր տնտեսվարման ձևերի կատարելագործման, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացման միջոցով արտադրության ծավալների ավելացման ուղղությամբ:
- Բարելավել սննդամթերքի անվտանգության համակարգը, մասնավորապես՝ կատարելագործել օրենսդրական համապատասխան հիմքերը, զարգացնել տեխնիկական բազան, ավելացնել լաբորատորիաների թիվն ու բարձրացնել դրանց աշխատանքի որակը, իրականացնել համապատասխան կադրերի ուսուցումը:
- Շարունակել խթանել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին մատչելի պայմաններով վարկեր տրամադրելու քաղաքականությունը, մասնավորապես՝ ցածր տոկոսադրույքներով և հնարավորինս երկարաժամկետ: Առանց պետության ֆինանսական աջակցության գյուղատնտեսությունը չի կարող զարգանալ, իսկ վերջինիս զարգացումը հանգեցնում է երկրի տնտեսական համակարգի զարգացմանը:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը կոչված է խթանել տնտեսության ձևավորմանն ու նորարարությանը, ապահովել մրցակցային տնտեսության պայմանների ու սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացումը, ինչպես նաև մասնակցել զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, նվազեցնել տարածքային զարգացման անհամաչափությունները: Բացի այդ, նախարարությունը կոչված է մասնակցելու գործարարության, ներդրումների և արտահանման խթանմանը, գործարարության համար բարենպաստ և մրցունակ միջավայրի ապահովմանը, ինչպես նաև բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացմանը:

Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության, փոքր և միջին բիզնեսի կայացման, տնտեսության առանձին ճյուղերի խթանման ուղղությամբ Էկոնոմիկայի նախարարության կատարված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն վերլուծություններ կներկայացվեն 2012 թվականին՝ Պաշտպանի միջանկյալ զեկույցով: Մինչ այդ զեկույցի մշակումը և հրապարակումը, ներկայացվում են 2011 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Չի ապահովվել ոչ պարենային ապրանքների մակնշման, օգտագործման և պահպանման պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը:
- Նախարարության կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում՝ ոչ պարենային ապրանքների որակի և անվտանգության պահանջների վերահսկողության իրականացման ուղղությամբ:
- Չնայած նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումների, արդիական է մնացել սպառողների իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման խնդիրը:
- Չնայած որ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվել է տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների և նորմերի պահպանման պետական վերահսկողություն 221 տնտեսվարող սուբյեկտներում, այնուամենայնիվ, մասնագետների կողմից այն գնահատվել է ոչ բավարար և անհրաժեշտություն կա այն է առավել ակտիվացնելու:
- Առևտրի իրականացման վայրի կազմակերպման համար լիցենզիաներ տրամադրելիս նախարարության լիցենզավորման և թույլտվությունների գործակալության կողմից չի ցուցաբերվել միասնական մոտեցում այլոց իրա-

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

վունքների ու ազատությունների հնարավոր խախտմանը հանգեցնող հանգամանքների ուսումնասիրության և գնահատման գործընթացում:

- Բավարար չեն եղել հյուրանոցային ծառայությունների և մարզային հանգստի այլ ծառայությունների առաջարկի ավելացմանը, դրանց որակի և մրցունակության բարձրացմանը նպաստելուն ուղղված միջոցառումները:

Արձանագրված դրական զարգացումները

- Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները կրճատվել են՝ 169-ից դառնալով 96, ստեղծվել է լիցենզիաների ձեռքբերման էլեկտրոնային հնարավորություն:
- Ստուգումների ընթացքում 32 տնտեսվարող սուբյեկտներում հայտնաբերվել են ոչ պարենային ապրանքների մակնշմանը ներկայացվող պահանջների խախտումներ, որի արդյունքում տրվել են կարգադրագրեր չհամապատասխանող ապրանքների խմբաքանակների կասեցման վերաբերյալ, իսկ խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 7160000 դրամի չափով:
- Ընդլայնվել է բաժնետիրական ընկերությունների տնօրենների պատասխանատվության շրջանակը՝ դրանով իսկ ընդլայնելով ներդրողների պաշտպանվածությունը:
- Վիճակագրական տվյալների համաձայն՝ ընդլայնվել են զբոսաշրջության ծավալները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շարունակվել են խախտվել ապրանքների պարտադիր մակնշմանն առաջադրվող ՀՀ օրենսդրության պահանջները: Ստուգումների ընթացքում 32 տնտեսվարող սուբյեկտներում հայտնաբերվել են ոչ պարենային ապրանքների մակնշմանը ներկայացվող պահանջների խախտումներ, որի արդյունքում տրվել են կարգադրագրեր չհամապատասխանող ապրանքների խմբաքանակների կասեցման վերաբերյալ, իսկ խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 7160000 դրամի չափով: Ապրանքների մակնշման պահանջն ու դրա կիրառման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացումը կարևոր երաշխիք է հանդիսանում սպառողի իրազեկման իրավունքի իրացման, ինչպես նաև նրա կյանքի, առողջության և գույքի անվտանգության ապահովման համար:

Էկոնոմիկայի նախարարության գործունեությանն առնչվող խնդիրները հիմնականում վերաբերել են սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության բնագավառում միջոցառումների անհրաժեշտ ծավալի բացակայությանը, ինչի արդյունքում վտանգվում է առաջին հերթին սպառողների կյանքն ու առողջությունը, որն էլ իր հերթին էական խոչընդոտ է հանդիսանում պետության տնտեսական զարգացման և զբոսաշրջության խթանման գործընթացներում:

Սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով նախարարության կողմից համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել հանրությանը համացանցային կայքէջի միջոցով (2012թ. իրականացվող ստուգումների ծրագիր, կատարված ստուգումների արդյունքների եռամսյակային հաշվետվություններ, տեսչության նպատակները և գործող օրենսդրությունը, վտանգավոր ապրանքների և

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

սպառողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունները): Գործել է նաև թեժ գիծ, որով սպառողներին հնարավորություն է տրվել իրենց հուզող հարցերի վերաբերյալ դիմել տեսչություն: Այդուհանդերձ, նախարարության կողմից ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ հանրության իրազեկման գործառույթի և սպառողի իրազեկման իրավունքի ապահովման տեսանկյունից:

Նախարարությունը բավարար չափով չի ապահովել տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության նկատմամբ անհրաժեշտ պետական վերահսկողությունը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը փորձանմուշների գնման միջոցով կատարել է ընդամենը 17 փորձարկում, որի ընթացքում վերցվել է 92 փորձանմուշ: Հայտնաբերվել է 1 անհամապատասխանություն, որի արդյունքում արգելվել է ապրանքի հետագա իրացումը և տրվել է հանձնարարական բոլոր տնտեսվարող սուբյեկտներից ապրանքը հետ հավաքելու վերաբերյալ: Բացի այդ, նույն տեսչության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվել են տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների և նորմերի պահպանման պետական վերահսկողություն՝ 221 տնտեսավարող սուբյեկտներում, որտեղ 158-ում հայտնաբերվել են խախտումներ, իսկ խախտում թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ՝ 21 720 000 դրամի չափով:

Ստուգումների քանակների կրճատման քաղաքականությանը զուգահեռ անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով ակտիվ վերահսկողության իրականացումը կարող է էապես նվազեցնել սպառողների կյանքի ու առողջության համար վտանգավոր ապրանքների իրացումը և առավելագույնս նպաստել Նախարարության կողմից սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության գործառույթի իրականացմանը:

Մասնագետների կարծիքով առևտրի իրականացման վայրի կազմակերպման համար լիցենզիաներ տրամադրելիս նախարարության լիցենզավորման և թույլտվությունների գործակալության կողմից չի ցուցաբերվել միասնական մոտեցում այլոց իրավունքների ու ազատությունների հնարավոր խախտմանը հանգեցնող հանգամանքների ուսումնասիրության և գնահատման գործընթացում:

ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի թիվ 946-Ն որոշմամբ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-3-րդ մասերին համապատասխան սահմանված է հյուրանոցային տնտեսության օբյեկտների կամավոր որակավորման համակարգ (ներառյալ որակավորման չափանիշներ): Որակավորման առաջին հայտը ներկայացվել է 2006 թվականին և առ այսօր որակավորվել են 30 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (Հայաստանում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների շուրջ 5%-ը): Որակավորման համակարգի ներդրումը հետապնդում է հյուրանոցային ծառայությունների կայուն որակի ապահովման, սպառողների՝ հյուրանոցային ծառայությունների ընտրությանն աջակցելու, և հյուրանոցային տնտեսության օբյեկտների մրցունակության բարձրացման հիմնական

նպատակներ: Հաշվի առնելով, որ նշված նպատակների իրականացումն առաջին հերթին պայմանավորված է որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակի ավելացմամբ, ուստի, անհրաժեշտ է առավել ակտիվացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող միջոցառումներն այս ուղղությամբ:

Թեև 2011թ. ընթացքում շոշափելի աճ է արձանագրվել ներգնա և ներքին զբոսաշրջության ծավալներում, մշակվել և իրականացվել են միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և առանձին մարզերի ու համայքների՝ որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջավայրերի ներկայացմանն ու խթանմանը, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության մեջ Հայաստանի ինտեգրմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր, սակայն, զբոսաշրջության դինամիկ զարգացման առանձնահատկություններից և համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության մեջ նորանոր մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությունից ելնելով՝ գտնում ենք, որ պետք է առավել ակտիվացնել Հանրապետության մարզերում և համայնքներում զբոսաշրջությանն ուղղված զարգացման ծրագրերի իրականացումը:

Հանրապետության մի շարք մարզեր պոտենցիալ զբոսաշրջության վայրեր են, սակայն, տեղական ներդրումների պակասն ու վստահությունը, պետության կողմից մայրաքաղաքային մակարդակին համապատասխան հարկային քաղաքականություն իրականացնելն արդեն իսկ դանդաղեցնում է համապատասխան վայրերում զբոսաշրջության զարգացման գործընթացը: Մարզերը զբոսաշրջային գոտի դարձնելը էական ազդեցություն կթողնի մարզային ենթակառուցվածքների զարգացման, ծառայությունների մատուցման որակի բարձրացման, գործազրկության նվազման վրա և այլն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուժեղացնել հսկողությունը ոչ պարենային ապրանքների մակնշման, օգտագործման և պահպանման պահանջների պահպանման նկատմամբ:
- Ձեռնարկել միջոցառումներ սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
- Ակտիվացնել վերահսկողությունը՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության ստուգման նպատակով:
- Ձեռնարկել միջոցներ առևտրի իրականացման վայրերի կազմակերպման գործունեության լիցենզիայի տրամադրման ընթացակարգերի թափանցիկության ապահովման, մասնավորապես՝ էլեկտրոնային փաստաթղթավորման համակարգ ներդնելու ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցներ՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացի խթանման, ինչպես նաև մարզերում նոր զբոսաշրջային գոտիներ ստեղծելու ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության խնդիրներն ու նպատակներն են էներգետիկայի և էներգասպառման բնագավառում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության ապահովումը, ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը, ընդերքի օգտագործման տրամադրման ապահովումը, օգտակար հանածոների ողջամիտ օգտագործման, ուսումնասիրման և հանքարդյունահանման արդյունավետ իրականացմանը նպաստելը, ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողության ապահովումը և այլն:

Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում հաճախ բարձրացված խնդիրներից է ընդերքն ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու լիցենզավորման գործընթացում առկա թերությունները: Մասնագիտացած որոշ կազմակերպությունների գնահատմամբ՝ հանքարդյունահանման լիցենզավորման գործընթացում հաշվի չի առնվել հասարակության կարծիքը, չի կատարվել անհրաժեշտ վերլուծություն նման գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության տեսանկյունից: Մինչդեռ, ըստ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (6 նոյեմբերի 2002թ.), որն ուժը կորցրել է 2012թ. հունվարի մեկին, սահմանվում էր հասարակական միավորումների ու քաղաքացիների ընդերքի պահպանության հետ կապված հարցերի քննարկմանը մասնակցության և պետական մարմինների կողմից նրանց առաջարկությունները ըստ ամենայնի հաշվի առնելու պարտավորության մասին դրույթը:

Լիցենզիավորման գործընթացում խախտումներ են արձանագրվել նաև ՀՀ վերահսկիչ պալատի կողմից: ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից չի իրականացվել պատշաճ վերահսկողություն ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից ընդերքօգտագործման օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Վերահսկիչ պալատի ուսումնասիրություններով խախտումներ են արձանագրվել ընդերքօգտագործող ընկերությունների կողմից օրենքով և «Կոնցեսիոն վճարի չափը և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 562-Ն որոշմամբ սահմանված կոնցեսիոն վճարների հաշվարկման և ՀՀ պետական բյուջե վճարման գործ-ընթացում: Թվով 20 հանքարդյունահանման լիցենզիա ունեցող ընկերությունների համար հաշվարկված կոնցեսիոն վճարը կազմել է 158.979.6 հազ. դրամ, սակայն պետական բյուջե է վճարվել է 79,812.2 հազ. դրամը: Արձանագրված խախտումների քանակն ու բնույթն ինքնին վկայում է Նախարարության կողմից համապատասխան ընկերությունների նկատմամբ իրականացված ոչ պատշաճ հսկողության մասին:

Էլեկտրաէներգիայի օգտագործման անվտանգության ապահովման բնագավառում բավարար չի եղել Նախարարության կողմից տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված անվտանգության նորմերի պահպանման

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման մակարդակը: Ըստ Նախարարության պաշտոնական տվյալների՝ 2011թ. էներգետիկայի բնագավառի ընկերությունների էներգատեղակայանքներում նախարարության աշխատակազմի Էներգետիկայի պետական տեսչության կողմից իրականացված տեխնիկական ստուգումների արդյունքներով 10 պաշտոնատար անձանց նկատմամբ թույլ տված վարչական իրավախախտումների համար իրականացվել է վարույթ և նշանակվել են տուգանքներ: Խախտումներ են արձանագրվել նաև բնակիչների էլեկտրաէներգիայի ծախսման պատշաճ արձանագրման բնագավառում: Նախարարության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մասնագետների կողմից իրականացված համատեղ ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել և չեղյալ են համարվել 124 բնակիչ-բաժանորդների քարտերում առկա էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ անճշտությունները: Տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերի, էներգիայի մատակարարման կանոնների և մատակարար-բաժանորդ(բնակիչ) պայմանագրային պարտավորությունների խախտման կամ ոչ պատշաճ կատարման համար համապատասխան ընկերությունների 5 աշխատակիցների նկատմամբ հարուցվել են քրեական գործեր, 34 աշխատակիցներ հեռացվել են զբաղեցրած պաշտոններից, 206-ի նկատմամբ կիրառվել են կարգապահական պատասխանատվության միջոցներ: Վերոգրյալ վիճակագրությունն ինքնին վկայում է քաղաքացիների կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված անվտանգության նորմերի պահպանման ապահովման, ինչպես նաև մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացման բնագավառում հետևողական և արդյունավետ քայլերի ձեռնարկման անհրաժեշտության մասին:

Ընդերքօգտագործման ոլորտի մտահոգիչ հիմնահարցերից է շարունակում մնալ ընդերքօգտագործողների կողմից բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությունը:

2011թ. ընթացքում բնապահպանական և իրավապաշտպան կազմակերպություն-ների կողմից պարբերաբար բարձրացվել է նաև «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների չապահովման խնդիրը, օրենսգրքի փակ և հապճեպ ընդունման գործընթացը: Թեև ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը հայտնել է, որ 2010թ. սեպտեմբերի 23–ին և հոկտեմբերի 8–ին անց է կացվել ՀՀ ընդերքի մասին նոր օրենսգրքի նախագծի հասարակական լսումներ Էկոլոգիական հասարակական դաշինքի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև Նախարարությունը մասնակցել է նախագծի շուրջ մի քանի մարմինների և կազմակերպությունների կողմից անցկացված քննարկումներին (բնապահպանական ուղղվածության խնդիրներն ու առաջարկությունները փոխանցվել են ՀՀ բնապահպանության նախարարությանը, որի կողմից ամփոփված առաջարկությունների փաթեթը Նախարարության կողմից ամբողջությամբ ներառվել է նախագծում), այնուամենայնիվ որոշ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից արտահայտված մտահոգություններն ու դժգոհությունները գործընթացի վերաբերյալ վկայում են, որ քաղաքացիական

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

հասարակության լիարժեք մասնակցություն չի կազմակերպվել, իսկ հանրային կարծիքը հիմնականում հաշվի չի առնվել:

ՀՀ օրենսդրությամբ մինչ օրս չեն կարգավորվել հանքարդյունաբերության թափոնների՝ մակաբացման շերտի ապարների և պոչանքների հետ կապված հարաբերությունները: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1 մասի համաձայն օրենքի գործողությունը տարածվում է արտադրության և սպառման ընթացքում գոյացած թափոնների գործածության վրա, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն օրենքի գործողությունը չի տարածվում ռադիոակտիվ թափոնների, հոսքաջրերին խառնվող և բնական ջրատարներ թափվող նյութերի, արտանետման աղբյուրներից անջատվող գազային խառնուրդների հետ մթնոլորտ արտանետվող նյութերի, հանքարդյունահանող կազմակերպությունների մակաբացման շերտի ապարների վրա: Նշված թափոնների գործածության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով: Վերոնշյալ օրենքի ընդունմանը հաջորդող ութ տարիների ընթացքում չի ընդունվել հիշատակված հարաբերությունները կարգավորող որևէ իրավական ակտ, ինչի հետևանքով ընդերքոգտագործող կազմակերպությունները հանքարդյունաբերական թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու համար փաստացիորեն ազատվել են բնապահպանական վճարներ վճարելու պարտականությունից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել գործուն միջոցներ ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու ընթացակարգի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների կանխարգելման և բացառման ուղղությամբ:
- Բարձրացնել ընդերքի օգտագործման և պահպանման բնագավառում օրենքների և իրավական այլ ակտերի ընդունման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը:
- Ուժեղացնել վերահսկողությունը ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից օրենքներով, իրավական այլ ակտերով և պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ:
- Հետևողական քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգիայի օգտագործման անվտանգության ապահովման, քաղաքացիների կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի պահպանման, ինչպես նաև մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի խնդիրն է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը: Կոմիտեն իրականացնում է գույքի (անկախ սեփականության ձևից) նկատմամբ իրավունքների, սահմանափակումների և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պետական գրանցում, ապահովում է անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների մասին տեղեկատվության հավաստիությունը, ամբողջականությունը, մատչելիությունը, արդիականությունը և հրապարակայնությունը, մշակում է բնագավառի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, տրամադրում է թույլտվություններ գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման համար, և այդ աշխատանքների նկատմամբ իրականացնում վերահսկողություն:

2011 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի (այսուհետ՝ Կադաստր) պետական կոմիտեն որոշ դեպքերում քաղաքացիներին տրամադրել է համակարգում առկա տեղեկատվություն, որը սակայն լիարժեք չի եղել պահանջվող գործառույթի իրականացման համար:
- Կադաստրը պետական գրանցման ժամանակ քաղաքացիներից որոշ դեպքերում պահանջել է այնպիսի փաստաթղթեր կամ պետական գրանցումը մերժել է այնպիսի հիմքերով, որոնք նախատեսված չեն օրենսդրությամբ:
- Այգեգործական նպատակներով նախկինում քաղաքացիներին հատկացված և վերջիններիս կողմից երկարաժամկետ չտնօրինված հողամասերի մի մասը ներառվել է համայնքների հողային հաշվեկշռում և համայնքների ղեկավարների կողմից հատկացվել է այլ անձանց: Այս դեպքերում Կադաստրի կողմից հաշվի չեն առնվել այգեգործական ընկերությունների կողմից հողամասերը նախկինում քաղաքացիներին տրված լինելու հանգամանքը, և դրանց նկատմամբ գրանցվել են նոր սեփականատերերի իրավունքները:
- Որոշ դեպքերում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ անձանց տրված տեղեկատվությունը չի համապատասխանել իրականությանը:
- Կադաստրի աշխատակիցները գույքի կադաստրային արժեքը գնահատելիս որոշ դեպքերում չեն առաջնորդվել օրենսդրությամբ նախատեսված գործակիցներով:
- Ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին հակասող նորմերը վերանայելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

առաջարկների քննարկումներն իրականացվել են ուշացումով (օրինակ՝ ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշումը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի և Երևան քաղաքապետի 30.10.2008թ. համատեղ պաշտոնական պարզաբանումը):

Արձանագրված դրական զարգացումները

- 2011 թվականի ընթացքում անշարժ գույքի կադաստրի համակարգում իրականացվել են համալիր բարեփոխումներ, որոնք միտված են եղել համակարգի գործառույթների թափանցիկության բարձրացմանը, վարչարարության պարզեցմանը, պաշտոնյա-քաղաքացի անմիջական շփման անհրաժեշտության բացառմանը, հետևաբար՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:
- 2011թ. ապրիլի 25-ից դիմողների համար հնարավորություն է ընձեռվել գանձվող վճարների նկատմամբ գործակիցների կիրառման միջոցով գրանցման վկայականները ստանալ արագացված կարգով (առավել կարճ ժամկետներում):
- Վերացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված անշարժ գույքի գործարքների պարտադիր նոտարական վավերացման պահանջը (բացառությամբ միակողմ գործարքների), այդ մասով ներմուծվել է կադաստրի համակարգի կողմից ստորագրությունների իսկության ճանաչմամբ գործարքների կնքման ինստիտուտ, և նշված կարգով գործարքների կնքումը կադաստրի համակարգում իրականացվել է անվճար:
- Կադաստրի սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրմամբ դիմողներին հնարավորություն է տրվել իրավունքների գրանցման ու տեղեկատվության տրամադրման դիմումները ներկայացնել և փաստաթղթերը ստանալ իրենց ընտրությամբ՝ կադաստրի համակարգի ցանկացած սպասարկման գրասենյակում (նույնիսկ առանց սպասարկման գրասենյակ ներկայանալու՝ էլեկտրոնային փոստով) անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից:
- Վերացվել է պետական գրանցում ստացած անշարժ գույքի նկատմամբ տեղեկատվություն տրամադրելու կամ նման գույքի նկատմամբ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման դեպքում գույքի չափագրման կամ տեղազննության պարտադիր պահանջը:
- Վերացվել է իրավունքների պետական գրանցման ու տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացման մասին դիմումների՝ ըստ գույքի գտնվելու վայրի ներկայացման պահանջը, ինչպես նաև համակարգի ծառայություններից օգտվելու համար դիմողներին սպասարկելու նպատակով ստեղծվել են հատուկ մասնագիտացված կառույցներ՝ սպասարկման գրասենյակներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ պաշտոնական վիճակագրության 2011 թվականի ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի

աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ ՀՀ դատարաններում քննված քաղաքացիական և վարչական գործերով կայացվել է 773 վճիռ: Կայացված 773 վճիռներից բավարարվել են 351-ը, որից 95-ով դատական վեճերի հիմքերը եղել են իրավունքների գրանցման համար ներկայացվող փաստաթղթերով կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների մերժումները, որոնք հիմնականում տրվել են անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերի բացակայության, անշարժ գույքի փաստացի և ներկայացված տվյալների անհամապատասխանության, հողամասերի համադրման պատճառով, և վճռի առկայության պարագայում հնարավոր է դարձել նշված գործերով ապահովել իրավունքների պետական գրանցում: Սա փաստում է, որ առանձին դեպքերում պետական գրանցման վերաբերյալ կադաստրի մերժումներ չեն բխում օրենքի պահանջներից:

Միասնական տեղեկանքի անհրաժեշտությունն առաջանում է անշարժ գույքի հետ կապված գործարք իրականացնելու դեպքում, երբ անհրաժեշտ է տեղեկանք այն մասին, թե տվյալ գույքի նկատմամբ ինչ իրավունքներ և սահմանափակումներ կան գրանցված: Ծառայության վճարը կազմում է հազարից մինչև 80 հազար դրամ՝ կախված մակերեսի չափից, գույքի գործառնական նշանակությունից և գտնվելու վայրից: Սահմանված կարգի համաձայն տեղեկանքը պետք է տրամադրվի դիմում ներկայացնելուց հետո երկրորդ օրը: Սակայն եղել են դեպքեր, երբ սահմանված ժամկետում տեղեկանքը տրամադրելու համար քաղաքացիներից պահանջվել են հավելյալ գումարներ:

Խնդիրներ են առաջանում նաև աղետի գոտու բնակիչներին անօթևանների ցուցակում հաշվառելու կամ վերահաշվառելու ժամանակ: Որպեսզի երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքը կարողանա մասնակցել աղետի գոտում ընթացող բնակարանների բաշխման գործընթացին, պետք է բազմաթիվ փաստաթղթերից և տեղեկանքներից բաղկացած փաթեթ ներկայացնի բնակարանների բաշխման հանձնաժողովի աշխատանքային խմբին: Այդ փաստաթղթերը հայթայթելու համար տվյալ անօթևան ընտանիքը որոշակի ծախսեր պետք է կատարի: Բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների հոգսը թեթևացնելու նպատակով պետությունը մի շարք գործառույթներ վերցրել է իր վրա, այդ թվում՝ սեփականության մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրից տեղեկանքների ստացումը: Պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած կիսաքանդ տնակում բնակվող և երկու տասնյակից ավել ընտանիքների, նույնիսկ մի քանի տարի շարունակ վերահաշվառելուց հետո, բնակարանների բաշխման հանձնաժողովում պատասխանել են, որ պետությունը բնակարան չի կարող հատկացնել, քանի որ համաձայն ՀՀ անշարժ գույքի կադաստրի կողմից տրված տեղեկանքի՝ Երևանում կամ այլ մարզում դիմողն ունի բնակարան: Խնդիրն այն է, որ նման տեղեկանքները տրամադրում են անուն-ազգանունների և անձնագրային տվյալների հիման վրա, և, որոշ դեպքերում, տարբեր անձանց անուն-ազգանունները համընկնում են, իսկ անձնագրային տվյալները կադաստրի համակարգի բազայում բացակայում են: Նման դեպքերում անօթևան համարվող ընտանիքը ստիպված պետք է ծախսի որոշակի ժամանակ և նոր՝ ճշգրտված տվյալներ ներկայացնի բնակբաշխման հանձնաժողովին և վերականգնի իր իրավունքները:

Ըստ «Շիրակ կենտրոն» ՀԿ տեղեկատվության գյումրեցի անօթևան, նպաստառու Վ. Պ.-ի հինգ անձից բաղկացած ընտանիքը Գյումրու անօթևանների հերթացուցակում

հաշվառված է 901 հերթական համարի տակ, ստանալու է մեկսենյականոց բնակարան: Բնակբաշխման հանձնաժողով էին ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերն ու սպասել իրենց հերթին: Սակայն նրանց զանգահարել են բնակբաշխման հանձնաժողովին աջակցող աշխատանքային խմբից և հայտնել, որ ընտանիքի անդամների անունով չորս հատ Երևանում և մեկ հատ էլ Գյումրիում սեփական բնակարան ունենալու մասին տեղեկանք է ստացվել կադաստրից, այդ թվում՝ նրանց 12-ամյա աղջկա անունով նշվել է միանգամից 2 բնակարան Երևանում: Անօթևան ընտանիքը ստիպված պետք է ապացուցի, որ այդ բնակարանները իրենցը չեն, հակառակ պարագայում՝ հինգ անձով մեկսենյականոց բնակարանի սպասող ընտանիքը որպես ոչ կարիքավոր կզրկվի բնակարան ստանալու իրավունքից:

Կադաստրի կոմիտեի նախաձառնությամբ ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշման մեջ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ կատարված փոփոխություններով վերացվել է նաև քաղաքային բնակավայրերում օրինական հողամասերին կից՝ ինքնակամ զբաղեցված հողամասերի ու դրանցում առկա շինությունների առկայությամբ իրավունքների պետական գրանցման սահմանափակումը, որի արդյունքում, ըստ կադաստրի կողմից ներկայացված տվյալների, 2011 թվականին ինքնակամ կառույցների կամ ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայության պատճառաբանությամբ իրավունքի գրանցման մերժումներ չեն եղել:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մի քանի տարի շարունակ բարձրացվել է այդ հարցը, գրություններ են ուղղվել ՀՀ կառավարությանն ու կադաստրի պետական կոմիտեին՝ հայտնելով, որ այդ փոփոխության անհրաժեշտությունն առկա է, քանի որ միևնույն իրավահարաբերության նկատմամբ սահմանափակելով քաղաքային համայնքում բնակվող անձանց իրավունքները՝ ցուցաբերվում է խտրական մոտեցում: Սակայն Պաշտպանի առաջարկը ուշացումով է քննարկվել և շարունակվել են քաղաքային համայնքում ինքնակամ շինության առկայության դեպքում օրինական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժումները՝ արդարացի դժգոհություն առաջացնելով բնակիչների մոտ:

Խնդրահարույց է նաև գույքի կադաստրային արժեքի գնահատումը, որը ՀՀ օրենսդրության համաձայն կատարում է Կադաստրի պետական կոմիտեն: «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված են այն գործակիցները, որոնցով պետք է ղեկավարվեն Կադաստրի աշխատակիցները գույքը գնահատելիս: Գործակիցները կապված են անշարժ գույքի գտնվելու վայրի, շինանյութի, հարկայնության, ծավալների, գործառնական նշանակության հետ: Նշված հարցերը գնահատման ժամանակ չեն ուսումնասիրվում և առանձին դեպքերում թույլ են տրվում խախտումներ: Գործնականում կադաստրի աշխատակիցները անշարժ գույքը գնահատելու համար բավարարվում են միայն արտաքինից շինությանը նայելով: Ընդ որում, որպես կանոն հաշվի են առնվում նաև այլ՝ օրենքում նշված գործակիցների հետ չկապված հանգամանքներ: Օրինակ՝ արդյոք շքեղ է շենքը, թե ոչ, որքան եկամուտ է ապահովում տնտեսվարող օբյեկտը և այլն: Արդյունքում, որպես արժեք նշվում են թվեր, որոնք իրականությունից բավականին հեռու են: Քաղաքացիներն, իրենց հերթին, չեն տիրապետում բավարար գիտելիքների՝ իրենց գույքն անձամբ գնահատելու համար: Տվյալ դեպքում խախտվում է քաղաքացու իրավունքը՝ միայն օրենքով նախատեսված հարկեր վճարելու առումով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի դեմ ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են իրավունքի գրանցման ընթացքում առաջացող խնդիրներին և տեղեկատվության տրամադրմանը: 2010թ. համեմատ 2011թ. ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի դեմ ուղղված բողոքների թիվը նվազել է: Կադաստրի պետական կոմիտեի կողմից ստացված գրությունները շարադրված են եղել հնարավորինս սպառիչ և հիմնավորված, պահապանվել են գրություններում սահմանված ժամկետները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անշարժ գույքի քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությունը կանոնակարգելու նպատակով ընդունել իրավական ակտեր, սահմանել ուղեցույցներ, չափորոշիչներ, ինչպես նաև քննարկել կատարվող աշխատանքների վարձատրության առավելագույն չափ սահմանելու հնարավորության հարցը:
- Ուժեղացնել հսկողությունը տեղեկատվության տրամադրման գործընթացի նկատմամբ:
- Պարբերաբար իրականացնել մոնիթորինգ կադաստրի աշխատակիցների կողմից գույքի կադաստրային արժեքը գնահատելիս օրենսդրությամբ նախատեսված պահանջները պահպանելու նպատակով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունն ապահովում է անձի, հասարակության ու պետության անվտանգությունը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից և այլն: Հաշվի առնելով ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) մարմինների գործունեության բնույթն ու առանձնահատկությունները՝ այս մարմնի գործունեության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը մատչելի չի եղել:

2011 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

ՀՀ արդարադատության նախարարության կազմում ընդգրկված «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը քաղաքացիների մեծամասնության կողմից ընկալվում է որպես Ազգային անվտանգության ծառայության կառույց, և իր ամենօրյա կազմակերպչական բնույթի լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է ԱԱԾ ներքին կանոնների համաձայն: Չնայած եղել են որոշակի քննարկումներ, այնուամենայնիվ իրավիճակը մնացել է նույնը և խնդրին հնարավոր կլինի լուծում տալ ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից դուրս բերելով միայն:

Առանձին դեպքերում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են դիմել քաղաքացիներ և հայտնել, որ սահմանային անցակետի տեսուչները՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերին ընդունված թիվ 821 որոշման պահանջները, վերցրել են քաղաքացու անձնագիրն առանց դրա հիմքերն ունենալու (առկա է եղել ենթադրաբար կեղծ վիզա կամ այլ պատճառ)՝ հետագայում հրաժարվելով այն վերադարձնել: Հետագա խնդիրներից խուսափելու համար նշված քաղաքացիները չեն ցանկացել իրենց գործերին ընթացք տալ: Չնայած ԱԱԾ պատրաստակամությանը՝ բողոքի առկայության պայմաններում ուսումնասիրելու նմանատիպ ցանկացած դեպք և խստորեն պատժելու կարգազանց տեսուչներին, այնուամենայնիվ գտնում ենք, որ անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ բացառելու համար նման դեպքերը:

Եղել են դեպքեր, երբ ծառայությունը մերժել է քաղաքացիներին տրամադրել իրենց վերաբերյալ տեղեկություններ: Այսպես, քաղաքացին ցանկացել է ԱԱԾ-ից վերցնել տեղեկանք այն մասին, թե վերջին անգամ երբ է հատել պետության օդային կամ ցամաքային սահմանը, սակայն ստացել է պատասխան՝ պատճառաբանությամբ, թե տվյալները չեն պահպանվում: ԱԱԾ-ն ներկայացրել է հիմնավոր պատճառաբանումներ, որ հարցված տեղեկատվությունը օբյեկտիվ պատճառներով և օրենքով սահմանված ժամկետներին համապատասխան չի պահպանվել: Գտնում ենք, որ պետք է համապատասխան իրավական ակտերով սահմանվի այն բոլոր դեպքերն ու պայմանները,

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

երբ քաղաքացիները կարող են ստանալ վերոնշյալ տեղեկությունը, քանի որ անձին իր վերաբերյալ տեղեկությունների չտրամադրումը հանգեցնում է արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի խախտմանը:

Պաշտպանին հասցեագրված ԱԱԾ-ի դեմ ուղղված դիմում-բողոքները որոշ դեպքերում վերաբերել են նաև ԱԱԾ քննչական վարչության աշխատակիցների գործողություններին՝ օբյեկտիվ, լրիվ ու բազմակողմանի քննություն չիրականացնելուն: Պաշտպանի լիազորությունները նախաքննության ընթացքում խիստ սահմանափակ են, ինչի պատճառով էլ քաղաքացիների դիմումներով հիմնականում կայացվել է կա՛մ դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին, կա՛մ դիմումը չքննարկելու մասին որոշումներ:

Դրական է այն, որ 2011 թվականի ընթացքում ԱԱԾ մարմինների օպերատիվ աշխատանքների արդյունքում կանխվել են մի շարք լրտեսության դեպքեր, բացահայտվել են այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից կաշառակերության դեպքեր, մաքսանենգության դեպքեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը ապօրինի կերպով հատելու դեպքեր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել միջոցներ ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկն առանձնացնելու կամ տեղափոխելու ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցներ բացառելու համար քաղաքացիների՝ անձը հաստատող փաստաթուղթ հանդիսացող անձնագիրը առանց օրինական հիմքերի վերցնելու դեպքերը:
- Շարունակել և խստացնել հսկողությունը անձանց ԱԱԾ հրավիրելու կամ բերման ենթարկելու դեպքում քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված իրենց բոլոր իրավունքների պաշտպանության նկատմամբ:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ապահովում է ընտրությունների կազմակերպման և անցկացման աշխատանքները: Հանձնաժողովը հավաքում, մշակում և վերլուծում է ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հրապարակում պաշտոնական որոշումները և այլն:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի ընթացքում 97 համայնքներում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի ընտրություններ, իսկ 44 համայնքներում՝ համայնքի ավագանու անդամի ընտրություններ: Նշված ընտրություններից 38 համայնքներում տեղի ունեցած համայնքի ղեկավարի ընտրությունները և 25 համայնքներում՝ համայնքի ավագանու անդամի ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են 2011 թվականի մայիս ամսից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի հիման վրա:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը Պաշտպանին հայտնել է, որ 2011 թվականին տեղի ունեցած ընտրությունների վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով որևէ դիմում կամ բողոք չի ներկայացվել: Վերոնշյալ ընտրությունների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներ ևս չեն ներկայացվել: Մեր աղբյուրների ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների համաձայն՝ էական խախտումներ նշված ընտրությունների ընթացքում չեն գրանցվել:

Հայաստանում ընտրելու իրավունքի իրականացման և պաշտպանության, ընտրությունների կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման, մասնավորապես՝ ՀՀ ազգային ժողովի 2012 թվականի մայիս ամսին կայանալիք ընտրությունների վերաբերյալ առավել մանրամասն վերլուծություններ կներկայացվեն 2012 թվականին՝ Պաշտպանի միջանկյալ կամ տարեկան զեկույցում:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն (այսուհետ՝ Նախարարություն) ապահովում է մարդու կրթության իրավունքի իրացումը, մարդու, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը, ուսումնական հաստատություններում պետական կրթական քաղաքականության սկզբունքների պահպանումը, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ և այլն: Բացի այդ, Նախարարությունը պարտավոր է ապահովել հանրակրթության համակարգում ազգային փոքրամասնությունների՝ մայրենի լեզուներով կրթություն և դաստիարակություն ստանալու իրավունքը:

2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Նախարարությունը ժամանակին բավարար քայլեր չի ձեռնարկել հանրակրթական դպրոցների դասագրքերի մրցույթների կազմակերպման ու անցկացման իրավական հիմքերը հստակ սահմանելու ուղղությամբ:
- Հրատարակվող դասագրքերն անհրաժեշտ փորձաքննության չենթարկելու պատճառով, դրանցում, որոշ դեպքերում, առկա են եղել խմբագրական, ուղղագրական և տպագրական սխալներ, որի հետևանքով խախտվել են աշակերտների պատշաճ կրթություն ստանալու իրավունքը:
- Չնայած, որ յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեով նախատեսվում են ֆինանսական միջոցներ ուսումնական հաստատությունները ջեռուցման համակարգով ապահովելու համար, այդուհանդերձ բազմաթիվ դպրոցներում չլուծված է մնացել ձմռան ամիսներին դասասենյակներն անհրաժեշտ ջերմաստիճանով ապահովելու խնդիրը, որի պատճառով իրենց առողջության մասին մտածող և դպրոց չհաճախող երեխաները հայտարարվել են անհարգելի պատճառով չներկայացած: Հատկապես այն դպրոցները (հիմնականում գյուղերում), որտեղ աշակերտների թիվը քիչ է (դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվաքանակից ելնելով), չեն ապահովվել անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով և նյութերով: Գյուղերում գտնվող դպրոցները չեն ապահովվել սննդի մատուցման ծառայություններով:
- Չնայած որ ուսումնական հաստատություններում կոռուպցիան բացառելու նպատակով նախարարության կողմից մշտապես իրականացվել են նպատակաուղղված միջոցառումներ, այնուամենայնիվ, դրանք բավարար չեն եղել կրթության ոլորտում կոռուպցիոն, ինչպես նաև դպրոցներում դրամահավաքության դեպքերը կանխելու և բացառելու համար:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- ԿԳՆ-ն նույն 7 հասարակական կազմակերպություններին է տրամադրել մոտ 365 միլիոն դրամ: Ընդհանուր գումարի մոտ 38%-ը տրամադրվել է միայն մեկ կազմակերպության՝ «Դասական երաժշտության աջակցություն» ՀԿ-ին, որի գործունեության ոլորտը հիմնականում վերաբերում է մշակութային խնդիրներին: Ըստ նախարարության՝ այդ կազմակերպությունները իրականացրել են հայտով նախատեսված կրթադաստիարակչական աշխատանքներ:
- Նախարարության կողմից թերի վերահսկողություն իրականացնելու հետևանքով որոշ դեպքերում դպրոցների հաստիքացուցակներում ընդգրկվել են տնօրենների ազգականներ կամ ծանոթներ, որոնք ոչ միայն չեն դասավանդել, այլ նաև չեն հաճախել դպրոցներ, որի հետևանքով պետական բյուջեից ծախսվել են ավելորդ գումարներ: Չնայած այս ամենի, 2011թ. ՀՀ կրթության պետական տեսչություն հասցեագրված դիմումներով ստացված ահազանգերում դիմումատուները ընդամենը նշել են դրամահավաքության 12 դեպք, դրամաշորթության կամ կոռուպցիայի 11 դեպք, որոնց ուսումնասիրության ընթացքում հիմնականում որևէ հաստատող արդյունք չի արձանագրվել:
- Ըստ մեր աղբյուրների ԲՈՒՀ-երում կասեցվել է հայցորդության ձևակերպումը, չնայած որևէ իրավական ակտով այն չի դադարեցվել և ըստ նախարարության այն գործում է և կարգավորված է համապատասխան իրավական ակտերով:
- Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու վերաբերյալ կառավարության որոշումների նախագծերը որպես պաշտպանության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծեր ըստ ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրի Նախարարությունը նախքան կառավարություն ներկայացնելը պետք է ներկայացներ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ՝ կարծիքի: Նշված ՀՀ կառավարության որոշումների նախագծերը չեն համաձայնեցվել Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի հետ, իսկ առանձին դեպքերում չեն ներկայացվել ՀՀ Նախագահի աշխատակազմ:
- Համընդհանուր ներառական կրթություն ապահովելու դանդաղ ընթացքի հետևանքով շարունակվել են խախտված մնալ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների՝ հավասար պայմաններում կրթություն ստանալու իրավունքը:
- Հատկապես մարզերում Նախարարությունը անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել իր թեժ գծի առկայության մասին իրազեկման աշխատանքների կապակցությամբ (նախարարության «Թեժ գծով» ընդունվել է 138 ահազանգ, որից 114-ը՝ Երևանի, 24-ը՝ մարզերի դպրոցների վերաբերյալ, քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների ընդհանուր քանակը եղել է 4632):

Արձանագրված դրական զարգացումները

- Ներառական դպրոցների ցանկն ավելացել է 15-ով՝ հանրապետությունում կազմելով 81:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության բարելավման նպատակով ՀՀ կառավարության որոշման համաձայն Տավուշի մարզում սկսվել է համընդհանուր ներառական կրթության կազմակերպման փորձնական ծրագրի իրականացումը:
- Նախարարությունը իրականացրել է որոշ ծրագրեր՝ ուղղված որակյալ կրթության բարելավմանը. ուսուցիչների և տնօրենների վերապատրաստում, շենքերի վերանորոգում, գույքի թարմացում և այլն:
- 2011-2012 ուսումնական տարվանից հանրապետության դպրոցներում 2-րդ դասարանից սկսած ուսումնական պլանով ներդրվել է «Շախմատ» առարկան:
- Մշակվել և հաստատվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացը 10-11-րդ դասարանների համար:
- Հանրակրթական դպրոցների ավագ դասարանների «Հասարակագիտություն» առարկայում ներառվել է «Թրաֆիքինգ» թեման:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասի լուծումը պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում, այլ դրանք հնարավոր է լուծել արդյունավետ վարչարարության, կազմակերպչական աշխատանքների, օրենսդրական բարեփոխումների և նախարարության վերահսկողությունը պատշաճ կազմակերպելու միջոցով: Բացասական է այն, որ հաճախ նախարարության աշխատանքներում թերացումների վերաբերյալ քաղաքացիների դժգոհությունները, դիմում-բողոքները, մամուլում հրապարակված տեղեկություններն ըստ էության քննության չեն առնվում, իսկ եթե նույն խնդիրները բարձրացվում են պետական որևէ գերատեսչության կողմից, քննարկվում և դրանց տրվում են դրական լուծումներ: Այսինքն՝ բավարար արդյունավետ չէ նախարարության և քաղաքացիական հասարակության միջև կապը:

Ըստ մի շարք մասնագետների գնահատականների հանրակրթական հաստատությունների համար նախատեսված դասագրքերի մրցույթներն անցկացվել են ոչ օբյեկտիվ չափանիշներով, որի պատճառով, որոշ դեպքերում, աշակերտներին պարտադրվել են բարդ դասագրքեր: Դրա պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ չնայած դասագրքերի վերաբերյալ դպրոցների տնօրեններից պահանջվում են կարծիքներ, սակայն հետագայում այդ կարծիքները կամ եզրակացությունները հաշվի չեն առնվում, որովհետև նման պարտականություն նախարարությունը չունի, հետևաբար դպրոցում աշխատող մասնագետների կարծիքների հավաքը հաճախ կրել է ձևական բնույթ:

«Հանուն կրթության և գիտության» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Կրթության ոլորտի բյուջեի բացերը՝ ոլորտի ծախսերի արդյունավետության և թափանցիկության համատեքստում» հետազոտության համաձայն՝ 2010 և 2011 թվականներին ԿԳՆ բյուջեով դասագրքերի հրատարակման համար նախատեսվել է մոտ 765 միլիոն դրամ յուրաքանչյուր տարվա համար: Ուսուցիչների շրջանում կատարած հարցումները ցույց են տվել, որ դասագրքերը չեն ենթարկվում անհրաժեշտ փորձաքննության ու հրատարակվում են խմբագրական, ուղղագրական, տպագրական սխալներով: Ուսուցիչների վերապատրաստման ու

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

մեթոդաբանական թեստերի կազմման վրա Կրթության ազգային ինստիտուտը (ԿԱԻ) ծախսում է իր բյուջեի կեսից ավելին, սակայն չի ապահովում համապատասխան որակ: ԿԱԻ-ի պաշտոնական կայքում տեղակայված հարցման արդյունքները փաստում են, որ հարցվածների հիմնական մասն ատեստավորման գործընթացը համարում է անարդյունավետ:

ԿԳՆ-ն ամեն տարի պատկառելի գումարներ է հատկացնում դասագրքերի մշակմանը և հրատարակմանը: Կրթության բյուջեով 2010 և 2011 թվականներին հատկացվել է 764.649.600 դրամ: Իրենց կողմից արված հարցումների ու ուսումնասիրության արդյունքները վկայել են, որ նոր հրատարակված որոշ դասագրքերի որակը բավականին ցածր է: 12-րդ դասարանի «Ֆրանսերեն» դասագրքի հենց կազմի վրա առկա է տպագրական սխալ՝ «Français»-ի փոխարեն տպագրված է «Française»: Երեխաներն անընդհատ շփոթում են և կատարում են նույն ուղղագրական սխալը, ինչից խուսափելու համար ուսուցիչները երեխաներին հանձնարարել են կա՛մ ջնջել ավելորդ տառը, կա՛մ վերևից թուղթ կպցնել: Սա վկայում է նախարարության կողմից ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ ծախսման և համապատասխան վերահսկողական մեխանիզմների բացակայության մասին: Պաշտպանի այն հարցին, թե արդյոք իրականությանը համապատասխանում են տեղեկություններն այն մասին, որ դասագրքերն անհրաժեշտ փորձաքննության չենթարկելու պատճառով դրանցում հաճախ առկա են լինում խմբագրական, ուղղագրական և տպագրական սխալներ, Նախարարությունից հաստատել են այդ տեղեկությունները:

Իրավական կարգավորման թերության խնդիր է հանդիսացել հանրակրթական դասագրքերի մրցութային հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջները: Այսպես՝ Հ. Բ.-ն դիմումով հայտնել էր, որ հանդիսանում է մաթեմատիկայի մի շարք դասագրքերի հեղինակ: 2011 թվականի ապրիլ-մայիս ամիսներին իր հեղինակած գրքերը ներկայացրել է հանրակրթական դպրոցների 7-8-9 դասարանների «Երկրաչափություն» առարկայի դասագրքերի հայտարարված մրցույթին: Չնայած իր ներկայացրած դասագրքերը համապատասխանել են պահանջվող չափանիշներին, սակայն մրցույթի ընթացքում, որն, ըստ դիմումատուի ոչ օբյեկտիվ է եղել, հաղթող են ճանաչվել թարգմանություն հանդիսացող գրքերը: Հ. Բ.-ն նշել է, որ մրցութային հանձնաժողովի անդամ Լ. Մ.-ն մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված գրքի խմբագիրն է: Պաշտպանին ի պատասխան նախարարությունից տեղեկացվել էր, որ նախորդ տարիներին անցկացված մրցույթների ժամանակ չի արձանագրվել որևէ դեպք, որ դասագրքերի մրցութային հանձնաժողովի անդամը հանդիսանար տվյալ տարում մրցույթին ներկայացված դասագրքերի հեղինակ, համահեղինակ, խմբագիր կամ թարգմանիչ: Մրցութային հանձնաժողովների աշխատանքներն առավել օբյեկտիվ և անկողմնակալ կազմակերպելու նպատակով հանձնաժողովի անդամները՝ մինչ հանձնաժողովների կազմում ընդգրկվելը, նախապես ներկայացրել էին համապատասխան հավաստագրեր այն մասին, որ իրենք չեն հանդիսանում մրցույթին ներկայացված նյութերի հեղինակ, համահեղինակ, խմբագիր, թարգմանիչ կամ մրցույթին մասնակցող որևէ հրատարակչության աշխատակից: Դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ օրենսդրությամբ նման արգելք սահմանված չի եղել, ինչը հանձնաժողովին հնարավորություն էր տալիս, թեկուզև

ստորագրելով այդ հավաստագիրը՝ գործել անաչառ ու օբյեկտիվ: Պաշտպանը մարդու իրավունքների խախտում է հայտնաբերել նախարարության գործողություններում, առաջարկել է անվավեր ճանաչել մրցույթի արդյունքները, և ապահովել հանրակրթական դպրոցների դասագրքերի մրցույթների կազմակերպման ու անցկացման իրավական հիմքերի հստակ սահմանումը: Արդյունքում՝ Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի թիվ 752-Ն հրամանում լրացում կատարելու մասին» թիվ 1226-Ն հրամանով հաստատվել է դասագրքերի գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը, հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջների սահմանումը, որոնք բացառում են հանձնաժողովի անդամի կողմից դասագրքի ստեղծմանը որևէ ձևով մասնակցելու հնարավորությունը:

Ուշագրավ է կրթության ոլորտի բյուջեից հասարակական կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական միջոցների ծրագրային ուղղվածությունը: 2010-2011 թվականներին յուրաքանչյուր տարի ԿԳՆ-ն նույն 7 հասարակական կազմակերպություններին տրամադրել է մոտ 365 միլիոն դրամ միևնույն ծրագրերի իրականացման համար: Ընդհանուր գումարի մոտ 38%-ը տրամադրվել է միայն մեկ կազմակերպության՝ «Դասական երաժշտության աջակցություն» ՀԿ-ին, որի գործունեության ոլորտը հիմնականում վերաբերում է մշակութային ոլորտին: Մյուս կազմակերպությունները և նրանց կողմից իրականացված ծրագրերը հիմնականում մարզական և մշակութային ուղղվածություն ունեն և վիճահարույց է, թե ինչո՞ւ դրանք պետք է ֆինանսավորվեն բյուջեի կրթության տողից, այլ ոչ թե՝ մշակույթի կամ սպորտի:

Այս հարցադրումների վերաբերյալ նախարարությունից Պաշտպանին պարզապես պատասխանել են, որ կրթական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններին գումարները տրամադրվում են յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի հիման վրա, որոնք սահմանված կարգով քննարկվում են ՀՀ ֆինանսների նախարարությունում ու ՀՀ կառավարությունում և, Ազգային Ժողովի կողմից հաստատվելուց հետո, հիշյալ կազմակերպությունները իրականացնում են հայտով նախատեսված կրթադաստիարակչական աշխատանքները՝ չանդրադառնալով սկզբունքին ու իրականացված ծրագրերին:

Թեև տարեցտարի խստացվում են ոչ պետական բուհերի լիցենզավորման ու հավատարմագրման պահանջներն ու պայմանները, սակայն բոլոր դեպքերում չէ, որ այդ խստացումները վերաբերել են պետական բուհերին, որի հետևանքով անհավասար մոտեցում է ցուցաբերվել միևնույն նպատակի համար ծառայող հաստատությունների նկատմամբ: Ըստ մեր աղբյուրների 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում ստուգում է անցկացվել 24 ոչ պետական բուհում: Եղել են որոշ բուհեր, որտեղ թերություններն այնքան շատ են եղել, որ կասեցվել է դրանց գործունեությունը, իսկ երկու ոչ պետական բուհում կասեցվել է մի քանի ֆակուլտետների լիցենզիայի գործողությունը: Ստուգման նպատակն էր՝ պարզել մասնավոր բուհերի գործունեության համապատասխանությունն արդեն իսկ խստացված կարգերին ու պայմաններին: Եթե տարեսկզբին գործել է 45 ոչ պետական բուհ, ապա տարեվերջին գործել է 40-ը: Որոշ ոչ պետական բուհեր միավորվել են՝ դառնալով մեկ ուսումնական հաստատություն, իսկ առաջիկայում ևս 7 ոչ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

պետական բուհ միավորվելու է, արդյունքում ևս 6 բուհով կկրճատվի ոչ պետական բուհերի քանակը:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու վերաբերյալ կառավարության որոշումների նախագծերը համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի 41-րդ կետի, որպես պաշտպանության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծեր Նախարարությունը նախքան կառավարություն ներկայացնելը պետք է ներկայացներ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ՝ կարծիքի: Նշված ՀՀ կառավարության որոշումների նախագծերը չեն համաձայնեցվել Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի հետ, իսկ առանձին դեպքերում չեն ներկայացվել ՀՀ Նախագահի աշխատակազմ: Այն դեպքերում, երբ որոշման նախագիծը կարծիքի համար ներկայացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմ, և ստացվել է բացասական կարծիք, ապա չներկայացվացների դեպքերում ակնհայտ է, որ միևնույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ ցուցաբերվել է տարբերակված մոտեցում: Թեպետ Պաշտպանի հարցադրմանը Նախարարությունից պատասխանել են, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծերն ուղարկվում են շահագիգիռ գերատեսչություններ՝ համաձայնեցման և բոլոր դեպքերում ՀՀ Նախագահի աշխատակազմ՝ կարծիքի, սակայն ՀՀ կառավարության օրակարգի մեջ ընդգրկված որոշումների նախագծերի տեղեկանքների ու ամփոփաթերթերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ որոշումների նախագծերն չեն ուղարկվել Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ և առանձին դեպքերում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ:

Չնայած որևէ իրավական ակտով նշված չէ, որ անձը չի կարող բուհերում ձևակերպվել որպես հայցորդ, սակայն ըստ բողոքների բուհերում կասեցվել է հայցորդության ձևակերպումը: Պաշտպանի հարցադրմանը Նախարարությունից պատասխանել են, որ ԲՈՒՀ-երում հայցորդության ձևակերպումը կասեցված չէ և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը հաստատելու մասին» թիվ 662 որոշմամբ, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» թիվ 1167-Ն հրամանով:

Նախարարությունը որոշ դեպքերում չի դրսևորում բավարար հետևողականություն քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ: Այսպես՝ պրակտիկայի քննությունից հետո ուսանողը չի տեղեկացվել իր գնահատականի մասին, քանի որ նրա ստուգման գրքույկում համապատասխան նշում չի կատարվել դասախոսի կողմից, պրակտիկայի ղեկավար դասախոսը բանավոր տեղեկացրել է ուսանողին, որ նա ստացել է գերազանց գնահատական, սակայն գնահատականների համապատասխան

մատյանում գրառել է բավարար գնահատական: Ուսանողը որոշ ժամանակ անց բացահայտելով իր իրական գնահատականը՝ դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, սակայն նրա խնդրին որևէ ընթացք չի տրվել, պարզապես պատասխան է տրվել, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է միայն անբավարար գնահատականի վերահանձման հնարավորություն:

Երևանյան ավագ դպրոցների տնօրենները դժգոհություն են հայտնել, որ մեծ թվով երեխաներ կասկածելի զուգադիպությամբ որոշել են դպրոցն ավարտել գյուղերում, որտեղ, ենթադրաբար, կարող են դասի չգնալ, պարապել դասախոսների մոտ ու զուգահեռ ավարտել դպրոցը: Այսինքն՝ հսկողությունը մարզային դպրոցներում իրականացվում է թերի:

Լոռու մարզի Աքորի համայնք դպրոցի տնօրենի ընտրությունները, ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանի պնդմամբ, անցել են կեղծիքներով: Այդ պատճառով էլ գյուղի դպրոցի աշակերտները, ուսուցիչներն ու ծնողները դուրս են եկել բողոքի՝ գյուղապետից պահանջելով բացատրություն: Գյուղի միակ դպրոցի (այն ունի 340 աշակերտ) տնօրենի ընտրություններում առաջադրվել է երկու թեկնածու: Դպրոցի խորհրդի անդամ Վեներա Միյազյանը պնդում է, որ ընտրություններն անցել են կեղծիքներով, քվեատուփը քվեարկության ժամանակ խորհրդի անդամների տեսադաշտում չի եղել, քվեարկության արդյունքները կեղծվել են և չեն համապատասխանել խորհրդի անդամների իրական քվեարկությանը: Մինչդեռ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության պետն այս կապակցությամբ հայտնել է, որ մրցույթն անցել է շատ խիստ կարգուկանոնով և բացառվում է որևէ կեղծիքի առկայությունը: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետական ուսումնական հաստատության խորհուրդը ընտրում է տնօրեն և հիմնադրի անունից նրա հետ պետք է կնքի աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Մինչդեռ, տնօրենի հետ պայմանագիր է կնքում մարզպետը, որի արդյունքում տնօրենը դառնում է կախյալ մարդ մարզպետից:

Առկա են նաև խնդիրներ կապված կրթության պայմանների հետ: Այսպես՝ հանրակրթական մի քանի հաստատություններում ջերմաստիճանը որոշ դեպքերում եղել է +4 C° (օրինակ՝ Շևչենկոյի անվան դպրոցը): Անհավասար մոտեցում է ցուցաբերվել նաև միևնույն նյութատեխնիկական կարիքներն ունեցող հաստատությունների նկատմամբ: Կան մի շարք դպրոցներ, որոնք 2005թ.-ից ամեն տարի հիմնանորոգման համար ֆինանսավորվում են պետբյուջեով, օրինակ՝ Չարենցի դպրոցը, Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 դպրոցը: Այնինչ Մեծամորի ավագ դպրոցին հիմնանորոգման համար դեռ 2010թ.-ին պետական բյուջեից պետք է հատկացվեր ֆինանսավորում, սակայն չի հատկացվել: Այս խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև պատգամավոր Անահիտ Բախշյանը:

Բավարար չեն կոռուպցիայի նվազման տեմպերը հանրակրթական, միջին մասնագիտական և հատկապես բարձրագույն ուսումնական համակարգում: Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում բոլոր բուհերը մշակել են իրենց սեփական հակակոռուպցիոն ծրագրերը և ամեն տարի ԿԳՆ պետք է ներկայացնեն ծրագրի կատարման հաշվետվություն: Հիմք ընդունելով այն սկզբունքը, որ որտեղ բարձր են կոռուպցիոն ռիսկերը, ցածր է կրթության որակը՝ պետությունը որոշել է

ֆինանսավորման հարցում հաշվի առնել տվյալ բուհում կրթության որակը և արդյունավետությունը: Մշակվել է ֆինանսավորման նոր մեխանիզմ, որը պետք է ներդրվի 2012 թվականից:

Պաշտպանի հարցին, թե 2011 թվականի ընթացքում դպրոցներում և կրթական այլ հաստատություններում դրամաշորթության կամ կոռուպցիայի քանի դեպք է արձանագրվել, նախարարությունից պատասխանել են, որ 2011թ. ՀՀ կրթության պետական տեսչություն հասցեագրված դիմումներում և «Թեժ գծով» ստացված ահազանգերում դիմումատուները նշել են դրամահավաքի 12 դեպք, դրամաշորթության կամ կոռուպցիայի 11 դեպք (աշխատավարձի ոչ լրիվ վճարում տնօրենի կողմից՝ 5, ուսուցիչների պարգևատրման գումարների յուրացում տնօրենի կողմից՝ 1, չպարապած դասաժամերի համար վճարված աշխատավարձի յուրացում՝ 1, երեխաներին տրամադրված դրամական օգնության յուրացում՝ 1, դպրոց չհաճախող աշակերտների գնահատում դասամատյանում՝ 2, հրամանագրված, սակայն չաշխատող անձանց աշխատավարձերի յուրացում տնօրենի կողմից՝ 1): Իսկ այն հարցին, թե օրենսդրության խախտումներով ավարտական փաստաթղթեր տալու քանի դեպք է արձանագրվել, և քանի անձ է ենթարկվել պատասխանատվության, նախարարությունը պատասխանել է, որ օրենսդրության խախտումներով ավարտական փաստաթղթեր տալու դեպքեր արձանագրվել են ՀՀ կրթության պետական տեսչության կողմից տարբեր ուսումնական հաստատություններում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, որի ընթացքում հայտնաբերված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների, անհամապատասխանությունների վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 164 արձանագրություն, որից 114-ը՝ փաստաթղթային ուսումնասիրության ընթացքում, 50-ը՝ համադրման արդյունքում: Իրավասու մարմիններին (ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան) տեսչության կողմից ներկայացված ուսումնասիրության տեղեկանքում առաջարկվել է համապատասխան անձանց նկատմամբ կիրառել կարգապահական տույժեր: Ընդհանուր թվով 21 տնօրենների նկատմամբ կիրառվել են «խիստ նկատողություն», «նկատողություն» կարգապահական տույժերը, իսկ 1 տնօրեն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Կատարված ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ Պաշտպանին հասցեագրված ՀՀ կրթության և գիտության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են նաև ուսանողների՝ ուսումնական հաստատությունից ապօրինի հեռացմանը, պահանջված փաստաթղթերի չտրամադրմանը կամ ոչ պատշաճ տրամադրմանը, աշխատանքից ապօրինի ազատմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գործադրել հրատապ և արդյունավետ միջոցներ դասագրքերի որակի բարձրացման ուղղությամբ:
- Հետևողական աշխատանքներ իրականացնել կրթության ողջ համակարգում առկա կոռուպցիոն երևույթները վերացնելու ուղղությամբ՝ նախատեսելով հակակոռուպցիոն միջոցառումներ, դրանք արդյունավետ իրականացնել հետևյալ ուղղություններով՝ պետական բյուջեի միջոցների խտրական և կոռուպցիոն բաշխումներ, հովանավորչական և կոռուպցիոն դրսևորումներով

մրցույթներ, ԲՈՒՀ-ական կաշառակերություն, դպրոցական դրամահավաքություն և այլն:

- Թափանցիկ դարձնել դպրոցների կառավարման խորհուրդների գործունեությունը հատկապես դպրոցի տնօրենների ընտրությունների ժամանակ:
- Վերանայել աշակերտների թվաքանակով դպրոցներին հատկացվող ֆինանսավորման կարգը, որպեսզի քիչ թվով աշակերտներ ունեցող դպրոցները հատկացված գումարներով հնարավորություն ունենան բարելավել նվազագույն հիգիենիկ պայմանները, ձեռք բերեն անհրաժեշտ գույք, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, ունենան համակարգչային դասարան և այլն:
- Ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացնել մոնիթորինգ՝ բացահայտված խախտումներին տալով հանրային հնչեղություն, որով կկանխվի խախտումների կրկնակիությունը:
- Քննարկել ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրով սահմանված կարգում փոփոխություններ կատարելու հարցը և հիմք ընդունելով փաստացի իրավիճակը սահմանել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու վերաբերյալ կառավարության որոշումների նախագծերը միայն ՀՀ Նախագահի աշխատակազմ ներկայացնելու պահանջ:
- Դպրոցի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով աշխատանքներ տանել կառավարման և խորհրդակցական խորհուրդների անդամների հետ:
- Գործուն միջոցներ ձեռնարկել քաղաքային և գյուղական հանրակրթական ուսումնական հաստատությունների համաչափ զարգացման ուղղությամբ:
- Հանրակրթական ուսումնական հաստատություններում սահմանել սանիտարական նորմեր, դրանց պահպանման կանոններ, իրականացման մեթոդական ուղեցույցներ:
- Գյուղական այն համայնքներում, որտեղ բացակայում են երեխաների հանգիստը, ժամանցը և մշակութային կյանքը կազմակերպող հաստատությունները, պետական լրացուցիչ ֆինանսավորմամբ այդ աշխատանքները կազմակերպել հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ օգտագործելով դպրոցների կարողությունները:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատու է հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման համար, որի նպատակն է հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ բացառելով սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականությունը:

2011 թվականին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Թեպետ Հանձնաժողովի կողմից սահմանվել են 2011թ. ընթացքում մատուցվող ծառայությունների նոր սակագներ, այնուամենայնիվ, Հանձնաժողովի 2007թ. օգոստոսի 24-ի թիվ 340 Ն և 2007թ. նոյեմբերի 16-ի թիվ 530Ն որոշումներով հաստատված սակագների ցանկը չի համապատասխանեցվել 2008թ. մայիսի 20-ի թիվ 273Ա որոշմամբ հաստատված սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկին:
- Լարային հեռախոսակապի ոլորտում, որոշ դեպքերում, բնակչության համար հավասար պայմաններ չեն ապահովվել ծառայություն մատուցող ընկերության կողմից:
- Հասարակությունը բավարար չափով իրազեկված չի եղել էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման հետևանքով առաջացած վեճերի քննության և լուծման վերաբերյալ Հանձնաժողովի իրավասությունների մասին:
- Այլընտրանքային լաբորատորիաների բացակայությունը (հիմնականում գազի և էլեկտրաէներգիայի հաշվիչների ստուգման) բնակչության մոտ առաջացրել է հաշվառքի սարքերի ստուգաչափման արդյունքների արժանահավատության նկատմամբ անվստահություն: Հանձնաժողովը նշված խնդրի վերաբերյալ չի բարձրաձայնել:
- Շարունակել է արդիական մնալ քաղաքացիների շուրջօրյա ջրամատակարարման խնդիրը:

Արձանագրված դրական զարգացումները

- Հանձնաժողովը անվճար «կարճ» հեռախոսահամարներ է տրամադրել թվով 19 պետական մարմինների և կազմակերպությունների (ԱԻՆ, ՄԻՊ և այլն)
- 2011 թվականին Հանձնաժողովի կողմից վերանայվել է խմելու ջրի սակագները, և որոշում է կայացվել նվազեցնել սակագինը շուրջ 8 դրամով:
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի նիստում ընդունված որոշումներով փոփոխություններ են

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կատարվել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում, ինչպես նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարներում: Հանձնաժողովի ընդունած որոշումներով նվազեցվել են միաֆազ և եռաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղադրման կանխավճարի չափերը:

- Հայաստանի Հանրապետությունն աշխարհում հինգերորդն է, որը ներդրել է 4G ինտերնետ անլար ցանցը (LTE):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում Հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթարկված ծառայությունները չեն համապատասխանել Հանձնաժողովի 2008թ. մայիսի 20-ի թիվ 273 Ա որոշմամբ հաստատված սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկին: Սակայն, Հանձնաժողովի փոխանցմամբ, 2011թ. դեկտեմբերի 28-ին արդեն ընդունվել են համապատասխան որոշումները, որոնցով առկա իրավական բացերը վերացել են:

Հայտնի են Երևանի քաղաքամերձ բնակավայրերում (մասնավորապես՝ Արագածոտնի և Կոտայքի մարզեր), վեցանիշ Երևանյան հեռախոսահամարների տրամադրման գործընթացում ծառայություն մատուցող ընկերության կողմից ոչ հավասար պայմանների ապահովման հատկանիշներ, ինչը բնակչության մոտ դժգոհություն է առաջացրել: Այդ առումով, կարծում ենք, որ առկա է Հանձնաժողովի կողմից բնակչության իրազեկվածության ապահովման անհրաժեշտություն:

Ընթացիկ տարում եղել են էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման բազմաթիվ դեպքեր, որոնց հետևանքով սպառողները կրել են ֆինանսական լուրջ վնաս-ներ: Չնայած այն հանգամանքին, որ սահմանված կարգով էլեկտրական ցանցեր դիմած քաղաքացիների շուրջ 1639 դիմումներ բավարարվել են և մոտ 119 մլն. դրամի չափով այդ ուղղությամբ կատարվել են ծախսեր, այնուամենայնիվ հասարակության շրջանում այս խնդիրն առկա է և դրա լուծման համար Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ) է դիմել միայն մեկ քաղաքացի: Սա վկայում է այն մասին, որ քաղաքացիները, բացի դատական կարգով մերժումները բողոքարկելուց, իրազեկված չեն, որ խնդրին կարելի է լուծում տալ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ) դիմելու միջոցով:

Հանրապետությունում գազի, ջրի և էլեկտրաէներգիայի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաների բացակայությունն իր հերթին որոշակի խնդիրներ է ստեղծում սպառողների համար: Լինելով միակը՝ գործող լաբորատորիան կարող է օգտվել իր գերիշխող դիրքից և սահմանել հաշվիչների ստուգման, վերանորոգման համար բարձր գներ: Բացի այդ, բնակչության շրջանում առկա է այդ լաբորատոր ստուգումների օբյեկտիվության նկատմամբ անվստահություն: Չնայած այն հանգամանքին, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը չունի լաբորատորիաների ստեղծմանը կամ գործարկմանն ուղղված լիազորություններ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ որպես մասնագիտացված կառույց, պետք է բարձրաձայներ այլընտրանքային մասնավոր լաբորատորիաների ստեղծման խնդիրը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Մտահոգիչ է այն, որ խմելու ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից դանդաղ են ընթացել քաղաքացիների ջրամատակարարման բարելավմանն ուղղված գործընթացները:

Հայաստանում բարելավվել է ծառայությունների որակը և հասանելիության վիճակը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում: Ինտերնետ օգտագործողների թիվը մեկ տարվա ընթացքում ավելացել է 130-150 հազարով, իսկ օգտագործվող ինտերնետի ընդհանուր ծավալը երկու անգամից ավելի: Ըստ տրամադրված տեղեկության Հայաստանն աշխարհում հինգերորդն է, որը ներդրել է 4G ինտերնետ անլար ցանցը (LTE), և ինչպես վկայում են այլ վիճակագրական տվյալներ, այս ոլորտում եղել են զգալի զարգացումներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել էլեկտրաէներգիայի տատանումների կամ խափանման հետևանքով առաջացած վեճերի քննության և լուծման վերաբերյալ Հանձնաժողովի իրավասությունների մասին հասարակության իրազեկված լինելը:
- Բարձրաձայնել գազի, ջրի և էլեկտրաէներգիայի հաշվիչների այլընտրանքային լաբորատորիաներ ունենալու վերաբերյալ խնդիրը:
- Ակտիվացնել վերահսկողությունը ջրամատակարար ընկերությունների կողմից մատուցվող խմելու ջրի սպասարկման որակի նկատմամբ:
- Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայություններ տրամադրելիս բնակիչների համար ապահովել հավասար պայմաններ և բարձրացնել իրազեկվածությունը այդ ոլորտում:

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն և այլն:

2011 թվականին ՀՀ հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացվում են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Առանձին դեպքերում Ծառայության քննիչների կողմից չեն պահպանվել նախաքննության անցկացման ողջամիտ ժամկետները և դրանք անհարկի ձգձգվել են: Ընդ որում, վերջիններս տվյալ դեպքերում չեն խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քրեական գործի նախաքննության ժամետները, և դրանք բոլոր դեպքերում երկարացվել են սահմանված ժամկետներում և կարգով: Նշված գնահատականը որոշակի առումով ընդունել է նաև Ծառայության պետը իր 2011թ. կատարված աշխատանքների ամփոփման ընթացքում՝ մասնավորապես նշելով, որ Ծառայության կողմից անհրաժեշտ է առանձնակի հետևողականություն դրսևորել նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրենքով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ:

Շարունակվել են Ծառայության աշխատանքների նկատմամբ քննադատությունները՝ կապված 2008թ. մարտի 1-ի 10 զոհերի մահվան փաստով կատարված նախաքննության անարդյունավետության հետ: Զոհված անձանց ընտանիքի անդամներն ու հարազատները այն համոզման են, որ Ծառայությունը բավարար արդյունավետությամբ չի կատարել իր գործառույթները: Նշված խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև Թոմաս Համերբերգը իր 2011թ. հրապարակված զեկույցում՝ մատնանշելով հարցի կարևորությունն ինչպես մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ հասարակության վստահության բարձրացման տեսանկյունից: Դրական է, որ նշված գործերի քննության վերաբերյալ Ծառայությունը հրապարակել է կատարված աշխատանքների մասին մանրակրկիտ տեղեկատվություն, այդուհանդերձ զոհերի ընտանիքները և հանրությունը ակնկալում են նշված գործերի ամբողջական բացահայտում:

Ծառայության քննությանը օրենքով ենթակա գործերի նախաքննությունը իրականացվել է այլ մարմինների կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ մատնանշում է այն բոլոր դեպքերը, որոնց քննությունը ընդդատյա է Ծառայությանը, սակայն օրենքի այդ պահանջը երբեմն անտեսվել է: Օրինակ, ըստ Ծառայության կողմից ներկայացված տվյալի՝ ՀՀ ՊՆ զինծառայողի մասնակցությամբ (կողմից) կատարված հանցագործության վերաբերյալ ծառայությունում քննվել է մեկ քրեական գործ: Սա ինքնին արդեն վկայում է օրենքի խախտման մասին, որովհետև հանրությանը հայտնի են ՀՀ ՊՆ սպայական անձնակազմի մասնակցությամբ (կողմից)

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

կատարված բազմաթիվ հանցագործություններ, որոնք քննվել և ավարտվել են հենց ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում: Այդպիսի դեպքեր եղել են նաև ոստիկանական համակարգում: Ենթակայության վերաբերյալ օրենսդրական պահանջների խախտումը հանգեցրել է նախաքննության ընդհանուր պայմանների խախտման, ինչի հետևանքով կասկածի տակ է դրվել նախաքննության օբյեկտիվությունը:

Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել Ծառայության համակարգում աշխատող պետական պաշտոնյաների կողմից «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված հատուկ քննչական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների խախտումները և կոռուպցիոն ռիսկերը բացառելու ուղղությամբ: Կարևորելով Ծառայության համակարգում աշխատող պետական պաշտոնյաների կողմից «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված հատուկ քննչական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների պահպանումը՝ Պաշտպանը գրավոր հարցմամբ դիմել էր Ծառայությանը՝ պարզելու, թե ինչ տեղեկատվություն է առկա այդ խնդրի վերաբերյալ տվյալ մարմնում և ինչ միջոցներ են ձեռնարկվում կոռուպցիոն ռիսկերը բացառելու ուղղությամբ: Ի պատասխան, Ծառայությունը հայտնել է, որ աշխատակիցները «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված հատուկ քննչական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների մասին ծանոթացել և ներկայացվող պահանջների պահպանման մասին նախազգուշացվել են:

Ըստ Ծառայության կողմից հայտնած տվյալների, պաշտոնատար անձանց կողմից դաժան վերաբերմունքի (բռնության դրսևորումների) դեպքերով 7 քրեական գործ է քննվել, որոնցից 2-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 2-ը կարճվել է հանցակազմի բացակայությամբ, 1-ը կարճվել է կողմերի հաշտվելու հետևանքով, իսկ 2-ը մնացել են անավարտ: Ներկայացված թվական տվյալները վկայում են, որ պաշտոնատար անձանց կողմից դաժան վերաբերմունքի (բռնության դրսևորումների) արժանացած ոչ բոլոր քաղաքացիներն են հաղորդում ներկայացրել Ծառայություն, ինչը վկայում է, որ Ծառայության համապատասխան գործառույթների իրացումը պաշտոնատար անձանց կողմից իրականում կատարված բռնության դեպքերին խիստ անհամաչափ է, և դա Ծառայության գործառույթների ոչ բավարար լուսաբանման և հասարակության շրջանում վերջինիս նկատմամբ ոչ բավարար վստահության արդյունք է:

Դրական է, որ ընթացիկ տարում Ծառայության վարույթում քննվել է 193 քրեական գործ, որից 69-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված գործերով մեղադրանք է առաջադրվել հիմնականում ոստիկանության, ՊԵԿ, քրեակատարողական հիմնարկների, ԱԱԾ աշխատակիցների նկատմամբ: Ծառայության վարույթում քննված և ավարտված գործերով հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 14 միջնորդագիր, որոնք սահմանված ժամկետում քննարկվել են, և ձեռնարկված միջոցառումների մասին հայտնվել է նախաքննության մարմնին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դրսևորել առանձնակի հետևողականություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նախաքննության երկամսյա ժամկետներում գործերի քննությունն ավարտելու և դրանց անհարկի ձգձգումները բացառելու ուղղությամբ:
- Կատարել լրացուցիչ և անհրաժեշտ այլ գործողություններ և օպերատիվ հետախուզական միջոցառումներ՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին մահացած անձանց գործերով հանցագործությունների լիովին բացահայտման նպատակով:
- Ձեռնարկել միջոցներ օրենքով սահմանված կարգով Հատուկ քննչական ծառայությանը ենթակա գործերը այլ քննչական մարմիններում քննելը բացառելու ուղղությամբ:
- Մշակել Ծառայության ներսում «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված հատուկ քննչական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների խախտումների և կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ուղղված հստակ մեխանիզմներ:
- Առավել շատ ներկայացնել և պարզաբանել Հատուկ քննչական ծառայության գործունեությունը և ձեռնարկել միջոցներ՝ հասարակության շրջանում Ծառայության նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

15. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային (ՀՌԱ) հանձնաժողովը կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաև վերահսկել հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին՝ դրանով իսկ ապահովելով յուրաքանչյուրի խոսքի ազատության իրավունքի իրականացումն ու պաշտպանությունը:

2011 թվականին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Հատկապես հեռուստաթերում առկա բազմաթիվ օրինախախտումների, այդ թվում՝ բազմակարծության պակասի, գովազդին առնչվող օրենսդրության խախտումների, հայոց լեզվի մասին օրենսդրության պահանջների չպահպանման, էթիկական նվազագույն կանոնների անտեսման պարագայում խիստ անբավարար են եղել ՀՌԱ հանձնաժողովի հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքները:
- Հանրային հեռուստատեսության եթերում գովազդի սահմանափակումներին առնչվող «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի և «Գովազդի» մասին ՀՀ օրենքի համապատասխան դրույթների տարածական մեկնաբանման արդյունքում ՀՌԱ հանձնաժողովը չի ապահովել մասնավոր հեռուստաընկերությունների և հանրային հեռուստաընկերությունը ֆինանսավորող ու դիտող Հայաստանի հարկատուների իրավունքները:
- Թվայնացման գործընթացի հետ կապված՝ հայտնելով, որ այն իր իրավասության շրջանակներում չէ, ՀՌԱ հանձնաժողովը, ոչ միայն չի ընդունում իր ոլորտի համար ամենաէական գործընթացների համար պատասխանատվությունը, այլ նույնիսկ չի տիրապետում չափազանց կարևոր տեղեկատվությանը: Սեփական գործառույթների նման իրացումը վկայում է այս ուղղությամբ դրանց ոչ բավարար ու պատշաճ կատարման մասին:
- Օրենքով նախատեսված հակամենաշնորհային երաշխիքների ապահովման առումով 2011 թվականին ՀՌԱ հանձնաժողովը դրսևորել է անգործություն, և չի իրականացրել իր վերահսկողական գործառույթները, որպեսզի կանխվի հեռարձակման շուկայի գերկենտրոնացումը կամ մենաշնորհացումը:

Արձանագրված դրական զարգացումներ

- 2011 թվականի մայիսի 26-ին «Գովազդի» մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում կատարված փոփոխություններով այլևս բացառվեց հնարավորությունը հանրային հեռուստատեսության եթերում գովազդի ծավալների

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

չարաշահումների՝ օգտվելով օրենքի տարածական և ոչ իրավական մեկնաբանություններով:

- ՀՌԱ հանձնաժողովը հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում բացահայտել է օրենքի խախտման երկու դեպք, և իրավաչափ արձագանքել այդ խախտումներին:
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարվել է լրացում, որի համաձայն Հանրային հեռուստառադիոընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները իրենց մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներում պարտավոր են օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՌԱ հանձնաժողովը հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում հայտնաբերել է Հեռուստատեսության և ռադիոյի օրենսդրության երկու խախտում: Մի դեպքում «ԱՐՓԱԻՆՖՈՐՄ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված պահանջներին համապատասխան վեցամսյա ժամկետում չեն տեղադրվել հեռարձակման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները ու հեռարձակման ցանցերը, հետևաբար՝ չեն հեռարձակվել հեռուստահաղորդումները: ՀՌԱ հանձնաժողովը, ըստ օրենքի, դիմել է ՀՀ վարչական դատարան՝ նշված ՍՊԸ-ի թիվ 155 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հայցով: Մյուս դեպքում «Արմենիա Թի-Վի» ՓԲԸ-ի կողմից 2011թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հեռարձակված գովազդի տևողությունը մեկ եթերային ժամի հաշվով որոշ դեպքերում գերազանցել է օրենքով սահմանված 14 րոպեն: Հայտնաբերված խախտման արդյունքում ընկերությունը տուգանվել է նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: ՀՌԱ հանձնաժողովի որոշումները չեն բողոքարկվել:

ՀՌԱ հանձնաժողովը 2011 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում գործող հարյուրավոր հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում չի հայտնաբերել որևէ այլ խախտում: ՀՌԱ հանձնաժողովը չի կարողացել հայտնաբերել նաև իր կողմից հեռուստահեռարձակողների համար մշակած էթիկայի չափորոշիչների խախտման որևէ դեպք: Չնայած նշված վիճակագրությանը, բազմաթիվ հրապարակային հաղորդումներ են հնչել հատկապես հեռուստաեթերում առկա բազմաթիվ օրինախախտումների, այդ թվում՝ բազմակարծության պակասի, գովազդին առնչվող օրենսդրության խախտումների, հայոց լեզվի մասին օրենսդրության պահանջների չպահպանման, էթիկական նվազագույն կանոնների անտեսման վերաբերյալ: Այդ խախտումների մասին հրապարակային գործիչների, ոլորտի մասնագետների, մասնագիտացած հասարակական կազմակերպությունների կողմից խիստ բացասական գնահատականները ներկայացվել են մի շարք միջազգային ու տեղական զեկույցներում, հրապարակվել մամուլում և գրեթե չեն հերքվել ՀՌԱ հանձնաժողովի կողմից: Ավելին, 2011 թվականին տարբեր կազմակերպություններ իրականացրել են հեռուստաընկերությունների գովազդի մոնիթորինգ և հայտարարել, որ գրեթե բոլոր մասնավոր հեռուստաընկերությունները թույլ են տվել «Գովազդի մասին» ՀՀ

օրենքի խախտում: Նշված բացասական գնահատականների, ինչպես նաև յուրաքանչյուր հեռուստադիտողի համար ակնհայտ գովազդի օրենքով սահմանված ծավալների չարաշահման պարագայում (հատկապես 2011 թվականի առաջին կիսամյակում) անհասկանալի է ՀՌԱ հանձնաժողովի հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքների ներկայացված վիճակագրությունը, ինչը վկայում է տվյալ ուղղությամբ ՀՌԱ հանձնաժողովի անարդյունավետ գործունեության մասին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հանրային հեռուստառադիոընկերությունում առևտրային գովազդը չպետք է գերազանցի ընդհանուր հաղորդումների յոթ տոկոսը: Լրագրողների «Ասպարեզ» ակումբը 2011 թվականին ներկայացրել է Հանրային հեռուստատեսության հաղորդումներում գովազդային ծավալների ու տեղաբաշխման ՀՀ օրենսդրությանը համապատասխանության մոնիտորինգի արդյունքները: Մոնիթորինգի արդյունքներով արձանագրվել են մի շարք խախտումներ: Ըստ դիտարկման, օրինակ, հոկտեմբերի 26-28-ը առևտրային գովազդը Հ1-ի եթերում կազմել է 13.43-14.21 տոկոս՝ օրենքով սահմանված առավելագույն 7 տոկոսի փոխարեն: Ի պատասխան Գյումրիի «Ասպարեզ» ակումբի մեկ այլ մոնիտորինգի արդյունքների՝ ՀՌԱ հանձնաժողովը հիմնավոր համարելով Հանրային հեռուստաընկերության խորհրդի կողմից ներկայացված արձագանքը և համապատասխան օրենսդրության հիմնավորումը, նշել է, որ հանրային հեռուստաընկերության «հեռարձակվող ընդհանուր հաղորդումների տևողությունը օրական կտրվածքով կազմում է 48 ժամ («Հ1» հեռուստաալիք՝ 24 ժամ, «Արարատ» հեռուստաալիք՝ 24 ժամ), մինչդեռ «Ասպարեզ» ակումբն իր դիտարկումներն իրականացրել է միայն հանրային հեռուստատեսության «Հ1» հեռուստաալիքի մասով, այն էլ՝ մասնակի»: «Ասպարեզ» ակումբն իր դիտարկումներում նշել էր նաև, որ գովազդի ծավալը մեկ ժամվա ընթացքում գերազանցել է 10 րոպեն: Ըստ ՀՌԱ հանձնաժողովի և Հանրային հեռուստաընկերության խորհրդի «Ասպարեզ» ակումբն իր դիտարկումները կատարել է ամբողջական ժամային հաշվարկով, սակայն «Գովազդի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքը եթերային ժամի հաշվարկման սկզբի և ավարտի պահեր չի նախատեսում, ուստի մեկ ժամվա հաղորդումների ընթացքում տեղադրված գովազդի հաշվարկները ևս ամբողջական լինել չեն կարող:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի և «Գովազդի» մասին ՀՀ օրենքի համապատասխան դրույթների նման տարածական մեկնաբանման լիազորություն որևէ պետական մարմնի վերապահված չէ: Ակնհայտ է, որ գովազդային րոպեների սահմանափակումը հանրային հեռուստաընկերության եթերում միտված է պետական բյուջեից ֆինանսավորվող հանրային հեռուստաընկերության համար մասնավոր ընկերությունների հետ հավասար մրցակցային պայմաններ ապահովելու և հարկատուների հաշվին ֆինանսավորվող հանրային հեռուստաընկերության հաղորդումները դիտող հարկատուների(սպառողների) իրավունքների պաշտպանությանը: Ակնհայտ է, որ նման տարածական մեկնաբանության դեպքում չեն կատարվում օրենքի նշված դրույթների պահանջները: Լեզվատեխնիկական, այլ ոչ իրավական մեկնաբանության հնարքով անտեսվել է օրենսդրի կամքը և խախտվել են մասնավոր հեռուստաընկերությունների և հեռուստադիտողների իրավունքները:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Այդուհանդերձ, 2011 թվականի մայիսի 26-ին «Գովազդի» մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում կատարված փոփոխություններով սահմանվեց, որ «Արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 եթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տևողությամբ: Եթերային ժամի հաշվարկը սկսել յուրաքանչյուր օր 00.00 ժամից»: Նույն հոդվածով նախատեսվեց, որ արգելվում է գովազդի հեռարձակումը Հանրային հեռուստառադիոընկերության հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքի կողմից: Այսինքն՝ ներկայումս օրենքը հնարավորություն չի տալիս տարածական և ոչ իրավական մեկնաբանություններով խախտել մասնավոր հեռուստաընկերությունների և հեռուստադիտողների իրավունքները:

Հեռարձակման թվայնացման գործընթացը Հայաստանում ընթանում է փուլային, ինչի արդյունքում առաջին փուլում նվազեց հեռարձակող հեռուստաընկերությունների թիվը, չնայած թվայնացման գործընթացը հանգեցնում է ավելի քիչ թվով եթերային հաճախությունների օգտագործման և հեռարձակողների թվի զգալի աճի: Թվայնացման գործընթացի փուլային իրականացումը ինքնին չի կարող գնահատվել բացասական: Նման գործընթացները փուլային իրականացվել են Եվրոպական մի շարք երկրներում: Այնուամենայնիվ, թվայնացման գործընթացի հետ կապված հնչել են մի շարք մտահոգություններ տարբեր հասարակական կազմակերպությունների և մասնագետների կողմից, որոնք հիմնականում վերաբերում են հետևյալ խնդիրներին՝ բացակայում է հստակ և համակարգված, հանրության համար մատչելի գործողությունների ծրագիր, որը կամրագրի թվայնացման հետագա փուլերը, առանձին գործողությունների համար պատասխանատու պետական մարմինները և օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների հայեցակարգը; չեն հրապարակվել պետության կողմից իրականացված եթերային հաճախությունների միջազգային աուդիտի արդյունքները և հանրությանը նույնիսկ չեն ներկայացվել հիմնավորումներ նման մերժման համար; թվայնացման առաջին փուլում օրենքով չեն նախատեսվել մասնավոր թվային ցանցերի ստեղծման մեխանիզմներն ու կարգը; օրենսդրությամբ չեն ազատականացվել արբանյակային և բջջային հեռարձակումը:

Պաշտպանին ուղղված գրությամբ ՀՌԱ հանձնաժողովի նախագահը հրաժարվել է տեղեկություններ տրամադրել թվայնացման գործընթացի հետ կապված՝ հայտնելով, որ այդ գործընթացի իրականացման կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի գլխադասային մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, և հարցը նրանց իրավասության շրջանակներում է: Անհասկանալի է, թե ինչպես սահմանադրական մարմինը՝ ՀՌԱ հանձնաժողովը, որն ըստ օրենքի պատասխանատու է հեռարձակման ոլորտի համար, ոչ միայն չի ընդունում իր ոլորտի համար ամենաէական գործընթացների համար պատասխանատվությունը, այլև չի տիրապետում չափազանց կարևոր տեղեկատվությանը: Սեփական գործառույթների և պատասխանատվության նման իրացումը վկայել է դրանց ոչ բավարար ու պատշաճ կատարման մասին:

Թվայնացման գործընթացի շրջանակներում 2010 թվականին տեղի ունեցան հեռարձակման թվային ցանցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու համար լիցենզիաների տրամադրման մրցույթներ: Այդ մրցույթներից մեկի արդյունքները վիճարկելու հայցով «Մելտեքս» ընկերությունը 2010 թվականի դեկտեմբերին դիմել էր ՀՀ վարչական դատարան: 2011 թվականի հոկտեմբերին

վարչական դատարանը վճռով հայցը մերժել է, իսկ «Մելտեքս» ընկերությունը վճիռը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: Գործը դեռևս դատարանի վարույթում է, հետևաբար, Պաշտպանը՝ իրավասու չլինելով միջամտել գործի ընթացքին, սույն զեկույցով զերծ կմնա նշված մրցույթի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելուց: Մրցույթին ու դրան հետևած դատական գործընթացներին Պաշտպանը կանդրադառնա իր հաջորդ միջանկյալ կամ տարեկան զեկույցներում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը նախատեսում է, որ իրավաբանական անձինք կարող են ունենալ եթերային հեռարձակում իրականացնող ոչ ավելի, քան մեկ հեռուստաընկերության և մեկ ռադիոընկերության լիցենզիա: Օրենքը ամրագրում է նաև, որ Ֆիզիկական անձինք և նրանց հետ փոխկապակցված անձինք կարող են դառնալ ոչ ավելի, քան եթերային հեռարձակում իրականացնող լիցենզավորված երկու անձի (մեկ հեռուստաընկերության և մեկ ռադիոընկերության) հիմնադիր և (կամ) մասնակից: Օրենքի պահանջի կատարման վերահսկողությունը դարձյալ վերապահված է ՀՌԱ հանձնաժողովին: Իր այս գործառույթի իրականացման վերաբերյալ արված Պաշտպանի հարցմանն ի պատասխան ՀՌԱ հանձնաժողովը հայտնել է, որ «2011 թ-ին լիցենզավորվող ընկերությունների սեփականատերերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը պարզվել է մրցութային գործընթացի ընթացքում: Հեռուստատեսության և ռադիոյի օրենսդրության խախտումներ չեն հայտնաբերվել»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եթերային հեռարձակման համար հիմնական մրցույթներն իրականացվել են 2010 թվականին, իսկ բացի մրցույթների ընթացքում տվյալ հարցի ուսումնասիրությունից, ՀՌԱ հանձնաժողովը այլ դեպքերում և հանգամանքներում չի ստուգել լիցենզավորված ընկերությունների սեփականատերերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը՝ կարելի է եզրակացնել, որ օրենքով նախատեսված հակամենաշնորհային երաշխիքների ապահովման առումով 2011 թվականին ՀՌԱ հանձնաժողովը դրսևորել է անգործություն և չի իրականացրել իր վերահսկողական գործառույթները:

Այս ոլորտում առկա մեկ այլ խնդրի կապակցությամբ Պաշտպանին ուղղված քաղաքացու դիմումը վերաբերել է Հանրային հեռուստաընկերության կողմից խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիության ապահովման հարցին, որը պայմանավորված է հայերեն լուսագրերը սուրդոթարգմանությամբ փոխարինելու անհրաժեշտությամբ: Պաշտպանը դիմել է ՀՀ վարչապետին՝ առաջարկելով օրենսդրական նախաձեռնությամբ փոփոխություն կատարել համապատասխան իրավական ակտում՝ դարձնելով սուրդոթարգմանությունը պարտադիր և՛ Հանրային հեռուստառադիոընկերության, և՛ մյուս հեռուստաընկերությունների համար: 2011 թվականի դեկտեմբերին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարվել է լրացում, որի համաձայն Հանրային հեռուստառադիոընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը՝ օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարձրացնել ՀՌԱ հանձնաժողովի կողմից իրականացվող հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման որակը: Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված բոլոր խախտումներով ենթարկել պատասխանատվության՝ առանց ընտրանքային կամ կամայական մոտեցման:
- Ձեռնարկել համարժեք միջոցներ՝ հեռուստառադիոծրագրերում քաղաքական և այլ բազմակարծություն ապահովելու նպատակով:
- ՀՌԱ հանձնաժողովի իրավասությունները ընդլայնել թվայնացման գործընթացում և դրա իրականացման կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի գլխադասային մարմնի իրավասությունը հանձնել ՀՌԱ հանձնաժողովին:
- Թվայնացման գործընթացը ամբողջությամբ և առավել արդյունավետ կազմակերպելու համար մշակել միասնական փաստաթուղթ, որն իր մեջ կներառի անհրաժեշտ սկզբունքները և միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն մինչ 2015թ.:
- Ձեռնարկել հրատապ և համարժեք միջոցառումներ հեռարձակման շուկայի գերկենտրոնացումը կամ մենաշնորհացումը կանխելու ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն ապահովում է յուրաքանչյուրի՝ գրական, գեղարվեստական ազատության և մշակութային կյանքին մասնակցելու ու մշակութային գործունեություն իրականացնելու իրավունքի իրականացումն ու պաշտպանությունը, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, ազատ ու մատչելի ծառայություններ մատուցելու համար պայմանների ստեղծումը:

2011 թվականին ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված հաջողությունները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել թանգարանների պահպանման և զարգացման ուղղությամբ: Ցուցադրական տարածքների պակասի պատճառով թանգարաններում ցուցադրվում են պետական պահոցներում պահվող թանգարանային հավաքածուների մոտ 9%-ը:
- Անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվել թատրոնների նյութատեխնիկական հագեցվածության խնդրի լուծման ուղղությամբ: Մասնավորապես, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմն ունի հիմնանորոգման և նոր տեխնիկական հնարավորություններով համալրման կարիք, իսկ առանձին դեպքերում թատրոնները, օրինակ Մնջախաղի պետական թատրոնը ապահովված չէ սեփական տարածքով:
- Անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվել համայնքային գրադարանների պահպանման ուղղությամբ: Թեև Նախարարության ենթակայության տակ եղած 13 գրադարաններում վիճակը էականորեն բարելավվել է, սակայն համայնքների ենթակայության տակ գտնվող գրադարանների վիճակը հեռու է բավարար լինելուց:
- Չեն իրականացվել բավարար գործողություններ մարզերում մշակութային կյանքի համաչափ զարգացման համար անհրաժեշտ կայուն և արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ:
- Արձանագրվել են խնդիրներ մշակութային արժեքների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության բնագավառում: ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օտարման ոչ ենթակա ցուցակում ընդգրկված որոշ շենքեր գտնվում են քանդման վտանգի տակ: Ըստ որոշ ուսումնասիրությունների, «Կումայրի» ճարտարապետական արգելոց թանգարանում որոշ շենքեր վթարային վիճակում են:
- Չեն ձեռնարկել բավարար միջոցներ՝ հաշմանդամների համար մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Արձանագրված դրական զարգացումները

- Կազմակերպվել են մի շարք պետական պաշտոնական համերգներ:
- Հայաստանի ազգային պատկերասրահի ժամանակակից դիզայնով և տեխնիկական հնարավորություններով եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) նոր բացված վեբ կայքի (*www.nga.am*,www.gallery.am) միջոցով հասարակությանը հասանելի են դարձել շտեմարանում գտնվող շուրջ 12.500 թանգարանային արժեքների մասին տեղեկությունները:
- Հայաստանի թանգարաններում կազմակերպվել են շուրջ 200 մշտական և անհատական ցուցադրություններ, բացի այդ «Թանգարանների գիշեր» համա-եվրոպական ակցիային մասնակցել է 59 թանգարան՝ 107420 այցելու, իսկ Եվրոպական ժառանգության օրերին՝ 36 թանգարան՝ 11791 այցելու:
- Թանգարանային ֆոնդերը համալրվել են 6661 առարկաներով, ամրակայվել է 2645 և վերականգնվել 1168 թանգարանային առարկա:
- Գրադարանային հավաքածուները համալրվել են 59515 միավորով:
- Տեղեկատվության և ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները («EBSKO» և ՌԴ-ի խոշորագույն էլեկտրոնային ռուսալեզու հավաքածուների՝ «Integrum World» տեղեկատվության տվյալների փաթեթները):
- Իրականացվել են արդեն ավանդական դարձած Գրադարանավարի օրվան նվիրված՝ «Հանդիպման վայրը՝ գրադարան» ծրագիրը, որին մասնակցել է 102 գրադարան և կազմակերպվել է 257 միջոցառում:
- Հայ գրատպության 500-ամյակին և «Երևանը՝ 2012թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք» տոնակատարություններին ընդառաջ իրականացվել են մի շարք միջոցառումներ:
- Հաշմանդամների գրադարանային սպասարկումն իրականացնելու նպատակով ՀՀ Լոռու և Շիրակի մարզային գրադարանների միջոցով իրականացվել է «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը:
- Տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզային գրադարաններում տեղակայվել է «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագիրը:
- «Մշակութային մարզ» ծրագրի շրջանակներում մարզերում կազմակերպվել են շուրջ 74 թատերական և համերգային կազմակերպությունների հյուրախաղեր, հայկական արտադրության ֆիլմերի ցուցադրություններ, գրքի ցուցահանդես-տոնավաճառներ, ինչպես նաև մարզերում գործող ստեղծագործական խմբերի ելույթներ Երևանում:
- Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում Գյումրիում ու Վանաձորում առաջին անգամ իրականացվեց «Միջհամայնքային մշակութային 1-ին ցուցահանդեսը (մարզային «ArtExpo») և մրցույթ-փառատոնը»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախարարության կողմից բավարար աշխատանք չի իրականացվել թանգարանների պահպանման և զարգացման ուղղությամբ: Թանգարաններից և ազգային պատկերասրահի ֆոնդից մշակութային արժեքների անհետացման խնդիրը բազմիցս դարձել է հասարակական քննարկման առարկա: Թեև նախարարության կողմից ենթակա թանգարանները ամբողջովին ապահովվել են անվտանգության համակարգերով, այնուամենայնիվ, ֆինանսավորման բացակայության պատճառով որոշ թանգարաններում չեն ապահովվել ջերմախոնավային (ջեռուցման, օդափոխության, խոնավության) ռեժիմը: Ցուցադրական տարածքների պակասի պատճառով թանգարաններում ցուցադրվում են պետական պահոցներում պահվող թանգարանային հավաքածուների մոտ 9%-ը: Չնայած դրան, նախարարության կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում բոլոր թանգարաններն ունեն կայք-էջեր, բացի այդ թանգարաններում տեղադրվել են 28 սենսորային տեղեկատվական կրպակներ, որտեղ էլեկտրոնային եղանակով ներկայացվում են պետական պահոցներում պահվող թանգարանային հավաքածուները:

Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել թատրոնների նյութատեխնիկական հագեցվածության խնդրի լուծման ուղղությամբ: Մասնավորապես, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմն ունի հիմնանորոգման և նոր տեխնիկական հնարավորություններով համալրման կարիք, իսկ առանձին դեպքերում, օրինակ Մնջախաղի պետական թատրոնը ապահովված չէ սեփական տարածքով: Չնայած որ, Նախարարության կողմից մշակվել է «Թատրոնի և թատերական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվել են թատերական ոլորտին աջակցելու պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, սակայն նշված նախագիծը Ազգային ժողովի կողմից միչև օրս չի ընդունվել:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով նախատեսված՝ մշակույթի ոլորտի ծրագիրը և ծրագրի միջոցառումների ցանկը հաստատվել է դեռևս 2010թ. ապրիլի 15-ին ՀՀ կառավարության որոշմամբ: Ծրագրով միջոցառումներ են նախատեսվել 2010-2012թթ. համար՝ հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման, մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովման, Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանության և այլ բնագավառներում: Նախատեսված միջոցառումների քանակը և ստացված արդյունքները հանրության կողմից գնահատվել են ոչ բավարար:

Բավարար քայլեր չեն ձեռնարկվել նաև համայնքային գրադարանների պահպանման ուղղությամբ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2011 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում համայնքային գրադարանների քանակը 2006 թվականի համեմատ նվազել է, եթե 2006 թվականին դրանց թիվը կազմում էր 1045, որից 201-ը քաղաքներում, 844-ը գյուղերում, ապա 2010 թվականի դրությամբ այն եղել է 960, որից 181-ը՝ քաղաքներում, 779-ը գյուղերում: Թեև Նախարարության ենթակայության տակ եղած 13 գրադարաններում վիճակը էականորեն

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

բարելավվել է, սակայն համայնքների ենթակայության տակ գտնվող գրադարանների գրապահոցների տարածքների անբավարարության և ջեռուցման բացակայության հետևանքով հաճախ գրեթե անհնար է դարձել քաղաքացիների գրադարանային ծառայություններից օգտվելը:

Չեն ձեռնարկվել բավարար միջոցներ մշակութային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության մարզերում անհամաչափ բաշխվածության հաղթահարման, ինչպես նաև մարզերում գոյություն ունեցող մշակութային կազմակերպությունների՝ անհրաժեշտ նյութական հագեցվածության և հիմնանորոգման ապահովման ուղղությամբ:

Եղել են նաև խնդիրներ՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության բնագավառում: ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության պետական ցուցակում ընդգրկված են 24.152 հուշարձաններ, որից 977-ը գտնվում են Երևանում: Բավարար աշխատանքներ չեն իրականացվել մշակութային հուշարձան հանդիսացող 19-20-րդ դդ. սկզբի բնակելի շենքերի պահպանման և ամրապնդման ապահովման ուղղությամբ: Նախարարությունը չի ձեռնարկել բավարար քայլեր անհետացող հուշարձանները պահպանելու ուղղությամբ: Ըստ որոշ ուսումնասիրությունների, «Կումայրի» ճարտարապետական արգելոց թանգարանը հայտնվել է տարբեր երկրների 100 անհետացող հուշարձանների ցուցակում: Նախարարության կողմից առաջարկվել է արգելոցի տարածքում գտնվող բնակելի հուշարձան շենքերի վերականգման, ամրակցման համար անվճար տրամադրել առանձին հուշարձանների վերաբերյալ եղած նախագծանախահաշվարկային փաստաթղթերը, եթե հուշարձանի սեփականատերը պարտավորություն ստանձնի դրա ամրակցման և վերականգման աշխատանքների իրականացման մասով: Չնայած այս ամենին Հին Կումայրիի կենցաղն ու ոգին կրող շատ շենքեր վթարային վիճակում են: Ըստ «Պետական կարիքների զոհեր» հասարակական կազմակերպության տվյալների՝ «Աֆրիկյան եղբայրների տունը» ճարտարապետական բացառիկ հուշարձան է, որը գտնվում է քանդման վտանգի տակ:

Նախարարությունը բավարար չափով չի ապահովել յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմանները: Խնդիրն առավել ցայտուն է դրսևորվել հասարակության խոցելի խմբերի, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ մշակութային կազմակերպությունների ֆիզիկական մատչելիության բացակայության հետևանքով:

Առկա են նաև որոշակի խնդիրներ՝ եկեղեցական անշարժ կառույցների պահպանության ապահովման բնագավառում: Ուսումնասիրությունները վկայում են, որ Նախարարության կողմից հայտարարված մրցույթի արդյունքում հաճախ հաղթող ճանաչված կազմակերպությունների մոտ եկեղեցիների վերանորոգման փորձի առկայությունը լուրջ հարցադրումներ է առաջացրել հասարակությունում: Կառավարության բարեփոխումների արդյունքում հուշարձանների վերականգման աշխատանքները դադարել են լինել լիցենզավորվող գործունեություն, ինչի արդյունքում վերոհիշյալ մրցույթներին հնարավորություն են ստացել մասնակցել և շահել ցանկացած շինարարական կազմակերպություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետևողական քայլեր ձեռնարկել թանգարանների, թատրոնների, գրադարանների, կինոյի պահպանման և զարգացման ուղղությամբ՝ վերանայելով որդեգրված քաղաքականությունը, համակարգային առումով առավել կենտրոնացնելով մշակույթի ոլորտի խնդիրները Նախարարության իրավասությունների ներքո:
- Ուժեղացնել հսկողությունը մշակութային արժեքների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության բնագավառում:
- Ձեռնարկել միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային կազմակերպությունների մատչելիության ապահովման ուղղությամբ:
- Գործողություններ ձեռնարկել ոլորտի օրենսդրությունը բարելավելու, գործող օրենսդրությամբ ամրագրված դրույթների իրագործման մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ:
- Հետևողական քայլեր ձեռնարկել մարզերում մշակութային կյանքի համաչափ զարգացման ուղղությամբ:
- Բարձրացնել Նախարարության գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ապահովել Նախարարության տարեկան հաշվետվությունների հրապարակայնությունը:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ ոստիկանությունը կոչված է հանցավոր և հակահիրավական այլ ոտնձգություններից պաշտպանելու մարդու կյանքն ու առողջությունը, սեփականությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները, հասարակության ու պետության շահերը:

2011 թվականին ՀՀ ոստիկանության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Որոշ դեպքերում հետաքննության և նախաքննության մարմինները ցուցմունքներ կորզելու նպատակով, անձանց ենթարկել են դաժան, անմարդկային ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:
- Բազմաթիվ դեպքերում անձն անհիմն «հրավիրվել է» ոստիկանության բաժին, իր կամքին հակառակ պահվել բաժնում՝ փաստացի զրկվելով ազատությունից, չունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան կարգավիճակ:
- Հաճախակի են եղել դեպքերը, երբ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո 3 ժամից ավել (առանց կարգավիճակ տալու) պահել են բաժնում՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջները:
- Բազմաթիվ են դեպքերը, երբ հանցագործության մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չի տրվել և այդպիսիք, այսպես կոչված, «կցվել են շարք»:
- Որոշ դեպքերում ոստիկանության աշխատակիցների կողմից անձից, առանց օրինական հիմքի, վերցվել է անձնագիրը և պահվել իբրև երաշխիք:
- Շատ դեպքերում հանցագործության հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած անձանց դատաբժշկական փորձաքննության ուղեգիր չի տրամադրվել կամ տրամադրվել է անհարկի ձգձգումներով, երբեմն էլ՝ ժամանակավրեպ:
- Բազմաթիվ են դեպքերը, երբ խախտվել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով («Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը») սահմանված ժամկետները:
- Նյութերի նախապատրաստման ընթացքում տրված բացատրություններում առկա հակասությունների պարագայում երբեմն չեն հարուցվել քրեական գործեր, ինչը հնարավորություն կընձեռեր նախաքննություն իրականացնող մարմնին գործի օբյեկտիվությունը, լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու նպատակով իրականացնել առերես հարցաքննություններ:
- Որոշ դեպքերում խախտվել են ՁՊՎ-ներում կալանավորված անձանց պահելու ժամկետները:

- Հետաքննության և նախաքննության ընթացքում երբեմն անձինք հրավիրվել են հարցաքննության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի պահանջների խախտումով:
- Առանձին դեպքերում ոստիկանության բաժիններ բերման ենթարկված անձինք զրկվել են պաշտպան ունենալու իրավունքից:
- Եղել են բողոքներ, որ հետախուզվող անձին հայտնաբերելու պատրվակով, ոստիկանության աշխատակիցները մուտք են գործել անձի բնակարան և առանց դատարանի համապատասխան որոշման իրականացրել խուզարկություն:
- Հաճախ անձնագրերի և վիզաների վարչությունում ու տարածքային ստորաբաժիններում անհիմն մերժվել են ՀՀ քաղաքացիներին անձնագրերի տրամադրումը՝ հաշվառված չլինելու պատճառաբանությամբ:

Ոլորտի դրական զարգացումները

- 2011 թվականի վերջին երկու ամիսներին փոխվել է ոստիկանության արձագանքը իր աշխատակիցների կողմից կատարվող բռնությունների և խախտումների ահազանգերին և նման բողոքի կապակցությամբ Պաշտպանի 2011 թվականի վերջին միջնորդությանը տրվել է դրական ընթացք: Այսպես՝ քաղաքացի Ա. Ա.-ն հայտնել էր, որ քննիչ Ս. Սեդրակյանը իրեն անպարկեշտ ձևով նսեմացրել, վիրավորել, ինչպես նաև թույլ է տվել մի շարք քրեադատավարական նորմերի խախտումներ: Կատարված ծառայողական քննությամբ, քննիչ Ս. Սեդրակյանը ՀՀ ոստիկանության պետի հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից:
- Բարելավվել են ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները հայտնաբերելու գործընթացը՝ այդ նպատակով տեղադրելով տեսանկարահանող և լուսանկարահանող սարքեր:
- ՀՀ ոստիկանության կողմից մշակվել են Երևան քաղաքի վարչության կազմում օպերատիվ արձագանքման կենտրոնի և Երևան քաղաքի մարդաշատ վայրերում տեսադիտարկման համակարգերի ներդրման հայեցակարգերը, ինպես նաև դրանց տեխնիկական առաջադրանքները և ֆինանսական հաշվարկները:
- Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է՝ բարելավել ոստիկանության ծառայողների իրավական պաշտպանվածության աստիճանը, ստեղծել ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտապես գործող հանձնաժողով:
- ՀՀ ոստիկանության պետի կողմից 2011 թվականի նոյեմբերին ստորագրվել է «Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններում ներդրվող համայնքային ոստիկանության ստորաբաժանումներում նշանակման ենթակա ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացների

կազմակերպման մասին» թիվ 3327-Ա հրամանը, որի նպատակն է՝ խթանել թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրմանը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում եղել են բողոքներ, որ հետաքննության և նախաքննության մարմինները ցուցմունքներ կորզելու նպատակով անձանց ենթարկել են դաժան, անմարդկային ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Մինչդեռ, ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների, խոշտանգումների փաստերի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուղարկած գրություններին ՀՀ ոստիկանության տրված պատասխանները հաճախ ունեցել են հետևյալ հակիրճ և ոչ սպառիչ բովանդակությունը. «ՀՀ ոստիկանության շտաբի կողմից կատարված ստուգմամբ պարզվել է, որ գրությունում նշված հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում» կամ «ՀՀ ոստիկանությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացու նկատմամբ բռնության գործադրելու հանգամանքներ չեն հաստատվել»:

Միևնույն ժամանակ, 2011 թվականի վերջին երկու ամիսներին ոստիկանության արձագանքը նման ահազանգերին փոխվել է և վերջին բողոքի կապակցությամբ, Պաշտպանի միջնորդությամբ, դրան տրվել է ընթացք: Այսպես՝ քաղաքացի Ա. Ա-ն. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով հայտնել էր, որ իրեն վկայի կարգավիճակով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզի քննչական բաժանմունք հրավիրելու, կատարվելիք գործողություններն իր կողմից գաղտնատեսաձայնագրելու հանգամանքը բացահայտելուց հետո, գործով քննիչ Ս. Սեդրակյանը իրեն անպարկեշտ ձևով նսեմացրել, վիրավորել, ինչպես նաև թույլ է տվել մի շարք քրեադատավարական նորմերի խախտումներ: Ա. Ա-ն խնդրել էր Պաշտպանի աջակցությունը իր իրավունքները պաշտպանելու հարցում: Քաղաքացի Ա. Ա-ի դիմումը ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն: Ստացվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ պետի գրությունը առ այն, որ քաղաքացի Ա. Ա.-ի դիմումի կապակցությամբ կատարված ծառայողական քննությամբ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնի Կոտայքի քննչական բաժանմունքի քննիչ Սոս Գարեգինի Սեդրակյանը ՀՀ ոստիկանության պետի հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Տարվա ընթացքում շարունակել է կիառվել անձանց անհիմն և ապօրինի ոստիկանության բաժին «հրավիրվելու» պրակտիկան, երբ անձինք, իրենց կամքին հակառակ, պահվել են բաժնում՝ փաստացի զրկվելով ազատությունից: Անհրաժեշտ է հստակեցնել «բաժին հրավիրված» անձ հասկացությունը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նման կարգավիճակ չի սահմանում, ինչն էլ ոստիկանության աշխատակիցների կողմից որոշ դեպքերում շահարկվում է՝ անձին ապօրինի ազատությունից զրկելը պատճառաբանելիս:

Հաճախակի են նաև դեպքերը, երբ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց հետո պահվել է 3 ժամից ավել (առանց կարգավիճակ տալու)՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջները: Ինչպես նախորդ պարբերությունում նշված դեպքում, այնպես էլ այստեղ՝ անձը ոչ միայն ապօրինի զրկվել է ազատությունից, այլ այդ ընթացքում խախտվել է նաև նրա պաշտպան ունենալու իրավունքը: Չնայած այն հանգամանքին, որ

պրակտիկայում նմանատիպ դեպքերը բազմաթիվ են, այդուհանդերձ, դրանց հայտնաբերումը գրեթե անհնար է դառնում, երբ ոստիկանության բաժնում վարվող համապատասխան մատյանը լրացվում է հետին ամսաթվով (ժամով):

Բազմաթիվ են դեպքերը, երբ հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված թվով 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու փոխարեն կազմվել է եզրակացություն և «կցվել է շարք»: Տվյալ իրավիճակում անձը զրկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման», այլ ոչ թե «եզրակացության» բողոքարկման հիմքերն ու կարգը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չղեկավարվելը ոստիկանությունում հիմնավորում են ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/34 համատեղ հրամանի առկայությամբ, որը սակայն գրանցված չէ ՀՀ արդարադատության նախարարությունում, ուստի և չունի իրավական ուժ: Այստեղ հատկանշական է նաև այն, որ տվյալ հարցի կարգավորման առումով հանցագործության մասին հաղորդումների քննարկման գործընթացը կանոնակարգելու, այս բնագավառում ձևավորված ոչ ճիշտ պրակտիկան օրենքին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ ոստիկանության պետն իր 23.03.2010թ. թիվ 9-Ց ցուցումով հանձնարարել է ՀՀ ոստիկանության բոլոր համապատասխան ստորաբաժանումներին խստորեն առաջնորդվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180- 181 հոդվածների պահանջներով:

Ոստիկանության աշխատակիցները մինչ օրս շարունակում են ապօրինի կարգով վերցնել անձից անձնագիրը և պահել իբրև երաշխիք: ՀՀ կառավարության 25.12.1998թ. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821 Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 19-րդ կետը սպառիչ կերպով նախատեսում է անձնագիրը վերցնելու դեպքերը և կարգը, համաձայն որի՝ կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, ինչպես նաև ազատազրկման դատապարտված անձանց անձնագրերը, ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը, իսկ ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագրերը՝ զինկոմիսարիատները: Արգելվում է անձնագիր վերցնելը՝ բացառությամբ վերը նշված կետով նախատեսված դեպքերի:

Որոշ դեպքերում հանցագործության հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած անձանց դատաբժշկական փորձաքննության ուղեգիր չի տրամադրվել կամ տրամադրվել է անհարկի ձգձգումներով (ժամանակավրեպ): Անհրաժեշտ է հետևողականություն դրսևորել փորձաքննության ուղեգիր չտրամադրելու կամ անհարկի ձգձգումներով տրամադրելու, փորձագիտական հիմնարկների կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում փորձաքննություն անցկացնելու և փորձագիտական եզրակացությունները ողջամիտ ժամկետում տրամադրելու նկատմամբ:

Բազմաթիվ են դեպքերը, երբ խախտվել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար սահմանված ժամկետները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի («Հանցագործությունների մասին

հաղորդումների քննարկման կարգը») համաձայն հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Կալանավորված անձինք ձերբակալվածներին պահելու վայրերում (ՁՊՎ) երբեմն պահվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի պահանջների խախտումով՝ 3 օրից ավել:

Ոստիկանության աշխատակիցներն այս երևույթը որոշ դեպքերում մեկնաբանում են կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինությամբ, մինչդեռ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ՔԿՀ-ից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը ՔԿՀ-ից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ՁՊՎ՝ մինչև 3 օր տևողությամբ:

Եղել են դեպքեր, երբ հետաքննության կամ նախաքննության մարմնի կողմից անձը հրավիրվել է հարցաքննության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի («Հարցաքննության կանչելու կարգը») պահանջների խախտումով, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանությունից ուղարկված ծանուցագրում նշված չի լինում, թե ինչպիսի դատավարական կարգավիճակով է անձը հրավիրվել:

Որոշ դեպքերում ոստիկանության բաժիններ բերման ենթարկված անձինք զրկվել են Պաշտպան ունենալու իրավունքից: Ոստիկանության իրավասու պաշտոնատար անձինք չեն ապահովել բերման ենթարկվածի՝ փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, քանի դեռ բերման ենթարկված անձի վերաբերյալ չի կազմվել ձերբակալման արձանագրություն կամ չի կայացվել խափանման միջոց ընտրելու մասին որոշում: Դրանով սահմանափակվել է մարդու՝ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքը, ինչը նաև հակասել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին: Հատկանշական է, որ նշված խնդրի կարգավորման նպատակով առկա է նաև ՀՀ ոստիկանության պետի 03.04.2010թ. թիվ 12-Ց բ ցուցումը, որի 2-րդ կետի համաձայն՝ բերման ենթարկվածին պետք է հնարավորություն ընձեռել բացատրություն տալ փաստաբանի մասնակցությամբ, եթե մինչև ձերբակալման արձանագրություն կազմելը կամ խափանման միջոց ընտրելը անհրաժեշտություն է առաջացրել անձից վերցնել բացատրություն կամ անցկացնել օպերատիվ հարցում:

Առանձին դեպքերում հետախուզվող անձին հայտնաբերելու պատրվակով ոստիկանության աշխատակիցները մուտք են գործել անձի բնակարան, և առանց դատարանի համապատասխան որոշման իրականացրել խուզարկություն՝ խախտելով անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

ՀՀ անձնագրային և վիզաների վարչությունում (ԱՎՎ) ու տարածքային ստորաբաժանումներում ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու վերաբերյալ քաղաքացիների դիմումները մերժվել են հաշվառում չունենալու պատճառաբանությամբ: ՀՀ կառավարության 25.12.1998թ. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային

համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821 Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 10-րդ կետը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի 03.02.2011թ. «Մշտական հաշվառում չունեցող քաղաքացիներին փաստացի բնակության վայրում հաշվառելիս, բնակության վայրում բնակվելու փաստը ստուգելու աշխատանքները կանոնակարգելու մասին» թիվ 159Ա հրամանը նախատեսում է անձնագրի տրամադրում նաև ըստ փաստացի բնակության վայրի: Նշված խնդիրները շատ դեպքերում դրական լուծում են ստացել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունից հետո:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ակտիվացնել հսկողությունը՝ հանցագործության մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալու և ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/34 համատեղ (իրավական ուժը կորցրած) հրամանով ղեկավարվելու արատավոր պրակտիկան բացառելու ուղղությամբ:
- Դիտարկումներ և այլ տեսակի հսկողական ընթացակարգեր կիրառել նաև ՁՊՎ-ներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի պահանջների խախտումները առավելապես վերացնելու, ինչպես նաև հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջները խախտելով (3 ժամից ավել առանց կարգավիճակ տալու) պահելու դեպքերը վերացնելու ուղղությամբ:
- Ակտիվացնել հսկողությունն անձին ոստիկանություն անհիմն բերման ենթարկելու, ապօրինի կարգով նրանցից անձնագիր վերցնելու և այն իբրև երաշխիք ետ չվերադարձնելու դեպքերը բացառելու ուղղությամբ:
- Օրենքով սահմանել կամ գործնականում բացառել «բաժին հրավիրված» անձ հասկացությունը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նման կարգավիճակ չի սահմանում:
- Ոստիկանության բաժիններում անցկացվող ծառայողական պարապմունքների ծրագրերում ընդգրկել և ոստիկանության ծառայողների ուշադրությունը հրավիրել հանցագործության վերաբերյալ հաղորդումների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված ժամկետների չպահպանման, ինչպես նաև բերման ենթարկվածին փաստաբանի մասնակցության ապահովման խնդրի հետ կապված հարցերի վրա:
- Հետևողականություն դրսևորել հանցագործության հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած անձանց դատաբժշկական փորձաքննության ուղեգիր չտրամադրելու կամ անհարգի ձգձգումներով տրամադրելու, փորձագիտական հիմնարկների կողմից փորձագիտական եզրակացությունները ողջամիտ ժամկետում չտրամադրելու նկատմամբ:
- ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ում և տարածքային բաժիններում պարբերաբար անցկացնել դիտարկումներ՝ քաղաքացուն մտահոգող խնդիրները վերհանելու, ինչպես նաև անձնագիր ստանալու հետ կապված անհիմն մերժումները հնարավորինս վերացնելու ուղղությամբ:

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարարությունը հսկողություն է իրականացնում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և վարժական հավաքների անցկացման նկատմամբ, ապահովում է զինված ուժերում պաշտպանության բնագավառի օրենսդրության պահանջների կատարումը, իրականացնում է ընդհանուր կամ մասնակի զորահավաքների անցկացումը, իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանությունը և այլն:

2011 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

Զինված ուժերում մահվան դեպքերի որոշ մասը պայմանավորված է եղել ոչ կանոնադրային հարաբերությունների արդյունքում ծագող խնդիրներով և դրանց կանխման ուղղությամբ սպայական կազմի կողմից ձեռնարկվող միջոցների ոչ բավարար արդյունավետությամբ:

- ՀՀ զինված ուժերի որոշ սպաներ ցանկություն են հայտնել, զինվորական ծառայութան անցնելու մասին պայմանագիրը լուծել վաղաժամկետ, սակայն բարձրագույն հրամանատարական կազմը անհիմն ձգձգել է, իսկ որոշ դեպքերում սպաների նկատմամբ դրսևորվել է տարբերակված մոտեցում:
- Ժամկետային զինծառայողներից ստացվել են բազմաթիվ բողոքներ այն մասին, որ որևէ կարգապահական տույժ չունեցող զինծառայողներ՝ օրենքով սահմանված ծառայության 24 ամիսը լրանալուց հետո չեն զորացրվել, ինչը պատճառաբանվել է օրենքից չբխող տարբեր հիմնավորումներով:
- Առողջական վիճակի պատճառով տարկետում ստացած անձանց տարկետման ժամկետից շուտ պարտադրվել է ներկայանալ կրկնակի փորձաքննության:
- ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (ԿՌԲՀ) որոշումներով զինվորական ծառայության համար ոչ պիտանի են ճանաչվել և ՀՀ զինված ուժերից վաղաժամկետ զորացրվել են 500 ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողներ: Նման թվաքանակով վաղաժամկետ զորացրելու փաստը վկայում է այն մասին, որ անձանց զորակոչելիս մանրակրկիտ բուժհետազոտության արդյունավետ կազմակերպումը զինկոմիսարիատներին չի հաջողվել:
- ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունն իրականացվել է բնակչությանը մոտ վայրի զորամասում ծառայություն անցնելու մի շարք պայմանների ու չափանիշների անհստակության պարագայում, իսկ որոշ դեպքերում թույլ են տրվել այդ պայմանների խախտումներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Պարտադիր ժամկետային զինծառայողներին ՀՀ կենտրոնական և կայազորային զինվորական դատախազություններում հետագա ծառայությունը շարունակելու նպատակով տեղափոխելը կոռուպցիոն ռիսկեր է պարունակել: Նմանատիպ կառույցներում պարտադիր զինվորական ծառայության առկայությունը ընդունելի չէ:
- Պաշտպանության նախարարության համակարգում աշխատող պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիոն եղանակներով հարստացման կանխմանն ուղղված նախարարության ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել: Կոռուպցիոն նման դրսևորումների առկայությունը էականորեն վտանգում է նախարարության գործունեության արդյունավետությունը և նպաստում տվյալ մարմնի կողմից մարդու իրավունքների կոպիտ խախտումների աճին:
- Չլուծված է մնացել շատ զինծառայողների բնակարանային պայմանների ապահովման խնդիրը:

Արձանագրված դրական զարգացումները

- 2011թ. ընթացքում ՀՀ ՊՆ թեժ գիծ ստացվել է մոտ 1370 ահազանգ, որոնցից 650-ին տրվել է ընթացք, և դրանք ստացել են դրական լուծում, իսկ մնացած 720-ը գրանցվել են որպես կեղծ ահազանգ:
- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կառուցվել և վերակառուցվել են մոտ 5 բնակելի շենքեր, որի արդյունքում մոտ 210 զինծառայողներ ապահովվել են ծառայողական բնակարաններով, որից Երևան քաղաքում՝ մոտ 90 զինծառայող, իսկ մարզերում՝ մոտ 120 զինծառայող:
- Ըստ պաշտոնական տվյալների, ընթացիկ տարում՝ նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն նվազել են զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերը:
- Վերանորոգվել, հիմնանորոգվել են մի շարք զորամասերի զորանոցներ, բուժկետեր, ճաշարանային մասնաշենքեր և այլն, որոնք համապատասխանեցվել են տիպային շինություններին:
- 2011թ. ոչ կանոնադրային հարաբերությունները բացառելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի կողմից մշակվել և զորքեր են առաքվել «Հրամանատարը զինվորի ավագ ընկեր» հատուկ ուղերձը, «Հայոց բանակի մարտական ոգու և զգոնության կտրուկ բարձրացմանն ուղղված», «Զինվորական կարգապահության կտրուկ բարձրացմանն ուղղված», «Զինվորական կարգապահության կտրուկ բարձրացմանը և արտակարգ դեպքերի ու պատահարների կանխարգելմանն ուղղված» մեթոդական ցուցումները, զորամասերում տարվել են բացատրական աշխատանքներ, իրականացվել են քննարկումներ ստորաբաժանումների անձնակազմի և հրամանատարների մասնակցությամբ, ինչպես նաև կազմվել և զորքեր է առաքվել «Զինվորական ենթակայության կարգի և ծառայողների կանոնադրային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները» մեթոդական ուղեցույցը և այլն:
- Ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսին ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ

զինվորական դատախազի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությամբ կայացած աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են զինված ուժերում հանցավորության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանն առնչվող հարցեր, որի արդյունքում ստեղծվել է զինված ուժերում հանցագործությունների կանխարգելման խումբ:

- Նախորդ տարվա ընթացքում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ թարգմանվել է «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների մասին» ձեռնարկը և կազմվել է «Զինված ուժերում մարդու իրավունքները» դասընթացի ծրագիր: Նախքան զինված ուժերում և ռազմաուսումնական հաստատություններում այդ դասընթացի ներդրումը, ԵԱՀԿ օժանդակությամբ ՀՀ ՊՆ բոլոր զորամիավորումներում և ռազմաուսումնական հաստատություններում անցկացվել են զինված ուժերում մարդու իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ ճանաչողական բնույթի դասախոսություններ, որոնց մասնակցել են զորամիավորումների, զորամասերի հրամանատարների ԱՀՏԱ գծով տեղակալներ, իրավաբաններ և այլ անձինք:
- Դարձյալ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ նախապատրաստվել է «Առաջնորդությունը Զինված ուժերում» դասագիրք--ձեռնարկի նախագիծ, որն ուղղված է զինված ուժերում անձնակազմի միջև փոխհարաբերությունների բարելավմանը, ղեկավարման և կառավարման նոր մեթոդների և միջոցների ներդրմանը և ոչ կանոնադրային հարաբերությունների կանխարգելմանը: ՀՀ պաշտպանության նախարարության և Զինված ուժերի գերագույն շտաբի համապատասխան ծառայությունների կողմից դասագիրքն ուսումնասիրվելուց հետո քայլեր կձեռնարկվեն համանուն դասընթացի ներդրման ուղղությամբ:
- Պաշտպանության նախարարի և Զինված ուժերի գերագույն շտաբի պետի տեղակալների գլխավորությամբ աշխատանքային խմբեր են գործուղվել սահմանամերձ և հեռավոր շրջաններում տեղակայված զորամասեր, որոնց նպատակն է եղել անձամբ հանդիպել անձնակազմի անդամներին, ներկայացնել կարգապահության ամրապնդմանն ուղղված հանձնարարականների և ծանոթանալ անձնակազմի բարոյահոգեբանական վիճակին:
- Կառուցողական համագործակցություն է ծավալվել Պաշտպանության նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջև, բողոքների քննարկման, առկա խնդիրների լուծման և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցում իրազեկության բարձրացման ուղղությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության նախարարության տվյալներով, 2011թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում գրանցվել է զինվորական ծառայության անցնելու հետ կապված 36 մահվան դեպք, որոնց հիմնական պատճառներն են՝ սպանությունը, զենքի օգտագործման կանոնների խախտումը, ականի պայթյունը, հակառակորդի դիպուկահարների կրակոցները, ինքնասպանությունը, ինքնասպանության հասցնելը, հիվանդությունը,

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ավտովթարը և դժբախտ պատահարը: Բանակում արձանագրված մահվան դեպքերով եղել են բազմաթիվ դժգոհություններ: Մահացած զինծառայողների հարազատները գտնում են, որ բանակում արձանագրված մահերի մեծ մասը սպայակազմի անբավարար աշխատանքի կամ նրանց ոչ իրավաչափ գործողությունների հետևանք են:

ՀՀ զինված ուժերի որոշ սպաներ ցանկություն են հայտնել զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագիրը վաղաժամկետ լուծել, սակայն բարձրագույն հրամանատարական կազմը անհիմն ձգձգել է: Նրանք հիմնականում ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի, կամ էլ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի շրջանավարտներ են, որոնք պատրաստակամություն են հայտնել բավարարելու ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանը: Զորացրումը մերժելիս որոշ սպաների առաջարկվել է որպես զորացրման հիմք նշել զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելը կամ զինծառայողի պատիվն արատավորող արարք կատարելը: Այս հարցի շուրջ ՀՀ պաշտպանության նախարարությունը Պաշտպանին ներկայացրել է մեկնաբանություն՝ նշելով, որ ընդհանուր առմամբ հետուսումնական զինվորական ծառայությունից հրաժարվող սպաների հետ, համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի կարգադրության, մշտապես տարվել է հետևողական աշխատանք: Ուսումնասիրվել են այդ սպաների խնդիրները, հանգամանքները, տարվել են անհատական զրույցներ համապատասխան վերադաս պետերի կողմից:

Պաշտպանը ժամկետային զինծառայողներից ստացել է բազմաթիվ բողոքներ այն մասին, որ որևէ կարգապահական տույժ չունեցող զինծառայողներին երկու տարին լրանալուց հետո չեն զորացրել: Զորամասի հրամանատարությունը մշտապես պարզաբանել է, որ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով զորացրման աշխատանքներր սկսվում են մի քանի փուլերով, անկախ այն բանից՝ լրացել է զինվորական ծառայության երկու տարին թե ոչ, մինչդեռ «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պարտադիր զինվորական ծառայության ժամկետը շարքային կազմի համար սահմանվում է 24 ամիս: Այսինքն, գործող օրենսդրությունը շատ հստակ և իմպերատիվ կերպով ամրագրում է 24 ամսյա զինվորական ծառայության ժամկետը:

ՀՀ օրենսդրության համաձայն, հանրապետական բժշկական հանձնաժողովի կողմից կայացված որոշումները վարչական ակտ են, և իրավական հետևանքներ առաջացնում են որոշակի ժամկետով: Գործնականում, սակայն, հիվանդության պատճառով տարկետում ստացած քաղաքացիներից պահանջել են ներկայանալ զինկոմիսարիատ և անցնել կրկնակի բժշկական փորձաքննություն: Ընդ որում, ՀՀ զինվորական դատախազի կողմից ներկայացված համապատասխան միջնորդությամբ, տարկետում ստացած անձինք ընտրովիության սկզբունքով են ուղարկվել լրացուցիչ բուժհետազոտության: Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով զինվորական դատախազը նման իրավասությամբ օժտված չէ, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով մեկ վարչական մարմնի կողմից կայացված ակտը կարող է վերացվել կամ վերադաս վարչական մարմնի կողմից, կամ էլ՝ դատական կարգով:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տվյալների, 2011թ. ընթացքում ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումներով զինվորական ծառայության համար ոչ պիտանի են ճանաչվել և ՀՀ զինված ուժերից վաղաժամկետ զորացրվել են մոտ 500 ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողներ, որոնք զորակոչված են եղել վերջին երկու տարիների տարբեր զորակոչերին: Նման թվաքանակով վաղաժամկետ զորացրելու փաստը վկայում է այն մասին, որ անձանց զորակոչելուց մանրակրկիտ բուժհետազոտության արդյունավետ կազմակերպումը զինկոմիսարիատներին չի հաջողվել: Առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձանց զորակոչի մի քանի դեպք է արձանագրվել և կանխվել նաև Պաշտպանի միջամտությամբ:

ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից կայացված որոշումների անհիմն լինելու մասին վկայող Պաշտպանին ուղղված դիմում - բողոքների ուսումնասիրությունը փաստել է, որ մարդիկ ՀՀ սահմանադրությամբ իրավունք ունենալով որպես վարչական ակտ բողոքարկելու այդ որոշումները՝ չեն բողոքարկել, քանի որ քաղաքացուն չի տրամադրվել հանձնաժողովի որոշման պատճեն: Ներկայումս ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում առկա թերություններն ու բացթողումները հանգեցրել են նման կամայականության: Տվյալ պարագայում անհրաժեշտ է նշել կոնկրետ ժամկետ, որի ընթացքում զինծառայողը կարող է ստանալ հանձնաժողովի որոշումը: Բացի այդ, հոգեբույժ-մասնագետի աշխատանքից ազատվելու և հանձնաժողովում նման մասնագետի բացակայության պատճառով հանձնաժողովը շուրջ երկու ամիս նիստեր չի հրավիրել, իսկ հոգեբուժարանում գտնվող զինծառայողի դուրսգրման ժամկետը լրացել էր, բայց քանի որ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը նիստ չէր հրավիրել, պաշտպանության նախարարի համապատասխան հրամանում էլ այլ մասնագետներ ժամանակավորապես ներգրավվելու դրույթ նախատեսված չէ, զինծառայողը շարունակել էր մնալ հոգեբուժական բաժանմունքում:

Բնակությանը մոտ վայրի զորամասում ծառայություն անցնելու մի շարք պայմաններ ու չափանիշներ կան, որոնք նախատեսված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով: Պաշտպանության նախարարությունը հիմնավորել է նախարարության կենտրոնական ապարատում այդ սկզբունքի խախտմամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնելու գործընթացի իրավաչափությունը՝ հղում կատարելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասին: Օրենքի նշված մասում թվարկված են այն բոլոր դեպքերը, որոնց առկայության պայմաններում զորակոչիկն օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից: Ընդ որում, նույն մասի «ե» կետով նախատեսվում է, որ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով «այլ զորակոչիկներ» նույնպես կարող են օգտվել այս արտոնությունից: «Այլ զորակոչիկները» եզրույթի սահմանումը հստակեցված չէ, և պաշտպանության նախարարությունը այն մեկնաբանել է՝ նշելով, որ գործնականում ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով բնակության վայրին մոտ գտնվող զորամասերում զինվորական ծառայություն են անցնում առանձին մասնագիտություններին տիրապետող (մարզիկներ, երաժիշտներ, օպերատորներ, օտար լեզուներին վարժ տիրապետող անձինք, ծրագրա-

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

վորողներ և այլն) զինծառայողները: Մինչդեռ մեր աղբյուրները վկայել են, որ նման պայմաններում ծառայում են անձինք, որոնք չեն մտնում նշված անձանց շրջանակի մեջ:

Մեր աղբյուրները վկայել են, որ պարտադիր ժամկետային զինծառայողներին ՀՀ կենտրոնական և կայազորային զինվորական դատախազություններում հետագա ծառայությունը շարունակելու նպատակով տեղափոխելը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, քանի որ ծառայության պայմանները նշված վայրերում բոլորովին այլ են: Ընդ որում, զինվորական դատախազությունն էլ ոչ զինվորական կառույց է: ՀՀ պաշտպանության նախարարությունը Պաշտպանին տեղեկատվություն չի տրամադրել, թե քանի նման զինծառայողներ կան, և ինչ չափանիշներով են նրանք տեղափոխվում, միաժամանակ փորձել է հիմնավորել, որ «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը կարգավորում է զինծառայողներին հետագա ծառայությունը շարունակելու նպատակով պետական լիազոր այլ մարմիններ տեղափոխելու հարցերը: Չհամաձայնվելով նման մեկնաբանության հետ՝ գտնում ենք, որ ընդհանրապես պետք է վերացնել նմանատիպ կառույցներում պարտադիր զինվորական ծառայության առկայությունը, քանի որ զինվորական դատախազությունը, որպես ՀՀ գլխավոր դատախազության բաղկացուցիչ մաս, ունի անհրաժեշտ ռեսուրսներ, բավարար թվաքանակով աշխատակիցներ, որոնք ապահովում են դատախազության բնականոն աշխատանքները: Նույն կերպ նախարարությունը Պաշտպանին ներկայացրել է տեղեկատվություն, թե ինչ չափանիշներով են պարտադիր զինվորական ծառայության զորակոչվել մասնավորապես ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն, զինվորական հոսպիտալներ, քաղաքամերձ զորամասեր՝ փորձելով դա մեկնաբանել որպես պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ, այնինչ նախարարությունից Պաշտպանը խնդրել է ոչ թե թվային տվյալները, այլ նման որոշումների ընդունման չափանիշները:

2011թ. ընթացքում արձանագրվել են զինծառայողների կողմից զորամասերում անցկացված ծառայողական քննությունների արդյունքներով կայացված որոշումների 6 բողոքարկման դեպքեր, որոնց արդյունքում բավարարվել են բողոքները: Մեկ տարվա ընթացքում բողոքարկման նման փոքր քանակը կարող էր գնահատվել դրական, եթե Պաշտպանի աշխատակազմ ստացված դիմումները և մամուլում տեղ գտած հրապարակումները չվկայեին սպայական կազմի խախտումների այլ վիճակագրության մասին: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ բողոքարկման նման ցածր տոկոսը պայմանավորված է բողոքարկման մեխանիզմների նկատմամբ զինծառայողների անվստահությամբ:

Դժգոհություններ են եղել զինված ուժերի կարիքների համար ապրանքներ ձեռք բերելու ընթացակարգերի վերաբերյալ: Որոշ ապրանքատեսակներ ընդգրկվել են պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ապրանքների շարքում, օրինակ՝ պաշտպանության նախարարության կարիքների համար գնման ենթակա ապրանքներից ծաղիկներն ու ծաղկեպսակները, որոնք, ըստ պաշտպանության նախարարության ի թիվս այլ ապրանքների և ծառայությունների, գտնվում են ապագաղտնիացման գործընթացի ավարտական փուլում:

Դեռևս չլուծված են մնացել զինծառայողների բնակարանային պայմանների հարցը, չնայած, ընթացիկ տարում այդ ուղղությամբ որոշ դրական տեղաշարժեր արձանագրվել

են: Ընթացիկ տարում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կառուցվել և վերակառուցվել են մոտ 5 բնակելի շենքեր, որի արդյունքում մոտ 210 զինծառայողներ ապահովվել են ծառայողական բնակարաններով, որից Երևան քաղաքում՝ մոտ 90 զինծառայող, իսկ մարզերում՝ մոտ 120 զինծառայող: Այնուամենայնիվ, Պաշտպանի ներկայացուցիչների՝ տարբեր մարզեր կատարած այցելությունների ընթացքում մեծ թվով սպաներ դժգոհել են բնակարան չունենալու խնդրից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել միջոցներ զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագրի դադարեցման գործընթացներում խոչընդոտները վերացնելու ուղղությամբ:
- Մշակել կարգ՝ զորակոչի և զորացրման աշխատանքներում համաչափությունն ապահովելու նպատակով: Արդյունքում անշեղորեն կատարել «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի զորացրմանը վերաբերող պահանջները:
- Վերանայել ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. ապրիլին ստորագրված այն հրամանը, ըստ որի ընտրովիության սկզբունքով որոշ զինակոչիկներ ուղարկվում են կրկնակի բուժհետազոտության:
- Ուժեղացնել հսկողությունը բժշկական հանձնաժողովներում օբյեկտիվ հետազոտություն անցկացնելու ուղղությամբ:
- Հստակեցնել «Զինապարտության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված «այլ զինակոչիկներ» եզրույթը:
- Հանրային իրազեկման նպատակով բանակում զինծառայողներին բացատրել իրենց իրավունքը՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումները ինչպես վարչական վերադասության, այնպես էլ դատական կարգով բողոքարկելու ուղղությամբ:
- Բացառել ժամկետային զինծառայողների ծառայությունը զինվորական դատախազությունում անցկացնելու ուղղությամբ:
- ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն, զինվորական հոսպիտալներ և քաղաքամերձ զորամասեր զորակոչի հսկողությունն իրականացնել ընդհանուր կարգով՝ բացառելով կոռուպցիոն երևույթները:
- Ուսումնասիրություններ անցկացնել համակարգի ներսում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:
- Մշակել գնումների առավել պարզեցված և թափանցիկ ընթացակարգեր, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել ապագաղտնիացնելու մի շարք ապրանքների և ծառայությունների ձեռքբերման տեղեկատվությունը:
- Ձեռնարկել միջոցներ սահմանմերձ զորամասերում ծառայություն անցնող սպաների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ:

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) ապահովելով պետական բյուջեի մուտքերը և հարկային ու մաքսային վարչարարությունը՝ իրականացնում է հարկ վճարողների սպասարկում, հարկ վճարողների հաշվառում, հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում, հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում, վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացում, ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխելիս՝ մաքսասակագնային մեխանիզմների կիրառման, ներմուծման ու արտահանման սահմանված կարգի կիրառման ապահովում, մաքսային հսկողության ու ձևակերպումների կազմակերպում և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

2011 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեում անցկացված ստուգումները ցույց են տվել, որ առանձին դեպքերում հարկ վճարողների ներկայացրած հաշվարկների ու հաշվետվությունների կոմիտեի աշխատակիցների կողմից վերլուծություններն ու ուսումնասիրությունները չեն կատարվել ժամանակին և պատշաճ, իսկ աշխատանքները արդյունավետ չեն կազմակերպվել:
- Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը պատշաճ ձևով ներկայացված չեն եղել մաքսային արժեքի վրա ազդեցություն ունեցող և ավտոմեքենայի վրա տեղադրված լրացուցիչ պահեստամասերի արժեքները:
- Համակարգի աշխատանքներում դեռևս համատարած չի եղել հաստատված վարքագծի կանոնների լիարժեք պահպանումը հարկային և մաքսային ծառայողների կողմից:
- Մաքսային միջնորդների և տնտեսվարող սուբյեկտների համար ՊԵԿ-ի կողմից տարեկան կտրվածքով կազմակերպվել է հայտարարագրերի ներկայացման ուսուցման ընդամենը երկու կամ երեք դասընթաց: Արդյունքում, դեռևս ցածր է տնտեսվարող սուբյեկտների կողմից ինքնահայտարարագրման գործընթացի մակարդակը, մինչդեռ մեծ է մաքսային միջնորդների կողմից ներկայացված հայտարարագրերի քանակը: Նման իրավիճակում մաքսային միջնորդների կողմից սահմանված բարձր սակագները լրացուցիչ տնտեսական բեռ են հանդիսացել տնտեսվարող սուբյեկտների համար:
- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություն-ները (06.12.2011թ.) որոնք ընդունվել են հապճեպ և առանց հանրային քննարկման, գնահատվում են բացասական: ՀՀ պետական եկամուտների

կոմիտեն իր իրավասությունների շրջանակներում անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել նշված հարկային օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների նախագծերի հանրային քննարկումներ անցկացնելու, և դրանք ողջամիտ ժամկետում ուժի մեջ մտցնելու և կիրառելու հարցում:

Արձանագրված դրական զարգացումները

- Հարկային և մաքսային հսկողության բնագավառում համատարած ստուգումներից ամբողջական անցում է կատարվել ռիսկային չափանիշների հիման վրա ստուգումների համակարգին (ՌՉՍՀ), իսկ վերջինս էլ ավտոմատացվել է:
- 2011 թվականին Պետական եկամուտների կոմիտեն քայլեր է ձեռնարկել հնարավորինս բացառելու հարկատու-տեսուչ շփումը՝ փոխարենը ներդնելով էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների համակարգը:
- Բարեփոխվել է հարկ վճարողների սպասարկման կազմակերպումը՝ գործարկելով ՊԵԿ համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնները և սրահները, հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնը, տեղեկատվական տերմինալները, ինչպես նաև ՊԵԿ ուսումնական կենտրոնը:
- Պարզեցվել է հարկային և մաքսային օրենսդրությունը ՓՄՁ-ների համար՝ բարենպաստ հարկման ռեժիմների ներդրմամբ և հաշվետվությունների քանակի ու պարբերականության օպտիմալացմամբ:
- Ապահովվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների համատարած կիրառումը և ՀԴՄ-ների կտրոնների ստացման մշակույթի ներդրումը:
- Մաքսային վարչարարության բնագավառում ներդրվել է TWM հայտարարագրման ավտոմատ համակարգ, որն ուղղված է մաքսային ձևակերպումների համար պահանջվող ժամանակահատվածի կրճատմանը, մաքսային հսկողության արդյունավետությանը:
- Կրճատվել է մաքսային ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը և ժամանակը, մաքսային հսկողության համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի քանակը կրճատվել է 5-ով, ներկայումս մաքսային ձևակերպումների ժամանակ պահանջվում է 3 փաստաթուղթ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2011թ. ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել են ստուգումներ: Արձանագրվել են «Շահութահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Պարզեցված հարկի մասին», «Հարկերի մասին» օրենքների հոդվածներով սահմանված պատժամիջոցների ոչ ճիշտ կիրառման խախտումներ: Այսինքն՝ առանձին դեպքերում հարկ վճարողների ներկայացրած հաշվարկների ու հաշվետվությունների կոմիտեի աշխատակիցների կողմից վերլուծություններն ու ուսումնասիրությունները չեն կատարվել ժամանակին և պատշաճ, իսկ աշխատանքները արդյունավետ չեն կազմակերպվել:

Որոշակի խնդիրներ են ծագել ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը: Նշված խնդիրների վերաբերյալ

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՊԵԿ-ը հայտնել է, որ ինչպես տնտեսվարող սուբյեկտները, այնպես էլ ՀՀ քաղաքացիները ներմուծվող ավտոմեքենաների մաքսային արժեքի որոշման չափանիշներին կարող են ծանոթանալ՝ այցելելով ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատուն, որտեղ հատուկ այդ նպատակին ծառայող տեղեկատվական վահանակի վրա տեղադրված է անհրաժեշտ տեղեկատվությունը կամ զանգահարել նույն մաքսատան տեղեկատու ծառայություն: Այդուհանդերձ, ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը պատշաճ ձևով ներկայացված չեն եղել մաքսային արժեքի վրա ազդեցություն ունեցող և ավտոմեքենայի վրա տեղադրված լրացուցիչ պահեստամասերի արժեքները:

Ըստ պաշտոնական տվյալների ՊԵԿ ծառայողական քննութուն անցկացնող հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա, օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ընթացիկ տարում համակարգից ազատվել են 23 ծառայողներ: Այս և այլ տվյալները վկայում են, որ ՊԵԿ աշխատանքներում դեռևս բավարար չի եղել հարկային և մաքսային ծառայողների կողմից հաստատված վարքագծի կանոնների լիարժեք պահպանումը:

2011թ. դեկտեմբեր ամսին «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները ընդունվել են առանց հասարակական կազմակերպությունների կամ այլ շահագրգիռ անձանց հետ քննարկումների կազմակերպելու և գործողության մեջ են դրվել չափազանց հապճեպ: Բացի այդ, փոփոխությունը կարող է նպաստել տնտեսական դաշտում բևեռացմանը կամ խոչընդոտել հայտնի միջազգային ապրանքանիշերի մուտքը հայաստանյան շուկա, ովքեր իրենք են վաճառում իրենց ապրանքները: Օրենքի վերաբերյալ Պաշտպանի հարցադրմանը Պետական եկամուտների կոմիտեից պատասխանել են, որ այդ օրենքի նախագիծը ՀՀ ազգային ժողով է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ անտեսելով, որ ակտը կիրառող մարմինը չի կարող չտիրապետել օրենսդրական նախաձեռնության տրամաբանությանը և չի կարող պատասխանատվություն չկրել իր գործառույթների ոլորտում առկա իրավական ակտերի ընդունման և կիրառման համար:

Պետական եկամուտների կոմիտեի տվյալներով 2011թ.-ին կոմիտեի կողմից իրականացվել է 18150 ստուգում, այդ թվում՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումներ և մասնակի ստուգումներ, որոնց արդյունքում կազմված ստուգման ակտերից թվով 269-ը բողոքարկվել են վերադասության կարգով (որը կազմում է ընդհանուր թվի 1.4%–ը), 356 ստուգման ակտ՝ դատական կարգով (որը կազմում է ընդհանուր թվի 1.9%–ը): Ըստ նույն աղբյուրի, վերադասության կարգով բողոքարկման արդյունքում, ի օգուտ տնտեսվարող սուբյեկտի, կայացվել է 97 որոշում, դատական կարգով բողոքարկման արդյունքում, ի օգուտ տնտեսվարող սուբյեկտի, կայացվել է 220 վճիռ: Դրական է, որ բողոքարկման տոկոսը չափազանց ցածր է: Այդուհանդերձ հնարավոր է, որ նման վիճակագրությունը բողոքարկման մեխանիզմների հանդեպ հանրության անվստահության հետևանք է:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ կառավարությունն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում հանրությանն առավել իրազեկ դարձնելու նպատակով,

տեղադրել մաքսային բնագավառը կարգավորող ամբողջ տեղեկատվությունը (մաքսային արժեքի որոշման մեթոդաբանություն, մաքսային ձևակերպումներ և մաքսային հսկողություն, մաքսային վճարներ և այլն):

- Մաքսային հայտարարագրերի ներկայացման գործընթացում մաքսային միջնորդների ընդգրկվածությունը հասցնել նվազագույնի, և ձեռնարկել միջոցառումներ տնտեսվարող սուբյեկտների ինքնահայտարարագրման համակարգի հետագա զարգացման ուղղությամբ:
- Վերանայել հապճեպ և ոչ մասնակցային գործընթացով ընդունված ոլորտը կարգավորող այն իրավական ակտերը, որոնք էականորեն շոշափում են իրավաբանական և ֆիզիկական անձանց տնտեսական շահերը:
- Ստեղծել ներքին աուդիտի ստորաբաժանում համապատասխան գործառույթներով՝ հնարավոր չարաշահումները բացառելու նպատակով, ապահովելով հարկային և մաքսային ծառայողների կողմից օրենսդրությամբ սահմանված վարքագծի կանոնների անվերապահ կատարումը:

Տարեկան զեկույցը կազմվել է << մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հանրապետությունում բնակչության ֆիզիկական դաստիարակության գործի և մարզիկների պատրաստման նկատմամբ կազմակերպական-մեթոդական ղեկավարումը, մշակում է քաղաքականությունը սպորտի և երիտասարդության բնագավառում, իրականացնում է սպորտի և երիտասարդության ոլորտի քարոզչությունը և այլն:

Չափազանց կարևոր է պետության հոգածությունը երիտասարդության նյութական, սոցիալական, մշակույթային և այլ խնդիրների վերաբերյալ: Երիտասարդների հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է ունենալ հստակ ռազմավարություն, որտեղ կարտացոլվեն երիտասարդության զարգացումն ապահովող բոլոր խնդիրները և դրանց լուծումները նյութական, ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, գեղագիտական առումներով: Չնայած այն հանգամանքին, որ մշակվել է 2007-2012թթ. երիտասարդական քաղաքականության վերաբերյալ ռազմավարություն, սակայն այն բավարար չափով չի նպաստել երիտասարդության խնդիրների լուծմանը, և այդ խնդիրները շարունակում են մտահոգել հանրությանը: Երիտասարդության շրջանում ակտիվ հասարակական կամ քաղաքական մասնակցությունը պայմանավորված է բացառապես առանձին կուսակցությունների քաղաքական շահերով: Նախարարությունը բավարար չափով չի ընդարձակել իր համագործակցությունը տարբեր ապաքաղաքական երիտասարդական հասարակական կազմակերպությունների կամ քննադատությամբ հանդես եկող երիտասարդական քաղաքացիական նախաձեռնությունների հետ և չի օժանդակել դրանց գործունեությանն ու զարգացմանը:

Մտահոգիչ է հատկապես ՀՀ մարզերում երիտասարդների և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը: Չեն անցկացվել համալիր միջոցառումներ վիճակը բարելավելու ուղղությամբ: Մարզերում, կուսակցական նախաձեռնություններից բացի, երիտասարդների համար չեն նախատեսվել կամ անցկացվել ժամանցի ու մշակութային բավարար քանակի միջոցառումներ: Անհամաչափ մոտեցում է դրսևորվել մարզերում և Երևան քաղաքում բնակվող երիտասարդներին նախարարության կողմից իրականացվող ծրագրերում ներգրավվածությունը ապահովելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը: 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում վերաֆինանսավորվել է ընդամենը 642 վարկ՝ 4 868 000 000 (չորս միլիարդ ութ հարյուր վաթսունութ միլիոն) ՀՀ դրամի չափով, որից 346-ը՝ Երևան քաղաքում, իսկ 296-ը՝ ՀՀ մարզերում: Այդուհանդերձ, պետական նպատակային ծրագրի իրականացման շրջանակներում, առանձին դեպքերում, կոռուպցիոն երևույթների մասին ահազանգեր եղել: Նշված դեպքերում ընտանիքներին տրամադրվել են բնակարաններ՝ սահմանված կանոնակարգերի խախտումներով, մասնավորապես՝ ընտանիքը ստացել է

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

բնակարան այն դեպքում, երբ երիտասարդ ամուսինների տարիքը ընդհանուր հանրագումարի մասով գերազանցել է սահմանված 60-ը: Անհրաժեշտ է վերահսկել վերոնշյալ գործընթացը, և ձեռնարկել միջոցներ բոլորի համար հավասար իրավունքներ և հնարավորություններ ապահովելու ուղղությամբ:

Բավարար չափով չի ապահովվել հաշմանդամային սպորտի զարգացումը և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը սպորտի բնագավառում: 2011 թվականին ՀՀ պետական բյուջեի «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով ոլորտում գործող թվով 4 հասարակական կազմակերպությունների տրամադրվել է 9.000.000 դրամ՝ մարզական միջոցառումներ անցկացնելու համար: «2011 թ. Երևանում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնության անցկացում» ծրագրով 13.747.000 դրամ է տրամադրվել «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ին, և 1.682.220 դրամ է հատկացվել «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» ՀԿ-ին Արաբական Միացյալ Էմիրություններում անցկացված հաշմանդամային ծանրամարտի առաջնության մասնակցության համար: Այսինքն՝ տրամադրվել են չափազանց սահմանափակ ֆինանսական միջոցներ, և ֆինանսավորվել են միայն առանձին ՀԿ-ներ մարզական-մասսայական միջոցառումների կազմակերպման համար: Այս հիմնախնդիրը Պաշտպանի ներկայացուցչի հետ հարցազրույցում կարևորել են նաև «Աշխարհն առանց արգելքների» ՀԿ նախագահ Արման Մուշեղյանն ու Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի գլխավոր քարտուղար Ռուզաննա Սարգսյանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդունել ռազմավարություն՝ հստակ մշակված քաղաքականությամբ և գործողությունների ծրագրով, երիտասարդության զարգացման հիմնախնդիրներին անհրաժեշտ ու համակարգային լուծումներ տալու նպատակով:
- Իրականացվող ծրագրերում բացառել որևէ խտրականություն քաղաքական տարբեր ուժերին հարող կամ չհարող երիտասարդական կազմակերպությունների միջև, ինչպես նաև մարզերում և Երևան քաղաքում բնակվող երիտասարդների նկատմամբ:
- Երիտասարդ ընտանիքների համար, համապատասխան ծրագրերի շրջանակներում բնակարան ձեռք բերելու նպատակով, սահմանել միատեսակ պահանջներ և պայմաններ, ապահովել գործընթացի նկատմամբ վերահսկողությունն ու դրա թափանցիկությունը:
- Հաշմանդամային սպորտը զարգացնելու նպատակով ավելացնել համագործակցությունը համապատասխան կազմակերպությունների հետ, ֆինանսավորման ծավալների աճով և արդար բաշխմամբ ներգրավվել ավելի շատ հասարակական կազմակերպություններ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն ապահովում է փախստականների իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը, միգրացիայի և փախստականներին առնչվող հարցերի բնագավառներում քաղաքականության մշակումը, ջրային համակարգերի անվտանգ օգտագործումը, տարածքային կառավարման իրականացումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները և այլն:

2011 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Չնայած Տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ) Ադրբեջանից բռնագաղթված փախստականների բնակապահովության նպատակով 2011թ. ներկայացրել է պետական բյուջեից 4 մլրդ դրամի ֆինանսական հայտ, սակայն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս դեպքում, հայտը չի բավարարվել, և ՀՀ-ում ապաստանած փախստականների հիմնահարցերից ամենակարևորին՝ նրանց բնակապահովության խնդրին, լուծում չի տրվել:
- Շարունակել է ծանր մնալ հատկապես հեռավոր գյուղերում բնակվող փախստականների վիճակը, որտեղ Ադրբեջանից բռնագաղթած անձանց մեծ մասը դեռևս բնակվել է կիսաքանդ շինություններում, վարձակալությամբ կամ բարեկամների բնակարաններում:
- ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության համապատասխան գրությունների հիման վրա ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից չի երկարաձգվել կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ժամկետը այն փախստականների համար, որոնց նկատմամբ սկսվել է կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարելու գործընթաց, և լիազոր մարմնի որոշումը գտնվում է բողոքարկման փուլում, չնայած որ նման երաշխիք սահմանված է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով:
- Փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերում անձի տվյալները ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տպագրվում են միայն անգլերեն լեզվով՝ անտեսելով «Լեզվի մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության համապատասխան որոշումը:
- Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով վերջիններիս հատկացված դոտացիաները բավարար չեն եղել:
- Գյուղական համայնքների ղեկավարները շատ դեպքերում մերժել են անձանց անհրաժեշտ տեղեկանքներ ստանալու խնդրանքը՝ հողի կամ այլ տեսակի հարկերի չվճարման պատճառաբանությամբ, խախտվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

թափանցիկության, քաղաքացիների ընդունելության կազմակերպման ապահովման պահանջները:

- Չնայած իրականացված վարչական հսկողության, արդյունքում համայնքներում բացահայտվել են ՀՀ օրենսդրության բազմաթիվ խախտումներ, մարզպետների կողմից իրականացվող հսկողության գործընթացը դեռևս բավարար արդյունավետ չի գնահատվել հարցված մասնագետների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից:

Արձանագրված դրական զարգացումները

- 2011թ. հունվարի 13-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը, որով սահմանված են միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության 14 ուղղություններ, և նախանշված նպատակներին հասնելու մեխանիզմներ:
- 2011թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը:
- Առանձին միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի շնորհիվ բնակարանով ապահովվել են որոշ փախստական ընտանիքներ:
- Ապահովվել է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցված բնակելի տարածքների սեփականաշնորհման գործընթացը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման նախարարությանն առնչվող հիմնական խնդիրները վերաբերել են Միգրացիոն պետական ծառայության գործունեությանը: Առաջնային է մնում փախստականների բնակարանային ապահովման խնդիրը: Ներկայումս շուրջ 1200 փախստականներ հաշվառված են առաջնահերթ բնակարանային ապահովության ցուցակներում, որոնցից 860-ը՝ միայն Երևան քաղաքում: 2010-2011թթ. փախստականների բնակապահովման համար պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել: Բացի բնակարանային ապահովման առաջնային կարիք ունեցող վերոնշյալ անձանցից, առկա են նաև վարձակալությամբ կամ այլ վայրերում բնակվող փախստականների որոշակի զանգված, որոնց բնակարանային ապահովման խնդիրների լուծումը դեռևս քննարկման առարկա չի դարձել: Նշվածին կարելի է ավելացնել նաև հանրակացարաններում բնակվողներին, որոնք, բացի բնակարանային անմխիթար պայմաններ ունենալուց, մեծամասամբ խիստ անապահով ընտանիքներ են: Նրանց շարքում մեծ թիվ են կազմում միայնակները և միայն կենսաթոշակառուներից բաղկացած ընտանիքները:

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության համապատասխան գրությունների հիման վրա ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից չի երկարաձգվել կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ժամկետը այն փախստականների համար, որոնց նկատմամբ սկսվել է կարգավիճակի դադարեցման

կամ չեղյալ հայտարարելու գործընթաց, և լիազոր մարմնի որոշումը գտնվում է բողոքարկման փուլում, չնայած որ նման երաշխիք սահմանված է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից խնդրահարույց հարցի օբյեկտիվ և ճշգրիտ կանոնակարգման նպատակով գրություն է ուղարկվել ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն՝ խնդրելով այսուհետ փոխանցել միայն այն անձանց տվյալները, որոնց նկատմամբ ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կողմից ՀՀ փախստականի կարգավիճակը դադարեցնելու մասին կայացված որոշումները վերջնական են:

Առկա են նաև որոշակի խնդիրներ փախստականին տրվող Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ճանաչման և կիրառման բնագավառում: Փաստաթուղթը ոչ բոլոր դեսպանատների կողմից է ճանաչվում, այդ պատճառով երկրից մեկնողները հաճախ ունենում են խնդիրներ սահմանը հատելիս: ՀՀ կառավարության 2009 թվականի թիվ 1417-Ն որոշման համաձայն՝ ճամփորդական փաստաթուղթը համարվում է փախստականի անձը հաստատող փաստաթուղթ, որի բովանդակությունը կազմող բոլոր կետերը տպագրվում են հայերեն, անգլերեն և ռուսերեն: Սակայն գործնականում անձի տվյալները՝ ազգանունը, անունը, երկիրը, ծննդավայրը, սեռը փաստաթղթում նշվում են միայն անգլերենով, ինչն, իր հերթին, խնդիրներ է առաջացնում ՀՀ պետական մարմիններին ճամփորդական փաստաթուղթը ներկայացնելիս: Գործողությունների պատշաճ համակարգման բացակայության հետևանքով խնդիրներ են առաջանում նաև կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի տրամադրման գործընթացում: ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը փախստականին ներկայացնում է օրենսդրությամբ չնախատեսված փաստաթղթերի ներկայացման պահանջներ:

Փախստականներին և ապաստան հայցողներին առնչվող հաջորդ խնդիրը առավելապես վերաբերում է նոր փախստականի կարգավիճակ ստացած և լեզվին չտիրապետող անձանց աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքերին: Գործատուները վերոնշյալ անձանց նկատմամբ հաճախ թույլ են տալիս այնպիսի չարաշահումներ, որոնք հանգեցնում են անօրինական աշխատանքում վերջիններիս ներգրավմանն ու նվազագույն աշխատավարձի չափից պակաս վարձատրության վճարմանը:

Անվճար բուժօգնություն ստանալու իրավունքի իրականացման գործընթացում խոչընդոտներ են ստեղծվում մասնավորապես ապաստան հայցող անձանց համար: Եթե անձը բուժհաստատություն է դիմում միայնակ, որպես կանոն, բուժսպասարկումը տարբեր պատճառաբանություններով մերժվում է:

Խնդիրներ են առաջանում նաև ապաստան հայցողների կողմից ՀՀ պետական սահմանն անցնելիս: Ըստ ուսումնասիրությունների՝ եղել են դեպքեր, երբ անձը ապաստան է հայցել ՀՀ-ից, սակայն ձերբակալվել է սահմանն ապօրինի հատելու կամ փորձի հիմքով: Որպես նշվածի հնարավոր պատճառ թերևս կարելի է նշել Ազգային անվտանգության և Միգրացիոն ծառայությունների թերի համագործակցությունը:

Հստակ սահմանված չեն փախստականի կարգավիճակ ունեցող ծնողների կողմից հետագայում ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հետևանքով նրանց երեխաների կողմից ՀՀ քաղաքացիության ձեռք բերման ընթացակարգերը:

Առկա են որոշակի խնդիրներ տարածքների համաչափ զարգացումն ապահովելու նպատակով պետության կողմից համայնքներին տրվող դոտացիաների արդարացի բաշխման բնագավառում: 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքները ստանում են հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին յուրաքանչյուր տարվա օրենքով: 2011թ. հունվարի 1-ի դրությամբ առկա են 33 համայնքներ, որոնք ունեն 300-ից քիչ ավելի բնակչություն, սակայն վերջիններիս ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը պակաս է 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանված գումարից (3.5 մլն դրամ՝ 2011 թ. պետական բյուջեով): Խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն, որի արդյունքում ինչպես 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքները, այնպես էլ այն համայնքները, որոնք, գործող օրենսդրության համապատասխան, 300-ից քիչ ավելի բնակչություն ունենալու պատճառով ստանում են առաջիններից պակաս գումար, կստանան հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա: Նախարարության կողմից հարցի կարգավորման նպատակով մշակվել է համապատասխան օրենքի նախագիծ:

Արձանագրվել են տարբեր համայնքներում նախատեսվող գազաֆիկացման աշխատանքների ընթացքում չարաշահումների փաստեր: Արմավիր և Արագածոտնի մարզերի մի շարք համայնքների գազաֆիկացման ծրագիրը մեկնարկել է 2005թ.-ին, սակայն մինչ օրս ծրագրում ընդգրկված համայնքների մեծ մասը գազաֆիկացված չեն: Ըստ ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանի՝ Վանանդ, Կողբավան, Բագարան և Երվանդաշատ համայնքներից միայն Վանանդում է գազաֆիկացումն ավարտվել, սակայն գազատարի խողովակները ներկված չեն, իսկ Երվանդաշատ ու Բագարան համայնքների ղեկավարների գրությունների համաձայն՝ գազաֆիկացման աշխատանքները չեն ավարտվել: Վերոնշյալ համայնքների գազաֆիկացման աշխատանքները չավարտելը պայմանավորված է նաև տարածքային կառավարման մարմինների կողմից ոչ բավարար աջակցությամբ:

Տարվա ընթացքում համայնքների հետ կապված արդիական խնդիրներից են եղել վարչական շենքերի հայտարարությունների անկյունների ապահովման և մատչելիության անբավարար մակարդակը, որի հետևանքով բնակչությունը հնարավորություն չի ունեցել ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն ավագանու նիստերի, որոշումների և այլ համայնքային բնույթ ունեցող հարցերի վերաբերյալ: Արձանագրվել են տարաբնույթ տեղեկանքների տրամադրման՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման դեպքեր: Տեղեկանքների տրամադրման մերժումները պայմանավորված են եղել հարկերի լրիվ կամ մասնակի չվճարմամբ: Բացահայտվել են նաև ազատ և բաց աշխատելու մշակույթի բացակայության, հարցումներին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով չպատասխանելու դեպքեր:

ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի թիվ 633-Ն որոշմամբ հաստատված ՀՀ տարածքային կառավարման նախարարության կանոնադրությամբ վերջինիս կողմից իրականացվող գործառույթները ներառում են նաև համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների ու համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության

իրականացման, ՀՀ համայնքային բյուջեների կատարման ընթացքի դիտարկման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովման գործառույթները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական տվյալներով 2011թ. ընթացքում ՀՀ տասը մարզերի համայնքներում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական խախտումները՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից ընդունված անհատական կամ ներքին իրավական ակտերին և դրանց ծանուցմանն առաջադրվող պահանջների, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության պահանջների խախտումներ, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում համայնքի ղեկավարի կողմից հսկողության չիրականացման դեպքեր, ընդունված նորմատիվ իրավական ակտերը սահմանված ժամկետում պետական իրավական փորձաքննության չուղարկելու, քաղաքացիների ընդունելության կազմակերպման և նրանց դիմում-բողոքների, առաջարկությունների քննարկման նկատմամբ հսկողության իրականացման խախտումներ, հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրելու կարգի, բյուջետային օրենսդրության խախտումներ և այլն: Որոշ դեպքերում արձանագրվել են առանց թույլտվության ոգելից խմիչքների կամ ծխախոտի վաճառքի իրականացման դեպքեր, երբ համապատասխան համայնքների կողմից չեն կիրառվել սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

Չնայած իրականացված վարչական հսկողության արդյունքում համայնքներում բացահայտվել են ՀՀ օրենսդրության բազմաթիվ խախտումներ, մարզպետների կողմից իրականացվող հսկողության գործընթացը դեռևս բավարար արդյունավետ չի գնահատվել հարցված մասնագետների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ փախստականների բնակարանային ապահովման խնդրին լուծում տալու, ինչպես նաև նրանց բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը օրենքի պահանջներին համապատասխանեցնելու և կիրառելիությունը ապահովելու ուղղությամբ:
- Ապահովել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների և համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության արդյունավետությունը՝ նախարարության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների և գործառույթների շրջանակներում:
- Ապահովել բնակչությանն անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման մատչելիությունը:

22. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երևանի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ սույն զեկույցում ներկայացված խնդիրներն ու թերությունները հիմնականում վերաբերելի են նաև մյուս բոլոր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում միջոցներ են ձեռնարկում բնակիչների իրավունքները և ազատություններն ապահովելու ուղղությամբ, իրականացնում են քաղաքային/համայնքային նշանակության քաղաքաշինական օբյեկտներում հաշմանդամների ազատ տեղաշարժի համար պայմաններ ստեղծելու, հասարակական տրանսպորտը հաշմանդամների տեղաշարժմանը հարմարեցնելու աշխատանքներ, շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր, կազմակերպում են ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքներ և այլն:

2011 թվականին մասնավորապես Երևանի քաղաքապետարանի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Քաղաքապետարանի կողմից անբավարար վերահսկողության արդյունքում բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում և խաղահրապարակներում հաճախ իրականացվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, որոնք ժամանակին չեն կանխվել:
- Քաղաքապետարանը կրպակների ապամոնտաժման ծրագիրն իրականացնելիս հիմնականում չի ապահովել անհրաժեշտ իրավական ընթացակարգերը, ինչի հետևանքով խախտվել են համապատասխան անձանց իրավունքները, և առաջացրել սոցիալական լարվածություն:
- Չի սահմանվել Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմինը, որը պատշաճ հսկողություն պետք է իրականացներ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքում կառուցապատողների՝ օրենքով կամ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ:
- Երևանի քաղաքապետարանը բավարար չափով չի վերահսկել համատիրությունների և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների գործունեությունը՝ կապված շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի պահպանմանը ներկայացվող պահանջների ու դրանց ապահովմանն ուղղված վերանորոգման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման հետ:
- Առանձին դեպքում (Կոմիտաս 26 հասցեում) քաղաքացուն տրամադրվել է շինարարական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն տվող քաղաքաշինական փաստաթղթեր, որոնք հետագայում նույն մարմնի կողմից

վերացվել են՝ օրենսդրության պահանջների խախտմամբ տրված լինելու պատճառաբանությամբ:

- Երևանի քաղաքապետարանը ոչ բոլոր դեպքերում է վարչական պատասխանատվության ենթարկել քաղաքաշինական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության խախտումներ թույլ տված անձանց: Այսինքն՝ դրսևորել է խտրական և կամայական մոտեցում:
- Մտահոգիչ է Երևանում հասարակական տրանսպորտի վիճակը: Բավարար չափով չեն իրականացվել հասարակական տրանսպորտի շահագործումը բարելավելու, կառավարումն առավել արդյունավետ դարձնելու և ուղևորափոխադրումների որակը բարձրացնելու աշխատանքները:
- Երևանի քաղաքապետարանը չի իրականացրել քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտները, և հասարակական տրանսպորտը հաշմանդամների ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագրեր, որի հետևանքով շարունակել են խախտված մնալ վերջիններիս իրավունքները:

Արձանագրված դրական զարգացումները

- Համայնքներում իրականացվել են կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:
- Վերականգնվել, կահավորվել և կառուցվել են հասարակական տրանսպորտի նոր կանգառներ:
- Քաղաքապետարանը բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությամբ՝ կարողացել է լուծել թափառական կյանքով ապրող անօթևանների կացարանի, սննդի, հիգիենայի, խնամքի և առաջին անհրաժեշտության այլ հիմնախնդիրներ:
- Ծայրահեղ կարիքի մեջ գտնվող երեխաներին աջակցություն ցուցաբերելու համար մշակվել և քաղաքապետարանի կայքէջի միջոցով գործողության մեջ է դրվել «Ցանկությունների իրականացում» բարեգործական նախագիծը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրվել են բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում և խաղահրապարակներում շինարարական աշխատանքների իրականացման բազմաթիվ դեպքեր: Թեև յուրաքանչյուր տարի նախատեսվել և իրականացվել են բնապահպանական ու կանաչապատման ծրագրեր, բակերում վերակառուցվել են խաղահրապարակներ, այնուամենայնիվ, քաղաքապետարանի ու վարչական շրջանների ղեկավարների կողմից իրականացված ոչ պատշաճ վերահսկողության և վարչարարության արդյունքում տրվել են տարաբնույթ շինությունների և բազմաբնակարան շենքերի կառուցման թույլտվություններ:

Ընթացիկ տարում քաղաքապետի հանձնարարականով տարբեր վարչական շրջաններում իրականացվել են կրպակների ապամոնտաժման աշխատանքներ: Պաշտպանի աշխատակազմում կրպակների սեփականատերերից ստացված անհատական և կոլեկտիվ բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կրպակների ապամոնտաժման գործընթացը հիմնականում իրականացվել է օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներով: Նշված ուսումնասիրությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

միջամտությամբ կասեցվել է թվով 30 օրինական հիմքերով գործող կրպակների ապամոնտաժում:

Պաշտպանի կողմից ստացվել են բողոքներ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում կառուցապատողների՝ օրենքով կամ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ ոչ պատշաճ հսկողության վերաբերյալ: Բազմաթիվ են դեպքերը, երբ տարածքը ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ, կնքվել են պայմանագրեր, սակայն կառուցապատողները սահմանված ժամկետներում շինարարությունը կամ չեն ավարտել կամ նույնիսկ չեն սկսել: Ըստ ոլորտի մասնագետների քաղաքապետարանը պետք է պատշաճ վերահսկողություն իրականացնի կառուցապատողների նկատմամբ: Ըստ քաղաքապետարանի՝ վերոնշյալ կառուցապատողների հետ պայմանագրերը կնքվել են Հայաստանի Հանրապետության կողմից՝ ի դեմս մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, և այդ լիազորությունը Երևանի քաղաքապետին՝ որպես համայնքի ղեկավարի, չի փոխանցվել:

Երևանի քաղաքապետարանը բավարար չափով չի վերահսկել համատիրությունների և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների գործունեությունը: Քաղաքապետարանը վարչական շրջանների միջոցով պետք է վերահսկի համատիրությունների և բազմաբնակարան շենքի կառավարման մյուս մարմինների գործունեությունը, հետևի նրանց կողմից օրենսդրության պահանջների կատարմանը, մինչդեռ շենքի կառավարման մարմինների մեծ մասը դեռևս չեն կարողանում իրականացնել իրենց վրա դրված պարտականությունները: Բազմաբնակարան շենքերում պետք է իրականացվեն ընդհանուր բաժնային սեփականության պահպանմանը ներկայացվող պահանջներն ու դրանց ապահովմանն ուղղված վերանորոգման և կանխարգելիչ միջոցառումներ՝ սպառման թափոնների հեռացում առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +5^{0}C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր; ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի ու աղբահավաք խցերի ախտահանում; ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրում՝ առնվազն երկու օրը մեկ անգամ և այլն: Երևան քաղաքի թվով 4960 բազմաբնակարան շենքերից 526 շենքերում ձևավորված է կառավարման մարմին, որոնցից 113 շենքերում ՀՀ կառավարության 04.10.2007թ. թիվ 1161-Ն որոշմամբ հաստատված պարտադիր նորմերը պատշաճ չեն ապահովվում շենքերի վնասվածության պատճառով: Բազմաբնակարան շենքերի մոտ տաս տոկոսում են ձևավորվել կառավարման մարմիններ, ինչը վկայում է այդ մարմնի գործունեության անարդյունավետության, բնակիչների վստահության պակասի մասին: Այն շենքերում, որտեղ չեն ձևավորվել կառավարման մարմիններ, համապատասխան լիազորություններն անցել են համայնքներին, այնուամենայնիվ, հաստատված պարտադիր նորմերը պատշաճ չեն ապահովվել:

Երևանի Կոմիտաս 26 հասցեում Երևանի քաղաքապետարանի կողմից քաղաքացուն տրամադրվել են շինարարական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն տվող քաղաքաշինական փաստաթղթեր, սակայն շինարարական աշխատանքների իրականացմանը ձեռնամուխ լինելու փուլում կասեցվել են համապատասխան աշխատանքները՝ փաստաթղթերը համաձայնեցնելու փուլում

համապատասխան տեղանքի կամ օրենսդրության պահանջների անբավարար ուսումնասիրման հիմքերով:

Չնայած քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման և ձեռքբերման գործընթացներն ավելի դյուրին և մատչելի դարձնելու ուղղությամբ կատարված որոշ աշխատանքների, հաճախ «բյուրոկրատական քաշքշուկներից» զերծ մնալու նկատառումներով անձինք ձեռնամուխ են լինում ինքնակամ շինարարությանը՝ նույնիսկ սահմանված տուգանքի և ինքնակամ շինության օրինականացման գումարի չափի հաշվարկմամբ: 2011 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական տարածքում հայտնաբերվել են ինքնակամ շինարարության իրականացման թվով 264 դեպք, որոնցից տույժի է ենթարկվել 244 անձ, 3 գործերով վարույթները կարճվել են, 17 գործ գտնվում է վարույթի նախապատրաստման փուլում: Ապամոնտաժվել և քանդվել են թվով 190 ինքնակամ շինություններ, մնացած դեպքերում շինությունները տնօրինվել են ՀՀ կառավարության 18.06.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան: Այս վիճակագրությունն ինքնին փաստում է, որ ինքնակամ շինությունները բացահայտելու, քանդելու և ապամոնտաժելու հարցում Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել է ոչ պատշաճ վարչարարություն:

Ոչ լիարժեք է իրականացվել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում քաղաքապետարանի կողմից խախտում թույլ տված անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը: Հաշվի առնելով բնակչության դժգոհությունները գիշերային ժամերին հանրային սննդի օբյեկտներից բարձր աղմուկով զուգորդվող հրավառությունների վերաբերյալ՝ Պաշտպանը համապատասխան խնդրով դիմել է Երևանի քաղաքապետին: Քաղաքապետը հաստատել է 2011 թվականի ընթացքում նշված իրավախախտման վեց դեպքերով վարչական պատասխանատվության կիրառման փաստը: Տարվա ընթացքում ընդամենը 6 դեպքի արձանագրումը ինքնին վկայում է քաղաքապետարանի կողմից համապատասխան լիազորության անբավարար իրականացման մասին:

Չնայած որ, Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել մայրաքաղաքի վերգետնյա ուղևորատար տրանսպորտի միասնական նոր ցանց նախագծելու ուղղությամբ, ինչպես նաև նախատեսվել է նվազեցնել միկրոավտոբուսների քանակը և դրան զուգահեռ ավելացնել միջին ու մեծ տեղատարողության ավտոբուսների թիվը, սակայն ուղևորափոխադրման ծառայությունների որակը և մակարդակը շարունակել է մնալ ոչ բավարար:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն Երևանի քաղաքապետը որպես պարտադիր լիազորություն պետք է իրականացնի քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտները և հասարակական տրանսպորտը հաշմանդամների ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագրեր: Պաշտպանի և մի շարք հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ 2011թ. իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ստեղծելուն և ազատ տեղաշարժի իրավունքն ապահովելուն ուղղված ակցիա՝ համապատասխան ուղերձի ներկայացմամբ: Ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը հաստատել է 2011թ. ներկրված ավտոբուսների խմբաքանակի մեջ

հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տրանսպորտային միջոցների բացակայությունը: Այժմ քննարկվում են արդեն իսկ ներկրված ավտոբուսների մի մասի վրա համապատասխան սարքավորումներ տեղադրելու հնարավոր տարբերակները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ ինքնակամ շինությունների կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ:
- Ձեռնարկել միջոցներ վարչարարություն իրականացնելիս խախտումները բացառելու ուղղությամբ:
- Բարձրաձայնել խնդիրը և հանդես գալ համապատասխան առաջարկությամբ՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքում շինարարություն իրականացնող կառուցապատողների նկատմամբ հսկողությունը սահմանված կարգով քաղաքապետարանին վերապահելու վերաբերյալ:
- Ձեռնարկել միջոցներ բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի պահպանման ապահովման ուղղությամբ:
- Քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման գործընթացում բացառել դրանց՝ օրենսդրության խախտումներով տրամադրումը:
- Ձեռնարկել միջոցներ վարչական խախտումները բացահայտելու և իրավախախտում թույլ տված անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:
- Ձեռնարկել գործուն միջոցներ քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտները և հասարակական տրանսպորտը հաշմանդամների ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու կապակցությամբ:
- Ձեռնարկել գործուն միջոցներ Երևանում ուղևորափոխադրումների ծառայության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:
- Հրապարակայնացնել արձանագրված իրավախախտումները՝ հասանելի դարձնելով հասարակությանը:

23. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը բարեխիղճ և ազատ մրցակցության համար ապահովում է անհրաժեշտ միջավայր, կանխարգելում, սահմանափակում և նախազգուշացնում է հակամրցակցային գործունեությունը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ իրականացնում վերահսկողություն: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործառույթների արդյունավետ իրացումը նպաստում է մարդկանց սոցիալ-տնտեսական իրավունքների առավել պաշտպանվածությանը:

2011 թվականին Հանձնաժողովի պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2000թ., իսկ Հանձնաժողովը ՀՀ-ում ստեղծվել է 2001թ. հունվարի 13-ին: 2011թ.-ին Համաշխարհային բանկի աջակցությամբ վերանայվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և արդյունքում այն մեծ չափով համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին: Օրենքի նոր տարբերակն ավելի լայն հնարավորություններ է տվել Հանձնաժողովին առավել արդյունավետ աշխատելու առումով:

Օրենքի փոփոխությունների արդյունքում հստակեցվել և խստացվել են մրցակցային օրենսդրության խախտումների համար սահմանված տուգանքների չափերը, ընդլայնվել են Հանձնաժողովի ապացուցողական կարողությունները՝ նախատեսելով դիտանցումներ և հսկիչ գնումներ կատարելու իրավասությունները, օրենքը լրացվել է առևտրային ցանցերին վերաբերող մի շարք դրույթներով, ինչը հնարավորություն է տվել կանխարգելել և բացահայտել խոշոր առևտրային ցանցերի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները:

Չնայած այս ամենին, տնտեսական մրցակցության ապահովման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում դեռևս բավարար չէ: Համաշխարհային տնտեսական ֆորումի ցուցանիշներով, թեև հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության գործակցով ՀՀ-ը արձանագրել է որոշակի առաջընթաց, սակայն ներքին մրցակցության և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության մակարդակով ՀՀ-ը շարունակել է գրավել ցածր դիրքեր: Միայն 2011թ. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված 13 ապրանքային շուկաներից 12-ը գնահատվել են որպես բարձր կենտրոնացված: Արձանագրվել են նաև նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման դեպքեր այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների կողմից:

Չնայած, որ 2011թ. Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու որոշումները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ կրկնակի և արդյունքում ՀՀ պետական բյուջե մուծված գումարները՝ մոտ 6 անգամ, այնուամենայնիվ, Հանձնաժողովի կողմից համապատասխան դեպքերում ձեռնարկված

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

միջոցները չեն արտացոլել տարբեր ապրանքային շուկաներում գոյություն ունեցող մրցակցային օրենսդրության խախտման դեպքերի իրական պատկերը և բավարար չափով չեն ազդել երկրում տնտեսական մրցակցության պաշտպանության վիճակի վրա:

Իրական մրցակցության ապահովման համար անհրաժեշտ է բոլոր իրավասու պետական մարմինների համալիր և նպատակաուղղված աշխատանքը:

Բավարար չեն եղել Հանձնաժողովի կողմից ձեռնարկված միջոցները հակամրցակցային գործողությունների դրսևորման դեպքերի կանխարգելման և դադարեցման ուղղությամբ: Հանձնաժողովն իր որոշումներով պատասխանատվության է ենթարկել մի շարք տնտեսվարող սուբյեկտների հակամրցակցային գործողությունների դրսևորման համար: Տնտեսվարող սուբյեկտները բողոքարկել են Հանձնաժողովի որոշումները՝ չկատարելով դրանց պահանջները: Դատաքննության ողջ ժամանակահատվածում, որը կարող է տևել մինչև երկու տարի, Հանձնաժողովը որևէ միջոց չի ձեռնարկել իր կողմից կայացված որոշումների կատարման գործընթացն ապահովելու համար: Օրինակ՝ Հանձնաժողովին տրված է իրավասություն տնտեսվարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկել Հանձնաժողովի որոշման չկատարման համար, սակայն Հանձնաժողովը սպասել է մինչև դատաքննության ավարտը:

Բավարար չեն եղել Հանձնաժողովի կողմից ձեռնարկված միջոցները նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորման դեպքերի կանխարգելման և դադարեցման ուղղությամբ: Արձանագրվել է «Ալեքս Գրիգ» ընկերության կողմից ուկրաինական գրեթե համանուն օղիներին շփոթության աստիճան նման օղիների արտադրման և իրացման դեպք: Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովը վարույթ է սկսել 2009թ.-ին, և Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը ընկերության կողմից բողոքարկվել է դատական կարգով: Հանձնաժողովն ընկերության նկատմամբ անբարեխիղճ մրցակցության համար կիրառել է տուգանք, ինչպես նաև ընկերությունից պահանջել է վերացնել խախտումը, այսինքն՝ 1-ամսյա ժամկետում շրջանառությունից հանել համապատասխան արտադրանքը: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի որոշումների չկատարման համար սահմանված է վարչական պատասխանատվություն կիրառելու հնարավորություն, ինչպես նաև Հանձնաժողովի որոշման բողոքարկման դեպքում՝ դրա գործողության կասեցման արգելքը: Այնուամենայնիվ, Հանձնաժողովի կողմից երկու տարվա ընթացքում չեն ձեռնարկվել բավարար միջոցներ իր որոշումները չկատարող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ համարժեք վարչական պատասխանատվության միջոցների կիրառման ուղղությամբ:

Թեև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխություններով զգալիորեն ընդլայնվել են Հանձնաժողովի լիազորությունները հակամրցակցային գործողությունների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու գործընթացում, այնուամենայնիվ դեռևս Հանձնաժողովին ընձեռված գործիքակազմը բավարար չի եղել արդյունավետորեն իրականացնելու տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը: Մասնավորապես՝ Հանձնաժողովը ստուգումների իրականացման ոլորտում ընձեռնված չէ այնպիսի լիազորություններով, որոնք նրան հնարավորություն կտան ապացույցներ ձեռք բերել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի այնպիսի թաքնված խախտումների

վերաբերյալ, ինչպիսին է, օրինակ, հակամրցակցային համաձայնությունը, որի մասնակիցները՝ տնտեսվարող սուբյեկտները, ձեռնարկում են բոլոր միջոցները իրենց պայմանավորվածությունը գաղտնի պահելու համար: Գրեթե բոլոր երկրներում մրցակցության պաշտպանության մարմիններն օժտված են ստուգման լայն իրավասություններով, ինչն էլ հնարավորություն է տալիս նրանց բացահայտելու նույնիսկ ամենագաղտնի համաձայնությունները: Այդ է պատճառը, որ ՀՀ մրցակցային օրենսդրությունն ուսումնասիրող բոլոր միջազգային փորձագետներն առաջարկել են Հանձնաժողովին օժտել ստուգման լիազորություններով:

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի հետևողական զարգացման և մրցակցային միջավայրի կատարելագործման համար կարևորվում է նաև իրավասու բոլոր պետական մարմինների ակտիվ համագործակցությունը, քանի որ Հանձնաժողովը միայնակ ի զորու չէ լուծել տնտեսական մրցակցության ոլորտում առկա խնդիրները: Այդ ուղղությամբ ևս որոշակի քայլեր ձեռնարկվել են: Թեև Հանձնաժողովի և մի շարք պետական մարմինների հետ կնքվել են փոխհամագործակցության հուշագրեր, որոնցով կանոնակարգվել են տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա չարաշահումների բացահայտման, վարչական վարույթների շրջանակներում փոխօգնության, տեղեկատվության արդյունավետ փոխանակման վերաբերյալ և մի շարք այլ հարաբերություններ, այնուամենայնիվ, մրցակցային խնդիրների համալիր լուծման համար նպատակահարմար է մշակել հստակ օրենսդրական մեխանիզմներ, որով կկանոնակարգվի պետական մարմինների հարաբերությունները մրցակցության խնդիրների և սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառներում:

Հանձնաժողովը բավարար միջոցներ չի ձեռնարկել տնտեսական մրցակցության հարցերի վերաբերյալ հանրությանն իրազեկելու ուղղությամբ, ինչն էլ իր հերթին նվազեցրել է սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության արդյունավետությունը: Չնայած գործել է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը, սակայն այն ոչ բավարար տեղեկատվություն է պարունակել ոլորտի խնդիրների վերաբերյալ: Միաժամանակ կայքէջը չի ներառել անգամ վիճակագրական տվյալներ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ: Բավարար չափով չի ապահովվել մրցակցության ոլորտում տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ գործունեության արդյունքում ապրանքների գները անհիմն բարձրացնելու, անորակ կամ ժամկետանց սննդամթերք վաճառելու և հանրային նշանակության այլ հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի իրականացրած գործողությունների հրապարակայնությունը և թափանցիկությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ Հանձնաժողովի կողմից վերահսկողության լիարժեք իրականացման ուղղությամբ:
- Միջոցներ ձեռնարկել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գնային քաղաքականության շարժերի նկատմամբ վերահսկողության օրենսդրությամբ սահմանված մեխանիզմների շրջանակի ընդլայնման ուղղությամբ:
- Արդյունավետ գործողություններ ձեռնարկել նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտման դեպքերի, ինչպես նաև անբարեխիղճ

մրցակցության գործողությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ:

- Ապահովել տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացումը:

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն իրականացնում է տրանսպորտի և կապի բնագավառներում օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորումը, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և երթևեկության անվտանգության ապահովումը, միջպետական և միջմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթների կազմակերպումը, միջմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների միասնական համակարգի ապահովումը և այլն:

2011 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացվում են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- 2011 թվականի ընթացքում արձանագրվել են միջմարզային միկրոավտոբուսային երթուղիների չվացուցակների խախտման դեպքեր:
- Չեն ձեռնարկվել բավարար միջոցներ երթակարգավարական կետերը ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2007 թվականի թիվ 1604-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ (սպասասրահ, տոմսարկղեր, ուղևորների և ավտովարորդների կենցաղային, սանիտարահիգիենիկ (սանիտարական հանգույց, լվացարան) կետեր և այլն):
- Մինչ օրս չի լուծվել հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական տրանսպորտից օգտվելու ապահովման հարցը:
- Չեն ձեռնարկվել միջոցներ ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջներն ու դրանց պետական գրանցման կարգը հստակեցնելու ուղղությամբ:

Արձանագրված դրական զարգացումները

- 2011թ. արձանագրվել են թվով 4900 վարչական իրավախախտում նախորդ տարվա 3700-ի փոխարեն, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 34.5 մլն դրամ նախորդ տարվա 23.0 մլն դրամի համեմատ:
- 2011 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 838,5 մլն. դրամի չափով տուրքեր, վարձակալական վճարներ և այլ ոչ հարկային եկամուտներ:
- Փոփոխություններ են կատարվել ՀՀ-ում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների և մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման կարգերում, որոնց արդյունքում բարելավվել են ընթացակարգերը և նվազեցվել են կոռուպցիոն ռիսկերը:
- Բարեփոխումներ են իրականացվել տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման գործընթացը կարգավորող իրավական

դաշտում՝ տրանսպորտային միջոցները ցանկացած տեխնիկական զննման գործունեության կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպության կայանում տեխնիկական զննության ներկայացնելու հնարավորության ապահովման նպատակով:

- Նախարարության նախաձեռնությամբ ՀՀ կառավարությանն է ներկայացվել մի շարք օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծեր, որոնք ուղղված են ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում իրավախախտումները կանխելուն և այլն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2011 թվականի ընթացքում արձանագրվել են խախտումներ միջմարզային միկրոավտոբուսային երթուղիների չվացուցակների կարգի ապահովման ոլորտում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ համապատասխան միջմարզային միկրոավտոբուսային երթուղիների չվացուցակների խախտման դեպքերը համընկել են Հայ Ազգային Կոնգրեսի կողմից կազմակերպված հանրահավաքների օրերի հետ, երբ մարզային ուղևորափոխադրումներն իրականացնող ընկերությունները չեն իրականացրել ուղևորափոխադրումներ կամ դրանք իրականացրել են միակողմանի: Պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը կատարել է ուսումնասիրություն, արձանագրել խախտումներ, որի հետևանքով մի քանի ուղևորափոխադրող կազմակերպություններ նախազգուշացվել են հետագայում նմանատիպ խախտումների բացառման վերաբերյալ, իսկ որոշ ուղևորափոխադրող կազմակերպություններ ենթարկվել են վարչական պատասխանատվության: Նախարարության պաշտոնական տվյալներով 2011թ. ընդդիմության հանրահավաքների օրերին մարզային տրանսպորտային միջոցների բացակայության կապակցությամբ տաս ընկերություններ ենթարկվել են վարչական պատասխանատվության: Այնուամենայնիվ, վերոգրյալ խախտումների բնույթն ու վիճակագրությունն ինքնին վկայում է նման խախտումները կանխարգելելու և վերացնելու ուղղությամբ առավել հետևողական աշխատանքի անհրաժեշտության մասին:

Ուղևորափոխադրման գրաֆիկի խախտման դեպքեր արձանագրվել են նաև ուղևորահոսքի կտրուկ աճի պատճառով, որի հետևանքով ուղևորափոխադրման գրաֆիկի միջանկյալ հատվածում արձանագրվել են չվացուցակների կարգից շեղումներ: Ըստ նախարարության տվյալների՝ շեղումները վերացնելու նպատակով կազմակերպվել են միջոցառումներ ուղևորափոխադրման սպասարկումներ իրականացնող տրանսպորտային միջոցների տեղատարողությունը ավելացնելու ուղղությամբ: 2011թ. ընթացքում միջմարզային տրանսպորտի երթևեկության խախտումների վերաբերյալ կազմվել է թվով 76 վերահսկողական արդյունքների ամփոփման արձանագրություններ 31 կազմակերպությունների նկատմամբ, որոնք ենթարկվել են պատասխանատվության:

Թեև երթակարգավարական կայաններ ստեղծելու գործընթացը տրանսպորտային բեռնաթափման նպատակ էր հետապնդում, սակայն ստեղծված կայանները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին: Օրինակ, Երևանում գործող թվով չորս երթակարգավարական կետեր ապահովված չեն տեղատարողությամբ մարդկանց սպասարկումն ապահովող սպասասրահով,

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

տոմսարկղերով, ուղևորների և ավտովարորդների կենցաղային, սանիտարահիգիենիկ (սանիտարական հանգույց, լվացարան), բժշկական սպասարկման, հանրային սննդի, ավտովարորդների առողջական վիճակի նախաուղերթային զննման կետերով, ուղեբեռի ժամանակավոր պահման սենյակներով և տեղեկատուով: Վիճակն ավելի վատթար է մարզերում, որտեղ երթակարգավարական կետերը փաստացի չեն գործում:

Մինչ օրս չի լուծվել հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական տրանս-պորտից օգտվելու ապահովման հարցը, որի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք զրկված են ՀՀ Սահմանդրությամբ ամրագրված ազատ տեղաշարժման իրավունքից և այդ իրավունքի իրականացման միակ տարբերակը տաքսի ծառայություններից օգտվելն է, ինչը ոչ բոլորին է մատչելի ու հասանելի: Նախարարությունը հաստատել է հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտի հարմարեցված չլինելու և անհրաժեշտ թեքահարթակներով կահավորված կանգառների բացակայության հանգամանքները:

Ոչ լիարժեք օրենսդրական կարգավորման պայմաններում խնդիր է առաջացել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառուցված տրանսպորտային միջոցների հաշվառման և գրանցման հետ, որի կապակցությամբ, Պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից շահագրգիռ պետական կառավարման մարմինների քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1251-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյունավետ և հետևողական միջոցներ ձեռնարկել հանրահավաքների օրերին միջմարզային միկրոավտոբուսային երթուղիների չվացուցակների խախտման դեպքերի կանխման և բացառման ուղղությամբ:
- Քայլեր ձեռնարկել օրվա տարբեր ժամերին ուղևորահոսքի կտրուկ աճի հետևանքով չվացուցակների կարգից շեղումները վերացնելու ուղղությամբ:
- Ապահովել գործող ենթակարգավարական կետերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները:
- Ձեռնարկել միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցները և կանգառները մատչելի դարձնելու ուղղությամբ:
- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառուցված տրանսպորտային միջոցների հաշվառման և գրանցման օրենսդրական կարգավորման ուղղությամբ:
- Կանոնավոր երթևեկությունը մշտապես ապահովելու նպատակով ապահովել պարբերական մշտադիտարկում, և հրապարակել իրավախախտների տվյալները:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը պատասխանատու է կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավման համար և ապահովում է կառույցների շինարարության և շահագործման ընթացքում մարդկանց ու միջավայրի անվտանգության, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը և այլն:

2011 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Ոլորտում առկա թերություններն ու խնդիրները

- Նախարարության կողմից չի իրականացվել պատշաճ վերահսկողություն նախագծային փաստաթղթերի՝ քաղաքաշինական նորմերին համապատասխանության ապահովման ուղղությամբ:
- Նոր կառուցվող շենքերի մեծ մասը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Պատշաճ վերահսկողություն չի իրականացվել համայքների ղեկավարների՝ ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման պարտականության կատարման նկատմամբ:
- Նախարարության կողմից լիցենզավորված տարբեր կազմակերպություններ նույն շենքի վթարայնության աստիճանի վերաբերյալ քաղաքացիներին տվել են տարբեր եզրակացություններ:
- Աղետի գոտու բնակավայրերում բնակարանների արտահերթ հատկացման հերթացուցակում վերահաշվառելու գործընթացում առաջացել են հիմնավոր դժգոհություններ:
- Չեն ընդունվել «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին», ինչպես նաև «Ճարտարապետության մասին» ՀՀ օրենքները:

Արձանագրված դրական զարգացումները

Նախարարության նախաձեռնությամբ ՀՀ կառավարությանն է ներկայացվել մի շարք օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծեր, որոնք ուղղված են հատուկ կարգավորման ենթակա տարածքներում ՀՀ համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության, միասնական պահանջների և չափորոշիչների սահմանմանը, քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործառույթների օպտիմալացմանը, դրանց իրագործման ժամկետների կրճատմանը, ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, ավարտված շինարարության շահագործման փաստագրման ընթացակարգի ժամկետների կրճատմանը և այլն:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեև 2011թ. Նախարարության կողմից քաղաքաշինական փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ապահովման ուղղությամբ ձեռնարկվել են բավական միջոցներ, այնուամենայնիվ, օրենսդրական պահանջների խախտումները քաղաքաշինական գործունեության ընթացքում կրում են զանգվածային բնույթ: ՀՀ վերահսկիչ պալատը 2011թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրել է նախագծային փաստաթղթերին օրենսդրությամբ առաջադրվող պահանջների, անորակ և նախագծային շեղումներով հիմնանորոգման և շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական հսկողության իրականացման բնագավառում թույլ տրված տարաբնույթ խախտումներ: Դրա մասին են ուղղակիորեն վկայում նաև Նախարարության կողմից 2011թ. իրականացված ստուգումների արդյունքները, որոնցով հայտնաբերվել են ճարտարապետահատակագծային առաջադրանքների առկայության և դրանց համապատասխանության 253 խախտման դեպք, շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի 203 խախտման դեպք, շինարարության (քանդման) թույլտվությունների առկայության և համապատասխանության 242 խախտման դեպք, ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանության 129 խախտման դեպք: Վերոգրյալ խախտումների զանգվածային բնույթն առաջադրում է քաղաքաշինական գործունեության նկատմամբ առավել հետևողական և արդյունավետ հսկողության իրականացման խնդիր:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը պատասխանատու է նաև ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: 2011թ. ընթացքում Նախարարության կողմից իրականացված ստուգումներով այս բնագավառում հայտնաբերվել են խախտման ընդամենը 79 դեպք, ինչն ինքնին վկայում է համապատասխան լիազորության իրականացման անբավարար արդյունավետության մասին:

Քաղաքաշինական նորմերի խախտման մեկ այլ օրինակ է հանդիսանում նոր կառուցվող շենքերի ու շինությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց բավարար չափով հարմարեցված չլինելու հանգամանքը: Ըստ ոլորտի մասնագետների, վերանորոգվող օբյեկտները ևս չեն հարմարեցվում հաշմանդամների կարիքներին, իսկ թեքահարթակներ կառուցելու դեպքում նախատեսված թեքությունն իր հերթին խոչընդոտներ է առաջացնում անհրաժեշտ մատչելիության ապահովման տեսանկյունից: Այս հիմնախնդիրը Պաշտպանի ներկայացուցչի հետ հարցազրույցում կարևորել են նաև «Ունիսոն» ՀԿ ղեկավար Արմեն Ալավերդյանն ու «Աշխարհն առանց արգելքների» ՀԿ ղեկավար Արման Մուշեղյանը:

Նախարարությունը պատասխանատու է նաև կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման գործընթացի նկատմամբ պատշաճ հսկողության ապահովման համար: Թեև 2011թ. ընթացքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման պահանջների խախտումներ Նախարարության կողմից հիմնականում չեն արձանագրվել, սակայն Պաշտպանը անբավարար իրազեկման խնդրի վերաբերյալ ստացել է բազմաթիվ բողոքներ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Արձանագրվել են նաև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական նորմերի խախտումներով շինարարական աշխատանքների կատարման և շինարարությունը սահմանված ժամկետում չավարտելու փաստեր, որոնց հետևանքով անմիջական վնաս է հասցվել մեծ թվով քաղաքացիների: Այսօրինակ խախտումների առկայությունը վերագրելի է նաև Նախարարությանը՝ համայնքի ղեկավարի կամ կապալառու կազմակերպության նկատմամբ անբավարար վերահսկողության իրականացման մասով:

Խնդիրներ են առաջացել նաև Նախարարության կողմից լիցենզավորված տարբեր կազմակերպությունների կողմից նույն շենքի վթարայնության աստիճանի վերաբերյալ քաղաքացիներին հակասական եզրակացություններ տալու կապակցությամբ: Պաշտպանի միջամտության արդյունքում որոշ դեպքերում խնդրին տրվել է պատշաճ իրավական լուծում:

Բազմաթիվ են նաև աղետի գոտու բնակավայրերում բնակարանների արտահերթ հատկացման հերթացուցակում վերահաշվառելու գործընթացում քաղաքացիների դժգոհությունները, որոնք հիմնականում վերաբերում են աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի որոշումներին, որոնք ընդունվում են առանց բավարար ուսումնասիրություն իրականացնելու:

Ըստ ոլորտի մասնագետների, այդ թվում՝ ճարտարապետների միության վարչության անդամ Բորիս Քոչարյանի, «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին», ինչպես նաև «Ճարտարապետության մասին» ՀՀ օրենքների ընդունման հետաձգման պատճառով բաց է մնացել որոշակի հարաբերությունների կարգավորումը քաղաքաշինության բնագավառում: Նշված օրենքների ընդունմամբ հնարավոր կլիներ հստակեցնել և տարանջատել քաղաքաշինության բնագավառում հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև սահմանել ՀՀ-ում ճարտարապետական գործունեությունը կառավարելու ու ճարտարապետների մասնագիտական գործունեությունը համակարգելու հիմունքներն ու կարգը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուժեղացնել վերահսկողությունը քաղաքաշինական փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման և համայնքների ղեկավարների՝ ինքնակամ շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման պարտականության կատարման նկատմամբ:
- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար նոր կառուցվող (կամ վերակառուցվող) շինությունների մատչելիությունն ապահովելու ուղղությամբ:
- Հետևողական քայլեր ձեռնարկել համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին բնակիչներին տեղեկացնելու, քննարկումներ կազմակերպելու գործընթացը պատշաճ ապահովելու ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- Ապահովել պատշաճ վերահսկողություն՝ քաղաքաշինական նորմերի խախտումներով շինարարական աշխատանքների կատարման և շինարարության սահմանված ժամկետների խախտումների բացառման նպատակով:
- Ձեռնարկել միջոցներ «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին», ինչպես նաև «Ճարտարապետության մասին» ՀՀ օրենքների ընդունման ուղղությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

26. ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների խախտման մասին զեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին և զանգվածային լրատվության միջոցներին:

2011թ. մարտի 2-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ընտրություններում 83 կողմ և 13 դեմ ձայների հարաբերակցությամբ Կարեն Անդրեասյանն ընտրվեց Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան:

Պաշտպանն ունի երկու տեղակալ: Ներկայումս Պաշտպանի աշխատակազմում գործում է 8 վարչություն, մասնավորապես՝ քաղաքացիների ընդունելության և նամակների վարչություն, քաղաքացիական և քաղաքական իրավունքների վարչություն, քրեադատավարական իրավունքների վարչություն, խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչություն, միջազգային համագործակցության և ռազմավարական զարգացման վարչություն, հասարակայնության հետ կապերի վարչություն, իրավական վերլուծությունների վարչություն, գործերի կառավարչություն:

2011 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Պաշտպանի գործունեության առկա թերություններն ու խնդիրները

- Անբավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսների պատճառով Պաշտպանի աշխատակազմը՝ որպես Ազգային կանխարգելման մեխամիզմ, մոնիտորինգ է իրականացրել հանրապետության միայն 60 փակ հաստատությունում, մինչդեռ պատշաճ ֆինանսավորման դեպքում, հնարավորություն կլիներ կանխարգելիչ գործունեություն ծավալել թվով ավելի շատ հաստատություններում: 2012թ. Պաշտպանի աշխատակազմի առաջնահերթությունները կլինեն՝ ինտենսիվացնել այցերը փակ հաստատություններ և ընդլայնել ներկա համագործակցությունը ոլորտային ՀԿ-ների հետ:
- Անբավարար մարդկային ռեսուրսի պատճառով Պաշտպանի աշխատակազմը 2011թ. հնարավորություն չի ունեցել մանրամասն անդրադառնալու Պաշտպանի աշխատակազմ ուղարկված բոլոր օրենքների նախագծերին:
- Որոշ անկատարություններով է անցել Պաշտպանի կողմից հայտարարված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածուի մրցույթը: ՀՀ նոր ընտրական օրենսգրքի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 7 անդամներից 3-ին Հանրապետության նախագահը նշանակում է Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

- 3 թեկնածուների ընտրությունը թափանցիկ կազմակերպելու նպատակով՝ Պաշտպանի աշխատակազմը հայտարարել էր ԿԸՀ անդամի թեկնածուի ընտրության համար մրցույթ: Թեկնածուների ընտրության համար օրենքով սահմանված բավականին սեղմ ժամկետի և Պաշտպանի կողմից ներկայացրած ԿԸՀ երկու թեկնածուների ինքնաբացարկի պատճառով մրցույթով ԿԸՀ անդամ ընտրելու առաջին փորձը իրականացավ անհարթություններով եւ չնախատեսված խոչընդոտներով:

Արձանագրված դրական զարգացումները

- 2011թ. նոյենբերին ստեղծվել է Պաշտպանի 116 անվճար թեժ գիծը: Նորովի՝ մարդկային և տեխնիկական ռեսուրսներով համալրված՝ վերաբացվել է արագ արձագանքման ծառայությունը: Գործարկման միայն առաջին երկու ամիսների ընթացքում Պաշտպանի թեժ գիծը օգնել է 778 մարդու:
- Պաշտպանը և իր աշխատակազմը իրավական ծառայություն է մատուցել 4596 մարդու: Պաշտպանի իրավասություններին վերաբերող 607 բողոքների ուսումնասիրության արդյունքում վերականգնվել է 344 անձանց խախտված իրավունքները:
- Պաշտպանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված զրպարտության և վիրավորանքի դրույթների սահմանադրականության հարցով դիմել է Սահմանադրական դատարան, որն էլ իր պարտադիր իրավական դիրքորոշումներով հօգուտ խոսքի ազատության էականորեն բարելավել է գործող օրենսդրությունը և դրա կիրառումը: Այս կապակցությամբ Պաշտպանի ներդրումը երկրում խոսքի ազատության խթանման հարցում ընդգծել է «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» բելգիական կազմակերպությունը: Իսկ «Լրագրողներ առանց սահմանի» ֆրանսիական կազմակերպությունը իր 2011թ. հաշվետվությունում կարևորել է Պաշտպանի նախաձեռնությամբ ստեղծված տեղեկատվական վեճերի խորհրդի նշանակությունը լրագրողական էթիկայի և լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների զարգացման առումով:
- Մարդու իրավունքների պաշտպանի և շուրջ 80 հասարակական կազմակերպությունների միջև կնքվել են համագործակցության հուշագրեր, ինչի արդյունքում այդ իրավապաշտպան կազմակերպություններից շատերի հետ համատեղ իրականացվել են շուրջ 20 ծրագիր-միջոցառումներ:
- Պաշտպանի աշխատակազմը ուսումնասիրել է ավելի քան 50 օրենսդրական նախագծեր և դրանց վերաբերյալ ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված բազմաթիվ առաջարկներ, որոնք մեծամասամբ ընդունվել են նախագծերի հեղինակների կողմից:
- Պաշտպանին առընթեր նորաստեղծ Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհուրդը մոնիտորինգային 60 այցեր է իրականացրել ոստիկանության բաժիններ, քրեակատարողական հիմնարկներ, զորամասեր, հոգեբուժարաններ, մանկատներ, հատուկ դպրոցներ, տուն-ինտերնատներ: Մոնիտորինգի ընթացքում արձանագրվել են բռնության և անմարդկային վերաբերմունքի դրսևորումների մի շարք դեպքեր և այլ խախտումներ:

Մոնիտորինգի արդյունքների ամփոփումը հրապարակվել է 2011թ. դեկտեմբերին առանձին զեկույցով:

- 2011թ. Պաշտպանը կազմակերպել է համաժողովների շարք՝ նվիրված խոսքի ազատությանը, արդար դատաքննությանը, խոցելի խմբերի պաշտպանությանը և իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցությանը: Բացի այդ, մարդու իրավունքներին առնչվող խնդիրները վերհանելու և քննարկելու նպատակով Պաշտպանը և իր աշխատակազմը մասնակցել են շուրջ 70 հրապարակային քննարկումների, մի քանի տասնյակ հեռուստառադիոհաղորդումների, ինչպես նաև ունեցել են հարյուրավոր հարցազրույցներ լրագրողների հետ:
- 2011թ. դեկտեմբերին Պաշտպանը մասնակցել է ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների երկխոսությանը, որի ընթացքում անդրադարձել է դատական համակարգի գործունեությանը, խոսքի, խղճի և կրոնի ազատությանը, բանակում իրավախախտումներին, ինչպես նաև 2012թ. խորհրդարանական ընտրություններին: Պաշտպանի ներկայացրած դիտարկումները ընդգրկվել են Եվրոպական Խորհրդարանի՝ ԵՄ Հայաստան ասոցիացման պայմանագրի բանակցությունների վերաբերյալ առաջարկությունների մեջ:
- Մարդու իրավունքների միջազգային օրը՝ դեկտեմբերի 10-ին Պաշտպանը առաջին անգամ կազմակերպել է «Մարդու իրավունքների EXPO 2011», որի տաղավարներում ներկայացվել են երեխաների, սոցիալապես անապահով անձանց, կանանց, բռնությունների զոհերի, փախստականների, հաշմանդամների, փոքրամասնությունների, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու իրավունքին առնչվող ներկայիս առավել սուր և արդիական խնդիրները:
- Պաշտպանը ներկայացրել է 3 արտահերթ հրապարակային զեկույց՝ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և երկրում մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացման վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմը պատրաստել և հրապարակել է նաև երեխաների իրավունքների պաշտպանության իրավիճակի վերլուծություն:
- Պաշտպանն իր գործունեության և հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ հանդես է եկել շուրջ 30 պաշտոնական հայտարարությամբ՝ այդ թվում անդրադառնալով Ռաֆֆի Հովհաննիսյանի նստացույցի ընթացքում վրանի տեղադրման արգելքին, կրպակների ապամոնտաժման ընթացքում ոստիկանության եւ քաղաքապետարանի հակահիրավական գործողություններին, զոհված զինծառայողների մահվան հանգամանքների քննությանը, արդար դատաքննության իրավունքի իրացմանը և առանձին դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությանը, խոսքի ազատության պաշտպանության համար օրենքի կիրառման նկատմամբ գործուն հանրային վերահսկողության անհրաժեշտությանը, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի խնդիրներին, 2008թ. մարտի հետևանքների վերացմանը, կրթության և

գիտության նախարարության կողմից անցկացվող մրցութային համակարգի անկատարություններին, հավաքների ազատությանը, երկրում սոցիալական և սեփականության իրավունքների իրացմանը և այլ հարցերի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրություն

2010թ–ի համեմատ Պաշտպանի աշխատակազմի կողմից վարույթ ընդունած գործերի ընդհանուր թիվն աճել է 29%-ով, իսկ դրական լուծում ստացած գործերի թիվն աճել է 34%-ով:

01.01.2011-31.12.2011 ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմ ուղղված դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն

Պաշտպանի աշխատակազմ դիմած անձանց քանակը	4596
Պաշտպանի աշխատակազմին ներկայացված գրավոր դիմումներ	1588
Պաշտպանի աշխատակազմի կողմից տրամադրված բանավոր խորհրդատվություններ	2093
Դրական լուծում ստացած դիմում-բողոքներ (ըստ անձանց)	344
ՀՀ դատարանների դեմ ուղղված դիմում-բողոքներ	224

Ըստ պետական մարմինների՝ վարույթ ընդունած գործերի տասնյակ /ընդանուր թիվը 607/

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	124
Երևանի քաղաքապետարան	81
ՀՀ ոստիկանություն	60
ՀՀ պաշտպանության նախարարություն	44
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկություններ	33
ՀՀ քաղաքապետարաններ	32
ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր ծառայություն	32

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	26
Այլ հաստատություններ	23
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն	20
Ընդհանուր	607

01.01.2011-31.12.2011 ժամանակահատվածում գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Մարզ	
Երևան	958
Կոտայք	103
Շիրակ	88
Լոռի	88
Արարատ	58
Գեղարքունիք	57
Արմավիր	49
Սյունիք	44
Արագածոտն	39
Տավուշ	37
Վայոց ձոր	17
Անհասցե	50
Ընդամենը	1588

01.01.2011-31.12.2011 ժամանակահատվածում խոցելի խմբերից ստացված բողոքների վիճակագրություն

Խոցելի խմբեր	
Հաշմանդամություն ունեցող անձինք	96
Սոցիալապես անապահով խավեր	35
Փախստականներ	18
Երեխաներ	10
Բռնադատվածներ	4
Սեռական փոքրամասնություններ	1
Ազգային փոքրամասնություններ	1
Ընդամենը	165

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

116 թեժ գիծ

2011թ. նոյեմբերին Մարդու իրավունքների պաշտպանը, համագործակցելով 9 հասարակական կազմակերպությունների հետ, վերաբացեց գրասենյակի արագ արձագանքման *116* անվճար թեժ գծի ծառայությունը[1]: Թեժ գծի ծառայությունը տրամադրում է քաղաքացիներին իրավաբանական խորհրդատվություն, իսկ արագ արձագանքումը իրականացվում է այն բոլոր դեպքերում, երբ անձն անհիմն բերման է ենթարկվել իրավապահ մարմինների կողմից կամ ենթարկվել է բռնության:

2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամսիներին Պաշտպանի թեժ գիծն ընդունել է 778 զանգ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է արագ արձագանքում կամ տրամադրվել իրավաբանական խորհրդատվություն:

Հրապարակային ելույթներ

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների հրապարակայնացման, պաշտպանության մեխանիզմների ներկայացման և հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով 2011թ. Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է ավելի քան 50 հարցազրույցի և հեռուստառադիոհաղորդման, ինչպես նաև 4 մամլո ասուլիս է ունեցել հանրապետության հեղինակավոր լրատվամիջոցների հետ: Պաշտպանի աշխատակազմը հասարակությանը հուզող տարաբնույթ խնդիրներին անդրադարձել է ավելի քան 50 հարցազրույցում: 2011թ. ընթացքում Պաշտպանն իր գործունեության և հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ հանդես է եկել ավելի քան 30 պաշտոնական հայտարարությամբ:

50 օրենսդրական նախագիծ

Պաշտպանի աշխատակազմը ուսումնասիրել է ավելի քան 50 օրենսդրական նախագծեր և դրանց վերաբերյալ ներակայացրել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված բազմաթիվ առաջարկներ, որոնք մեծամասամբ ընդունվել են նախագծերի հեղինակների կողմից:

225 քաղաքացու անհատական ընդունելություն

2011թ. ընթացքում Պաշտպանի կողմից գրասենյակում կատարվել է 115 քաղաքացու անհատական ընդունելություններ, որոնց ընթացքում Պաշտպանը պարզաբանումներ է տվել քաղաքացիներին իրենց հուզող խնդիրների վերաբերյալ և ներկայացրել իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Պաշտպանի և իր աշխատակազմի կողմից 2011թ. նոյեմբերին կատարած 4 մարզային այցելությունների ժամանակ Պաշտպանի աշխատակազմը մարզերում 110 քաղաքացու տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն: Պաշտպանի լիազորությունների շրջանակներում գտնվող բողոքները գրանցվել են ընդհանուր կարգով և հետագայում վարույթ ընդունվել:

5 հետազոտություն

2011թ. ընթացքում Պաշտպանի աշխատակազմը, համագործակցելով ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Ֆրիդրիխ-Էբերտ-հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի հետ, ներկայացրել է 3 արտահերթ հրապարակային զեկույց՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների

[1] 116 անվճար հեռախոսահամարը գործարկվել է “ԱրմենՏել” ՓԲԸ աջակցությամբ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

պաշտպանության, սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման և երկրում մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացման վերաբերյալ: 2011թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ մշակվել է երեխաների իրավունքների պաշտպանության իրավիճակի վերլուծություն:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Ազգային կանխարգելման մեխանիզմ (ԱԿՄ) գործունեության արդյունքում բացահայտված խնդիրները ներկայացվեցին 2011թ. դեկտեմբերին հրապարակված ԱԿՄ տարեկան զեկույցում: Գրասենյակի կողմից իրականացված բոլոր հետազոտությունները հասանելի են աշխատակազմի պաշտոնական կայքէջում:

4 համաժողով

2011թ. մայիսին մեկնարկեց «Մարդու իրավունքներ. Պաշտպանի լսարան» ֆորումների շարքը, որի առաջին՝ «Մամուլի ազատություն» ֆորումը կազմակերպվել էր Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի եւ Եվրոպական միության կողմից: Այն նվիրված էր Մամուլի ազատության միջազգային օրվան: Ֆորումի ընթացքում ներկայացվեց և քննարկվեց Պաշտպանի նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությունում զրպարտության և վիրավորանքի դրույթները: Խոսքի ազատության և անձի արժանապատվության պաշտպանության նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմի՝ Տեղեկատվական վեճերի խորհրդի ստեղծման նախաձեռնությամբ:

Ֆրիդրիխ–Էբերտ-հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Մարդու իրավունքներ. Պաշտպանի լսարան» շարքի երկրորդ՝ «Արդար դատաքննություն» ֆորումի ընթացքում Պաշտպանի կողմից ներկայացվեց արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանն ուղղված՝ Պաշտպանի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հաղորդմամբ հանդես գալու նոր լիազորությունը, ինչպես նաև դատական համակարգում առկա խնդիրները:

«Մարդու իրավունքներ. Պաշտպանի լսարան» շարքի հունիսին տեղի ունեցած երրորդ՝ «Քաղաքացիական հասարակություն» ֆորումի ընթացքում, որը կազմակերպվել էր Եվրոպական միության, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, Մարդու իրավունքների պաշտպանի և ավելի քան 80 ՀԿ-ների միջև համագործակցության հուշագրեր ստորագրվեցին: Միջոցառման նպատակն էր ինֆորմացիայի փոխանակման եւ արդյունավետ համագործակցության հիմքեր ստեղծել նույն ոլորտում աշխատող տարբեր հասարակական կազմակերպությունների եւ Պաշտպանի աշխատակազմի միջև:

Տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն ուղղված միջոցառումները և դրանց արդյունքները ամփոփվեցին Մարդու իրավունքների միջազգային օրը՝ դեկտեմբերի 10-ին Պաշտպանի աշխատակազմի կողմից առաջին անգամ կազմակերպված «Մարդու իրավունքների EXPO 2011»-ի ժամանակ, որին ներկա էին 1000-ից ավելի մասնակից: EXPO 2011-ի տաղավարներում ներկայացվեցին երեխաների, սոցիալապես անապահով

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

անձանց, կանանց, բռնությունների զոհերի, փախստականների, հաշմանդամների, փոքրամասնությունների, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու իրավունքին առնչվող ներկայիս առավել սուր և արդիական խնդիրները: Միջոցառման կազմակերպմանը աջակցել էին շուրջ 80 հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև ՄԱԿ-ը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, Կոնվերս Բանկը, Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազամակերպության հայաստանյան ներկայացուցչությունը, «Բաց հասարակության ինստիտուտ օժանդակության հիմնադրամ» հայաստանյան մասնաճյուղը:

70 հանրային քննարկում

Մարդու իրավունքներին առնչվող խնդիրները քննարկելու և դրանց վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմի կարծիքը ներկայացնելու, ինչպես նաև մարդու իրավունքների գաղափարների՝ հասարակության լայն շերտերում տարածմանը նպաստելու նպատակով 2011թ. Պաշտպանը և իր աշխատակազմը մասնակցել են պետական և հասարակական գործընկեր մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված ավելի քան 70 համաժողովների և քննարկումների՝ երեխաների, կանանց և հասարակության այլ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության և խթանման վերաբերյալ:

Խաղաղ պայմաններում բանակում զոհված ութ զինվորների գործերով Պաշտպանը 2011թ. սեպտեմբերին ՀՀ ԱԺ-ում կազմակերպեց մահացած զինվորների ծնողների հանդիպումը ՀՀ ԱԺ փոխնախագահի և մի շարք պատգամավորների հետ, որից հետո վերջիններիս ներկայացվեցին Պաշտպանի աշխատակազմի և զինվորների ծնողների համատեղ տեղեկանքները՝ յուրաքանչյուր զինվորի գործի քննության ընթացքում տեղ գտած թերացումների ու խախտումների վերաբերյալ:

Միջազգային հանդիպումներ

2011թ. Պաշտպանը և իր աշխատակազմը մասնակցել են մի շարք կոնֆերանսների, վերապատրաստման դասընթացների և այլ միջազգային հանդիպումների, որոնց ընթացքում ձեռք են բերվել համաձայնություններ փորձի փոխանակման և միջազգային իրավապաշտպան կառույցներում Պաշտպանի դերի բարձրացման վերաբերյալ: Մասնավորապես, 2011թ. Պաշտպանը մասնակցել է «Արևելյան գործընկերության երկրների համագործակցություն» խորհրդակցությանը Բրյուսելում, որին հաջորդեցին մի շարք պաշտոնական հանդիպումներ Եվրոպական խորհրդարանի և ԵՄ այլ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ, այդ թվում հանդիպում Եվրոպական խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկի հետ:[1]

Նույն ժամանակահատվածում Պաշտպանը մասնակցել է «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» բելգիական իրավապաշտպան կառույցի կողմից կազմակերպված մամլո ասուլիսին, որտեղ քննարկել է մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, առկա հիմնախնդիրները և լուծման եղանակները:

---

[1] Մասնավորապես, Պաշտպանը հանդիպել է ԵՄ արտաքին գործողությունների ծառայության Մարդու իրավունքների քաղաքականության ուղենիշների ստորաբաժանման ղեկավար Ռինա Կիոնկայի, Եվրոպական խորհրդարանի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի փոխնախագահ Լայմա Անդրիկիենեի հետ, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի անդամ Քրիստիան Վիգենինի հետ:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Բացի այդ, Խոշտանգումների կանխարգելման միության հրավերով Մարդու իրավունքների պաշտպանը 2011թ. նոյեմբերին մասնակցել է Ժնևում «Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն» գլոբալ ֆորումին, որտեղ քննարկվել են խոշտանգումների կանխարգելման խնդիրներով զբաղվող տարբեր կառույցների հետ համագործակցության ձևաչափերը: Ստրասբուրգ կատարած այցի ընթացքում Պաշտպանը հանդիպել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատար Թոմաս Համմարբերգին:

2011թ. փորձի փոխանակման և վերապատրաստման նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպայի խորհրդի, Ազգային փոքրամասնությունների իրավունքների միջազգային խմբի և ՄԱԶԾ-ի հայաստանյան և Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնի, REDRESS-ի և Մարդու իրավունքների և Սահմանադրական եվրոպական կենտրոնի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման և մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված հանդիպումների:

Միջազգային անդրադարձ

2011թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը իրենց հրապարակումներում անդրադարձել են մի շարք հեղինակավոր միջազգային իրավապաշտպան կառույցներ: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմի ներդրումը երկրում խոսքի ազատության խթանման հարցում ընդգծվել է «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» բելգիական կազմակերպության կողմից: «Լրագրողներ առանց սահմանի» ֆրանսիական կազմակերպությունն իր 2011թ. հաշվետվությունում կարևորել է Պաշտպանի նախաձեռնությամբ ստեղծված տեղեկատվական վեճերի խորհրդի նշանակությունը լրագրողական էթիկայի և լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների զարգացման առումով:

2011թ. դեկտեմբերին առաջին անգամ Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցեց ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների երկխոսությանը, որի ընթացքում անդրադարձավ դատական համակարգի գործունեությանը, երկրում խոսքի, խղճի և կրոնի ազատությանը, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը բանակում, ինչպես նաև 2012թ. խորհրդարանական ընտրություններին: Պաշտպանի ներկայացրած դիտարկումները ընդգրկվեցին Եվրոպական խորհրդարանի՝ ԵՄ խորհրդին, ԵՄ հանձնաժողովին և ԵՄ արտաքին գործողությունների ծառայությանն ուղղված ԵՄ Հայաստան ասոցիացման պայմանագրի բանակցությունների վերաբերյալ առաջարկությունների մեջ:

Պաշտպանի գործունեությանը անդրադարձած կազմակերպությունների թվում են Պրահայում լույս տեսնող «Օրեր» ամսագիրը, «Եվրոպական օմբուդսմեն» մոսկովյան ամսագիրը, Լոնդոնում գործող AlertNet մարդասիրական օգնության և տեղեկատվության կենտրոնը, Vestnik Kavkaza մոսկովյան տեղեկատվական կայքը, Global Accessibility News կանադական տեղեկատվական կայքը և այլ կառույցներ:

Համագործակցություն 80 ՀԿ-ների հետ

2011թ. Պաշտպանի աշխատակազմի համար մեծապես կարևորվել է քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ընդլայնմամբ, որն իր սկիզբն առավ 2011թ. հունիսին կայացած «Քաղաքացիական հասարակություն» ֆորումի

ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի և շուրջ 80 ՀԿ-ների միջև համագործակցության հուշագրերի ստորագրումից:

2011թ. ընթացքում Պաշտպանի աշխատակազմի իրավապաշտպանների և մի շարք ՀԿ-ների համագործակցությամբ իրականացվել են շուրջ 20 համատեղ ծրագիր-միջոցառումներ, ինչպիսիք են արագ արձագանքման խմբի գործարկումը, Խոշտանգումների կանխարգելման խորհրդի ստեղծումը, քայլերթը դեպի քաղաքապետարան և քաղաքապետին հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հասարակական տրանսպորտի բացակայության վերաբերյալ նամակ-դիմումի հանձնումը, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հետաքննական նյութերի մրցույթը, երեխաների և երիտասարդ իրավապաշտպանների համար հանդիպում-դասախոսությունների շարքը, ինչպես նաև *օրենսդրական* նախաձեռնությունների և բացերի վերաբերյալ ավելի քան 15 համատեղ հանդիպում-քննարկումները:

2011թ. ընթացքում հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքները ամփոփվեցին և ներկայացվեցին հանրությանը «Մարդու իրավունքների EXPO 2011»-ին:

Միջազգային համագործակցություն

2011թ. Պաշտպանի աշխատակազմի և գործընկեր միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպական միության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Միավորված ազգերի կազմակերպության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Եվրոպայի խորհրդի, Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազամակերպության հայաստանյան ներկայացուցչության, Ֆրիդրիխ-Էբերտ-հիմնադրամի, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության և այլ երկրների օմբուդսմենների հաստատությունների կողմից իրագործվել են մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կարողությունների հզորացմանն ուղղված տասնյակից ավել ծրագրեր:

Մասնավորապես, 2011թ. Եվրոպական միությունը շարունակել է իր հետևողական աջակցությունը Պաշտպանի գրասենյակին, որով, հատկապես, նախնական հաստատվել է Պաշտպանի աշխատակազմի՝ ընտրական գործընթացներում Պաշտպանի դերի բարձրացմանն ուղղված ծրագրային առաջարկը, որը կիրականացվի նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջոցով: Մասնավորապես, 2012թ. ծրագրի ամբողջական հաստատման դեպքում, հանրապետության 6 մարզերում կհիմնվեն Պաշտպանի գրասենյակի ներկայացուցչություններ և կգործարկվի ավելի ընդլայնված և արդյունավետ արագ արձագանքում: ԵԱՀԿ երևանյան գրասենյակը աջակցել է նաև 2011թ. Ազգային կանխարգելման մեխանիզմի մի քանի այցերի իրականացմանը և մեխանիզմի գործունեության վերաբերյալ ամփոփիչ զեկույցի հրատարակմանը:

Եվրոպական միության խորհրդատվական խմբի (ԵՄԽԽ), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազամակերպության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմը նախաձեռնեց մարզային այցելություններ հանրապետության 4 մարզկենտրոն՝ տրամադրելով իրավաբանական խորհրդատվություն տեղի բնակչությանը և հանդիպելով տեղի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: 2011թ.

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա:

Քաունթերփարթ ինթերնեյշնլ կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը աջակցեց ԵՄԽԽ-ի հետ համատեղ նախապես մշակված Պաշտպանի աշխատակազմի ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման գործընթացում:

ԵՄԽԽ-ի հետ համագործակցությամբ պաշտպանի աշխատակազմը 2011թ. իրականացրել է աշխատակազմի կարիքների գնահատում և նախապատրաստել աշխատակազմի վերապատրաստման ծրագիր 2012թ. համար: Խումբն իր ծրագրի շրջանակներում ներկայացրել է առաջարկություններ Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների միջև համագործակցության վերաբերյալ, որը գրասենյակի 2011-2017թթ. ռազմավարական առաջնահերթություններից է:

«Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության աջակցությամբ 2011թ. Պաշտպանի աշխատակազմում բացվեց երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, որը զբաղվում է երեխաների իրավունքների խախտման դեպքերի բացահայտմամբ և քննությամբ, ինչպես նաև տրամադրում հոգեբանի աջակցություն: 2011թ. «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպություն աջակցությամբ ստեղծվեց Պաշտպանի նոր, ինտերակտիվ ու հարուստ տեղեկատվական բազայով վեբկայքը:

«Արևելյան գործընկերության» մասնակից երկրների Օմբուդսմենների համագործակցության ծրագրի շրջանակներում 2011թ. փորձի փոխանակման ծրագիր է իրականացվել Հայաստանի և Լեհաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակների միջև խոշտանգումների կանխարգելման, հանցագործության զոհերի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև խտրականության դրսևորումների բացառմանն ուղղված աշխատանքների ոլորտում:

Մոնիտորինգ 60 հաստատությունում. բռնության 13 բացահայտված դեպք

2011թ. Պաշտպանի աշխատակազմը խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կամ պատժի դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով այցելել է շուրջ 60 փակ և կիսափակ հաստատություն:

Որպես Ազգային կանխարգելման մեխանիզմ (ԱԿՄ)՝ Պաշտպանի աշխատակազմի նորաստեղծ Խոշտանգումների և բռնությունների կանխարգելման բաժինը և 2011թ. Պաշտպանին առընթեր ստեղծված Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհուրդը, քաղաքացիական հասարակության լայն շրջանակների ներգրավվածությամբ, մոնիտորինգ են իրականացրել հանրապետության ավելի քան 60 փակ և կիսափակ հաստատություններում (ՔԿՀ, ոստիկանության բաժիններ, զորամասեր, հոգեբուժարաններ, մանկատներ, հատուկ դպրոցներ, տուն-ինտերնատներ): Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմի քրեադատավարական վարչության կողմից անհատական դիմում-բողոքների հիման վրա իրականացվել են շուրջ 20 այցելություն հանրապետության ՔԿ հիմնարկներ:

ԱԿՄ-ի ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է բռնության և անմարդկային վերաբերմունքի դրսևորումների 13 դեպք, որոնցից 1-ով հարուցվել է քրեական գործ, 4-ով կատարվել են ծառայողական քննություններ, իսկ 8-ով հարցերը քննարկվել են համապատասխան ղեկավարության մոտ: Նշված դեպքերով կատարված ծառայողական քննությունները ձևական բնույթ են կրել: Կիրառվող պատասխանատվության միջոցները՝ հիմնականում նկատողությունները և

դիտողությունները, համարժեք չեն եղել կատարված արարքի վտանգավորության աստիճանին:

Փորձի փոխանակման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով 2011թ. հոկտեմբերի 24-ից 27-ը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Եվրոպայի Խորհրդի «Խոշտանգումների կանխարգելման մեխանիզմների գործուն ցանց. Peer-to-Peer ցանցի գործառույթ» ծրագրի շրջանակներում կազմակերպեց «Ազատազրկման վայրերի կանխարգելիչ այցելությունների կազմակերպում, իրականացում և հաշվետվություն» թեմայով աշխատանքային հանդիպումը, որի նպատակն էր փորձի փոխանակումը ՀՀ Կանխարգելման ազգային մեխանիզմի անդամների և ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի, ԵԽ խոշտանգումների կանխարգելման կոմիտեի և Խոշտանգումների կանխարգելման միության փորձագետների միջև:

ԱԿՄ գործունեության արդյունքները ամփոփվեցին 2011թ. դեկտեմբերին հրապարակված տարեկան զեկույցում:

Տարեկան զեկույցը կազմվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև ոլորտի մասնագետների ու իրավապաշտպանների հետ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա: